ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

## ԲԱԼԼԱԴՆԵՐ

Լենին բեռին

Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին

Լենինն ու Ալին

Կոմունարների պատը Փարիզում

Էլեգիա, գրված Վենետիկում

Պոեմ հերոսական

Իմ ընկեր Լիպոն

Բալլադ գեղջկական

Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և գործադուլի մասին

Բալլադ քսանըվեցի մասին

Խմբապետ Շավարշը

Մեծ առօրյան

Կոմիտասի հիշատակին

Նավզիկե

Անվերնագիր

Պոեմ անվերնագիր

Իմ լերան աղոթքը

Իմ լերան աղոթքը

Լերան աղոթքը

Հերոսի հարսանիքը (Դրամա)

## ԼԵՆԻՆ ՔԵՌԻՆ

I

Հայրը զենքով եկավ գործարանից այդ օրը:
Դեմքը խիստ էր, անգամ մի քիչ մռայլ:
Երբ մոտեցավ, ուզեց գրկի հորը՝
Կամաց մի կողմ հրեց հայրը նրան:

Անխոս, նստեց թեյի: Միտքը դուրսն էր. հեռուն էր:
Աչքը երկա՛ր-երկա՛ր հառել էր մի բանի:
Դեմքին դեռ մնացել էր գործարանի մուրը:
Այդ երեկո խոժոռ էր հայրն Իվանի:

«Գնում ենք, մորն ասաց, մենք լեհերի վրա.
Հանել է լեհերին մեր դեմ Էլի Անտանտը:
Բայց հույս ունենք, կնի՛կ, որ կջարդենք նրանց,
Կշպրտենք — անթիվ տանկերո՛վ էլ գան թե՛ :

Դենիկինն էր երեկ, հետո Կոլչակն էկավ.
Ու լեհերն են հիմի... Ոչի՛նչ, կնի՛կ, —
Կարմիր Բանակը մեր բանվորական
Սովորել է քշել նրանց բնից...»:

Այսպես երկար խոսեց հայրը մինչև գիշեր,
Խոսեց կռվի մասին բուրժույի դե՛մ:
Անցած հազար-հազար դեպքեր հիշեց.
Հիշեց հուլիս ինչ-որ ու հոկտեմբեր:

Եվ նա տեսավ, տեսավ, թե ինչպես հոր
Աչքերը հուր դարձան հետզհետե.
Լուսարձակներ երկու դարձան ոնց որ,
Ոնց որ ռումբեր, որ նա պիտի էգուց նետե:

Ու վառելով այդպես իր բորբոքուն հայացքը՝
Հայրը թռավ հանկարծ, ելավ ոտքի:
Եվ Իվանին թվա՛ց թե
Այրող գնդակ անցավ իր հոր մտքից:

Ոտքի թռավ այդպես ու սրբելով քրտինքը՝
Հայրը ասավ. — «Արդյոք հասկանո՞ւմ ես, կնի՛կ, —
Մեր զորքերին էգուց խոսելու է ի՛նքը.
Ինքը Լենի՛նը մեզ պիտի ճամփա դնի...»:

Հայրը այսպես ասաց ու գնաց քնեց,
Որ առավոտ ծեգին գնա բանին: —

Բայց խոսքերը նրա վերջին էն
Վառվեցին սրտում Իվանի...

II

Հարկ չկա երկար պատմելու
Այդ բանվոր խոխի՝ այդ Իվանի մասին:
Կապույտ աչքեր ուներ, գանգուր գլուխ.
Դե ռուս տղա էր մի՝ ութ տարեկան հազիվ:

Իր բանվոր հոր հետ միասին
Գործարան էր գնում նա երբեմն:
Կամ հավաքած իր քաջ ընկերներին դրսի՝
Նա խաղում էր «Կռիվ բուրժույի դե՛մ»:

Ջիավոր էր լինում միշտ ինքը:
Նստած ձեռնափայտին պապի՝
Քշում էր փայտե ձին, մինչև ջերմին քրտինքը
Ողողելով մարմինը՝ վերջ տար թափին:

Մտածում էր Իվանը. — երբ մեծանա
Պիտի շոֆեր դառնա, կամ օդաչու.
Պիտի մտնի հետո — Կարմիր Բանակ…
— Դեռ սպասի՛ր, բուրժո՛ւյ,
Դեռ կգա՛ Վայնկա-օդաչուն, —
Դեռ մեծանա՛...
Սակայն հայրը էգուց պիտի գնա...
Պիտի ճամփա դնի նրանց — ընկեր Լենինը...
Պիտի խոսքեր ասի նրանց էգուց:
Իսկ ի՞նքը...
Պիտի այսպես տնում էլի նստած մնա՞
Արդեն հասակն առած պատանի է թեկուզ...

Եվ նա գիտե՛ արդեն Լենին քեռուն.
Հրեն նայում է նա այնտեղ պատից՝
Խորամանկ մի ժպիտ աչքերում,
Ահագին մի միտք ճակատին:

Այդ նա՛ է, Լենի՛նը: Այսինքն նա,
Որ ղեկավարն է բանվոր դասի.
Նրա նկա՛րն է միշտ պլակատների վրա,
Միշտ նա՛ է, ամենուր՝ Մարքսի հետ միասին…

Հայրը հաճա՛խ նրան ցույց է տվել երկու
Այդ մեծերի պատկերքը:
Անգամ այնտեղ — նրա այբուբենի գրքում՝
Նրանց նկարը կա:

Սովորել է հորից և գիտե՛ նրանց երգը՝
«-Ե-լի՛ ի՛ ի՛ ր-բո-ղո-քի՛ ի՛ ի՛ ր բան-վո՛ ո՛ ո՛ ր դա-սա-կա՛ ա՛ ա՛ րգ... »:

Պատմել է հայրը նրան,
Որ Լենին քեռին
Խելացի է, մեծ ու քաջ:
Այնքա՛ն, այնքա՛ն, այնքա՛ն,
Որ աշխարքում ուրիշը — այդպիսին չկա:

Պատվիրել է, որ ինքն էլ երբ մեծանա
Երթա նրա — այդ մեծ Լենին-քեռու ճամփով,
Որի վրա թեկուզ հազար փուշ կա ցանած,
Բայց դնում են որով գյուղացի ու բանվոր...

Բա՞ս.
Այսպիսին է Լենին-քեռին:
Եվ վաղը նա ի՛նքը պիտի խոսի:
Պիտի անցնի իր հայրը՝ զենքը ձեռին
Եվ Լենինին լսի...

Այդ հո նման է — զարմանք բանի՞ ...

Եվ որոշում է Իվանը.
Ինչ էլ լինի՝
Վաղն առավոտ կանուխ պիտի փողոց գնա
Եվ տեսնի — ընկեր Լենինին:

III

Արդեն գնացել էր հայրը, երբ արթնացավ:
Շտապ հագավ շորերը և թռավ փողոց:
Վռազ, վռազ, վռազ անցավ իրենց փողոցը
Եվ ընկավ Կարմիր Հրապարակը՝ բանվորներով ողող:

Ծփում էր Կարմիր Հրապարակը,
Ինչպես մարդկային մի անտառ:
Հավաքվել էր կարծես
Աշխարքը բովանդակ:
Ողջը բանվոր մարդիկ,
Հոր պես հագած:
Դրոշակներ անթիվ,
Անթիվ պլակատ:

Հրմշտկելով մարդկանց ու բոթելով՝
Փորձեց առաջ երթալ, հորը կոչել.
Փորձեց ելնել կողքի մի բանվորի վրով՝
Բայց բանվորը — պապի ձեռնափայտը հո չէ՞ ր:

Այդպես սեղմած-մնաց:
Փորձեց էլի:
Պատահեց մի մարդ հայհոյող:
Նորից մնաց՝ հոգին մորմոքով լի:
Բայց ի՞նչ տեսներ — իր այն մի թիզ բոյով…
Հանկարծ մի ծով ամբողջ
Ոնց որ գոռա —
Դղրդաց հրապարակը,
Գոռաց ուռռա:
Հետո լռեց ամբողջը.
Բանվոր մի կին
Իր կողքի ընկերոջը
Շշնջաց՝
«Լենի՛նը…»:
Փսփսաց նա էլ կողքինին:
Ու շրթից շուրթ անցավ՝
«Լենի՛ն, Լենի՛ն...»:

Հասկացավ Իվանը.
— Այնտե՛ղ է նա...
Շփոթված գլխարկը հանեց —
Եվ սեղմեց ատամները՝ բարկությունից դեղնած:
Էլ ճար չկար: Տեսավ՝ տեղ չե՛ն տա իրեն:
Եվ որոշեց՝ անի, ինչ էլ լինի: —
Ոտքը խոթեց հանկարծ գրպանը կողքինի —
Եվ բարձրացավ վրեն...
Թռավ ուսին նստեց
Մի բանվորի.
Բայց բանվորը ներքև շպրտել
Չփորձեց էլ նրան նորից:

Պտույտ եկավ գլուխը, սիրտը ամուր թակեց:
Կարծես աշխարքը ողջ նվիրեցին նրան:
Նայեց... Լենին-քեռին կանգնած էր տախտակե
Ամբիոնի վրա...
Ձեռքը առաջ մեկնած, գլուխը բաց,
Ինչպես տնում կախած այն նկարի խորքից —
Իր հայրիկի ձայնով, մի փոքր բարձր՝
նա պատգամ էր ասում բանվորական զորքին...

Եվ Իվանին հանկարծ այնպես թվաց,
Թե տեսել է ինքը նրան վաղուց.
Որ այդ Լենին-քեռին պիտի սիրեր իրան,
Եթե տեսներ «բուրժույ», «զորք» խաղալիս:
Ու մտածեց՝ էգուց երթա տեսնի նրան,
Ասի՝ ինձ է՛լ ղրկի, գնամ բանակ.

Ասի՝ ուզում եմ ես կարմիր շոֆեր դառնամ —
Լենին-քեռուն բոլոր իր մտքերը բանա...

Այսպես՝ աչքերը չռի Լենին-քեռուն հառած՝
Երազում էր Իվանը:
Հանկարծ լռեց Լենինը:
Ու դղրդաց նորից բանվորական ուռան.
Ձեռքը մեկնեց առաջ — ու բղավեց ինքն էլ:
Զորքը ծփաց հետո ու շարժվեց առաջ:
Ու դրոշի վրա դիմացի նա
Տառ-տառ կարդաց վաղուց իմացած  իր բառը.

«Երրորդ Ինտերնացիոնալ»:

Դրոշակներ նորից: Այդ ինչքա՞ն են...
Եվ կապելով իրար տառերն հազիվ՝
Կարդաց նորից Իվանը՝
«Կորչի՛ բուրժուազիան»:

Երգում էր զորքը
«Ինտերնացիոնալը»:
Ինքն էլ գիտեր երգել: Երգեց: նայեց՝ հեռուն,
Ձինվորների նման, գլուխը բաց՝
Երգում էր երգը նույն — Լենին-քեռին...

Ու խանդոտ մի բոց աչքերին՝
Նայեց նորից Իվանը... Տեսավ՝ հրե՛ն
Հայրը քայլում է՝ մեծ մի հրացան ձեռին —
Ու նայում է, նայում Լենին-քեռուն...

Ուզեց կանչի նրան,
Բայց այդ պահին հանկարծ
Մի ահռելի ուռա
Կրկին զնգաց:
Գոռում էր զորքը ողջ,
Ինչքան որ ձայն ուներ.
Ախ, ունենա՛ր ինքն է՛լ
Մի բարձր ձայն գոնե...

Թնդում էր օդը
Նրանց ձայնից,
Ինչպես որոտը՝
«Լենի՛ն, Լենի՛ն»,
Ու ինքը, Լենիհը, կանգնած այնտեղ...
Նման էր ողջը — երազի...

Եվ որոշեց Իվանը, որ անպայմա՛ն երթա —
Իրա բոլոր մտքերը Լենին-քեռուն ասի...
Երթա ասի, որ ինքը կուզե շոֆեր դառնալ,
Կամ օդաչու կարմիր՝ թռչել անահ...
Այդ հարազատ, այդ մեծ Լենին-քեռու առաջ
Իրա բոլո՛ր, բոլոր գաղտնիքները բանա...

1924

## ԲԱԼԼԱԴ ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ, ՄՈՒԺԻԿԻ ԵՎ ՄԻ ԶՈՒՅԳ ԿՈՇԻԿԻ ՄԱՍԻՆ

I

Կարմիր գծից անդին —
Թշնամիներ անթիվ:
Ու հեռախոսը ֆրոնտից
Հազում է
Շիֆը:

Հեռախոսով հուզումը հոսում է
Կրեմլ:
Կոմուտատոր N
Դեպի կաբինետը Իլյիչի:
Լուրերը թափվում են շտապով,
Հասնում են հենց իրեն,
Ու հոսում են հետո
Տապով
Իր ուղեղի միքից:

Գրասեղանի հանդեպ
Հանգիստ
Նստել է Իլյիչը:
Կարդում է:
Կարգադրում:
Գրում:
Կուտակել է ուղեղը,
Սեղմել է,
Կախել է խոհերի գլխին,
Ինչպես ծանրածանր բռունցք:
Կիտել է հոնքերը ներքև,
Թերթում է, քրքրում, ջոկում:

Պսպղում է ճակատը լույսի դեմ,
Ինչպես ահագին երկրագունդ:

Լարել է ուղեղը Իլյիչը,
Ինչպես պողպատե զսպանակ...

Հարկավոր է կռվել, չզիջել...
Հարկավոր է — Կարմիր Բանակ:
Հարկավոր է ցնցել գյուղացուն
Ու բանվորին կրթել:
Հարկավոր է քանդել հնի բերդը:
Հարկավոր են գրքեր, թերթեր...
Իսկ հետո դպրոցին կգա հերթը:
Հարկավոր է բանվորի տղից
Պրոֆեսորներ ձուլել...
Հարկավոր է, որ ամեն աղախին
Սովորի պետություն դարձնել...

Հարկավոր է...
Ո՞րը թվել:
Հարցեր են՝ անծայր, անթիվ:
Իսկ մինչ այդ՝ հեռախոսը ֆրոնտից
Հազում է —
Շիֆր...

II

Հավաքել է ուղեղը Իլյիչը,
Լափում է լուրերը ու ծամում.
Թռչում է ժամանակը, ինչպես սամում.
Ժամանակը քիչ է:
Բայց ի՞նչ է —
Կողքի սենյակում —
Աղմուկ է.
Խոսում են բարձր.
Քարտուղարը մեկին համոզում է...
Մոտենում է Իլյիչը —
Բացում է դուռը մի քիչ —
Լսում է:

Մուժիկ է:
Ուզում է ինչ-որ բան:
Լսում է դռների միջից...
Ի՞նչ. —
— Անցել է ահագին ճամփա —
Եկել է Իլյիչին...

Լսում է Իլյիչը՝ ուշիմ...

— Էխ-է՜խ, մուժի՜կ:
Մուժիկին հարկավոր է — մի զույգ կոշիկ
Դիմել է մուժիկն ուրիշի —
Ասել են՝ չի՜ք.
Դե նա էլ– եկել է Իլյիչին:

Բարկանում է,
Հուզվում է քարտուղարը.
Համոզում է, որ գնա իր գործին:
Անհողդողդ է մուժիկը,
Ինչպես քարը,
Կարո՞ղ ես խանգարել.
— Հապա փորձի՞ ...

Նայում է Իլյիչը
Արանքից դռան.
Ժպտում են աչքերը մի քիչ ծուռ:
Հրում է դուռը —
Զվարթ
Մոտենում է հանկարծ գյուղացուն:

— Որտեղի՞ց ես:
— Սիբիրից:
— Ե՞րբ:
Հինգ ամիս է՝ եկել եմ մեր գեղից:
Կարմիր արմեյցի է տղես...
Ի՜նքս եմ ղրկել տղիս:
Հող ունե՞ս:
— Իհարկե: Խլեցի՜նք:
Ընչի ես եկել,
Դելեգա՜տ եմ:
Խնդրել եմ գեղական գործիք
Ստացել եմ շատը:
Էլ ի՞նչ ես ուզում:
Ծիծաղում է:
Նայում է Իլյիչին ուշիմ...

— Էխ-է՜խ, մուժի՜կ:
Մուժիկին հարկավոր է — մի զույգ կոշիկ:
Դիմել է մուժիկն ուրիշի —
Ասել են չի՜ք:
Դե նա էլ– եկել է Իլյիչին:

Ծիծաղում է քահ-քահ Իլյիչը:
Խորամանկ խինդ է աչքերում:
Բոթում է մուժիկին,
Հետո —
Վերցնում է մի թուղթ,
Գրում է
«Ում որ հարկն է.
Տալ մուժիկին մի զույգ կոշիկ»:

Էխ-է՛խ, մուժի՛կ...
Վերցնում է մուժիկը գլխարկը,
Հեռանում է՝ հանելով փոշի:

III

Կարմիր գծից անդին —
Թշնամիներ անթիվ:
Ու հեռախոսը ֆրոնտից
Հազում է —
Շիֆր:
Ու նորից նստել է Իլյիչը,
Կարդում է, կարգադրում, գրում:
Թռչում է ժամանակը.
Ժամանակը քիչ է:
Ու սեղմել է նորից մեր Իլյիչը
Իր ուղեղը՝ ծանրածանր բռունցք:
Ու նորից շտապում է ուղեղը.
Լափում է խոհերը հիմա նա —
Եվ ի՞նչը, ի՞նչը կդիմանա
Այդ վիթխարի ուժին...

— էխ-է՛խ: մուժի՛կ...
Քեզ հարկավոր էր — մի զույգ կոշիկ,
Եվ կոշիկի համար
Ընդունեց քեզ Իլյիչը:
— Բայց հասկացա՞ր, մուժի՛կ,
Որ չուներ Իլյիչը ժամանակ,
Որ Իլյիչի համար —
Մեր ժամանակը քի՛չ էր...

1924

**ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ**

I

Աշխարհի կենտրոնը — Մոսկո՛վն է:
Մոսկովը Մեկկայից էլ հի՛ն է:
Մոսկովից մեծ քաղաք — չի՛ք:
Քանի որ Մոսկովի միջին
Ապրում է ինքը — Լենինը:

Տրապիզոնը Մոսկովից հեռո՛ւ է:
Տրապիզոնից Մոսկով —
Չես հասնի ոտքով դու իսկի:
Թե ունես ոսկի՝
Կնստես նախ նավ դու
Ու նավով կերթաս նախ Բաթում.
Հետո գնացք նստած
Կհասնես Թիֆլիս,
Հետո Բաքու,
Ռաստով.
Հետո կերթա՛ս — կերթա՛ս
Ու նոր
Կհասնես Մոսկով:

Ա՛յ, Մոսկովում հենց այդ
Ապրում է արխադաշ Լենինը:
Նա, որ մեծ է, ինչպես ամենամեծ խալիֆ:
Բայց այնպիս՛ի խալիֆ,
Որ հասկանում է միշտ ֆուխարայի հալից:
Այս է պատճառը հենց,
Որ սիրում է նրան տրապիզոնցի
Ալին:

Թիավար է Ալին մի նավակի վրա:
Ստանում է ամիսը —
Երեք ու կես լիրա:
Աշխատում է սակայն առավոտից — գիշեր:
Ու սիրում է նրան
Տերը, ինչպես գրաստ —
Քշել,
Քշել,
Քշել:

Սիրում է Ալին Լենինին:
Նրա մասին նրան
Պատմել է նավաստի մի ռուս:
Ցույց է տվել նրան
Պատկերքը Լենինի.
Ասել է.
« — Լենին — կառոշ:

Ալի՛ն ասել է.
— Չո՞կ,
Ուռուսն ասել է.
— Յա՞.
Լենին վար —
Բուրժույ յո՛կ»:
Բուրժույ — այսինքն զանգին,
Այսինքն էֆենդի, աղա.
Այն, որ նստում են հանգիստ,
Ուտում են ուրիշի քրտինք
Ու սիրում են
Միշտ
Ծովափին
Նստել նարդի խաղալ:

Հասկացել էր Ալին.
«Լենին — բեյուկ խալիֆ»:
«Բեյուկ խալիֆ» սակայն,
Որ հասկանում է միշտ ֆուխարայի հալից:
Ու սիրում էր նրան,
Այդ Լենինին հեռու
Իր չարքաշի սիրով տրապիզոնցի Ալին:

II

Այդ օրը սուգ էր Մոսկովում
Ու սուգը — վա՛ռ էր:
Որբացել էր ասես պրոլետարը:
Ով որ մոտ էր նրան —
Արդեն գիտեր.
— Էլ չկա Կարմիր Ղեկավարը...

Փակել էր աչքերը Ղեկավարը,
Որ կյանքում չբանա էլ բնավ:
Քնել էր Ղեկավարը
Անզարթնելի քնով:

Այդ օրը արդեն Կոմկուսը
Հավաքում էր մկան առ մկան
Իր ուժերը, որ պատնեշ հյուսե
Անողոք կորուստի դիմաց:
Այդ օրը ամեն պրոլետար
Մոսկովում, Բաքվում, Թիֆլիսում
Շինել էր իր կամքը — բետոն
Ու հոգին — չուգուն.
Պողպատել էր իրեն, որ էգուց,

Կորուստի տեղ այդ թանկագին՝
Կուռ՝
Դնե բյուրմկան մի բռունցք
Ոսոխի բկին:

Մորմոքող իր սրտով այդ օրը
Մեր երկրում ամեն պրոլետար
Այնպե՛ս էր զգում, կարծես նո՛ր է,
Կարծես նո՛ր է եկել կռվի օրը
Եվ ինքը գոռ գրոհ պիտի տա.
Ամփոփե պիտի իր ուժերը,
Հավաքե մկանն իր վերջին,
Որ մնա՛ բանվորի դիկտատուրը
Եվ հաղթե —
Առանց Իլյիչի...

III

Ու թռավ ռադիոն այդ օրը,
Ինչպես թուր աշխարհը կիսող՝
Մահառիթ ռադիոն այդ օրը
Մոսկովից հասավ Տրապիզոն:

Այդ օրը այնքա՛ն էր աշխատել,
Որ հալից ընկել էր Ալին:
Մարմինը քրտինք էր պատել,
Բայց պիտի աշխատեր էլի:
Նվում էր ամեն մի մկանը,
Նվալով քաշում էր դեպի տուն.
Բավակա՛ն է, ասում էր, — բավակա՛ն է
Հոգնությունը քո...

Երեկո էր:
Մութ ծովափով
Գնում էր Ալին դեպի տուն:
Ու տեսավ հանկարծ ծովափին
Իր ծանոթ նավաստուն ռուս:
Մոտեցավ,
Որ ասի սալամ,
Սեղմի ձեռքը՝ ծանոթ ինչպես հին,
Ու կամաց փսփսա նրան.
« — Կարաշո՛ Լենին»:

Մոտեցավ:
Տխուր էր նավաստին:
Անծանոթ էր դեմքը: Անօգ:

Ու չասավ մշտական «դրաստի»-ն
Այլ—
Կամաց.
« — Ալի՛, Լենին յո՛կ»:
Էլ ոչինչ:
Հեռացավ:
Ու թվաց թե
Լեռնացած՝ զարկեց մի ալիք:
Հասկացա՛վ խոսքերի մութ իմաստը
Նավաստի Ալին…

IV

Գիշեր է:
Քնել է Տրապիզոնը:
Չի հաչում անգամ մի շուն:
Ոստիկանը միայն, ինչպես շունը՝
Արթուն է.
Հսկում է փողոցում:
Սրթսրթում են սև սոսիները,
Փսփսում են ասես խավարին,
Որ թեկուզ Տրապիզոնը քնել է,
Բայց ահա — արթուն է Ալին:

Գողեգող գնում է Ալին
Պատերի տակով դեպի մութը:
Գողեգող գնում է Ալին —
Դեպի ու՞ր.
Լոկ ինքը գիտե՛:

Մոտենում է ահա կամացուկ
Մի շենքի:
Կորած խավարում՝
Ցուցանակ կա այնտեղ մի ծուռ...
Նկարած է վրան —
Նա գիտե —
Հասարակ —
Մանգաղ ու մուրճ:
Շրջում է այդտեղ գողեգող
Ոստիկանը՝ խեթ ու տռուզ:
Կոչվում է շենքը քաղաքում —
«Կոնսուլատ ռուս»:
Մոտենում է Ալին ինչպես գող:
Անցնում է մոտից ոստիկանը:
Սահում է Ալին կողքով —
Մոտենում է դռանը:

Սեղմում է զանգը:
Զանգից սակայն զիլ,
Խոր լռությա՛ն մեջ
Զարկում է
Մի սիրտ:

Բացվում է դուռը:
Մտնում է ներս:
Լոկ պահապանն է,
Որ արթուն է դեռ:
Նա ճանաչում է
Կարդաշ-Ալուն.
Հաճախ գնացել են մեկտեղ լողալու:

Բայց արդեն գիշեր է.
Ուշ է արդեն.
Ի՞նչ է հարկավոր Ալուն արդյոք: —
— Կոնսո՞ւլ...
— Խա՛ — խա՛...
— Գիշեր է:
Ուշ:
Բայց բախտից Ալու —
Հյուպատոսն հանկարծ ելնում է դուրս,
— «Լենին  յո՞կ» — հարցնում է Ալին:
Լռություն:
Ինչպես մուրճ՝ տաշող:
Եվ– կրծքին խփելով Ալին՝
Մրմնջում է՝
— «Նե՛թ կարաշո»:

Եվ ապա, նայելով գետին,
Մի բանից ասես վախելով՝
Ասում է՝ դառնությամբ լի.
« — Ալի պլոխ: Ալի — աղլիոր»:
Խոնարհում է գլուխը ներքև,
Անխոս վիշտ է հայտնում ու պատիվ —
Եվ—
Հեռանում է՝ քսվելով պատին…

V

Ուրիշ ի՞նչ:
Ոչինչ:
Խնդալու
Կամ լալու կարծեմ պատճառ չի՛ք: -

— Ողջո՛ւյն արխադաշ Ալուն:
— Հաղթանա՛կ գործին Իլյիչի:

1925

## ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Ալեքսանդր Մյասնիկյանի հիշատակին

Այստե՛ղ է Կոմունարների Պատը:
Ցցված է ահա այստեղ նա:
Այս փոքրիկ,
Փորփրած այս ֆասադը:
Այս փլատակը դեղնած:

Մնացորդն է առաջվա պատի:
Մի փոքրիկ կտորը:
Մնացել է այն օրից այդպես,
Որպես եղել է:
Վրան՝
Հատիկ-հատիկ —
Գնդակների տեղերը:

Մեկ էլ,
Հենց այդ հին քարերի վրա,
Վրեժից կիզված իր թակով՝
Փորփրել է դեմքեր
Զարհուրած
Մի քանդակագործ:

Քանդակել է ապա նա մի կին,
Որ մեջքը քարերին հպած,
Անսահման ցասումը դեմքին,
Ստինքները բաց՝
Երկարել է ձեռքերն ահավոր,
Եվ տենդոտ դեմքը թշնամուն՝
Մռնչում է՝
«La Commune est mort — vive la Commune!»
Նա ի՛նքն է:
Ոգին Կոմունի:
Ծառացել է:
Կարո՞ղ է էլ ներել:
Եվ շուրջը,
Տղամարդ ու կին,
Նրա՛նք են. —

— Փարիզի
Կոմունարները:

Բարձրանում է սրտից իմ
Ցասման անսայր ալիք:
Ուզում եմ թվել ես նրանց:
Բայց անթի՛վ են.
Որի՞ն ես թվեմ,
Այդ նրա՛նց է,
Ելնելով Վերսալից՝
Սվիններով հնձել
Գալիֆեն:

Այդ նրանց վրայո՛վ է, որ՝
Պատվանդան շինելով այդ դիերը՝
Բարձրացել է մի օր
Տյերը:

Այստե՛ղ են խմբերով բերել
Ու հպել պատին:
Սուլել են գնդակները —
Դիպել են —
Աչքերին,
Քունքերին,
Ճակատին:
Ծակել են մարմինները,
Մսերից անցել —
Ու փորել են պատը:
Սուլել են անընդհա՛տ, անընդհա՛տ:
Կուտակվել է մինչև
Հենց այս պատի առջև
Դիակների մի պատ:
Բարձրացրել են ձեռքերը վեր,
Ծալել են ձեռքերը կրծքերին:
Սեղմել են մարմինները իրենց
Տեսնո՞ւմ ես՝ այս քարի՛ն:
Զայրույթից պայթող աչքերով
Թքե՛լ են թշնամու երեսին:
Որպես կարմիր դրոշ՝
Բարձրացրել է զավակին մի կին:
Ու ո՛չ սարսափ, ո՛չ ահ:
Որպես սամում —
Ոռնացել են դեմքին թշնամու՝

Vive la  Commune!
. . . . . .
. . . . . .

Հիմա չկան նրանք:
Հիմա չկան:
Բայց տեսնում եմ ես ահա բոցվող,
Հպարտությամբ գոցվող
Աչքերն այն կոմունար աղջկա:
Տեսնում եմ բոցն աչքերի,
Որ վերջին վայրկյանին թռած՝
Մնացե՛լ է ահա
Փորփրած
Այն քարերի վրա:
Ու նայում է:
Ի՛նձ է նայում:
Պատրա՞ստ ես — ասում է:
Հասկանո՞ւմ ես՝ վայրկյանից մահու
Մենք այսպես — ընկած — սպասո՛ւմ ենք:
Սպասում ենք հպած այս պատին,
Ականջներս ձայներով դեռ լեցո՛ւն են:
Մնում ենք, որ գաք, ազատեք,
Որ բերեք — Կարմիր Հատուցումը...
. . . . . .

Փարիզ:

Մշուշ ու ահ:
Ես,
Պոետս,
Լենինյան բայլշևիկս՝
Պատին կռթնած ահա
Լսում եմ նրանց ձայնը,
Շշուկը:

Հասկանո՛ւմ եմ ես ձեզ, ընկերնե՛ր:
Դուք մոտիկ եք ինձ:
Հարազա՛տ եք:
Մեկը թե գար հիմա և ինձ այստեղ տեսներ՝
Դժվա՛ր թե դեմքս նա ձեր դեմքերից զատեր:

Իհարկե, թշնամին թե գար՝
Պիտի կարծեր, թե դեմքս
Ձեր դեմքերի՛ց է
Գնդակո՛վ այս պատին քանդակած:

Ձեր մսի՛ց եմ ես էլ, ընկերնե՛ր,
Իմ մե՛ջ է մարմնացել ձեր աճյունը:

Նայում եմ ես փորած ձեր դեմքերին ահա —
Եվ մեկ-մեկ ճանաչում եմ:

Հարկավոր էր երկա՛ր դեգերել
Եվ հազար ճամփաներ մաշել,
Որ գայի, կանգնեի ձեր դեմ,
Որ հասնեի այստեղ —
Պեր-Լաշեզ:
Բայց չտեսած դեռ ձեզ —
Ես ձեզ գիտեի:
Եղել եք դուք ընկեր
Թե՛ երգիս, թե՛ ինձ:
Կարծես տեսել էի
Ձեզ երազո՛ւմ ես:
Օ, վաղուց զգացե՛լ եմ ես էլ
Ձեր վերջին հուզումը:
Ինչքա՛ն անգամ ես է՛լ,
Ձեր վերջին ջերմը ճակատիս՝
Սարսափած կեցել եմ՝
Հպված մի պատի:
Եվ սվիններ ինչքա՛ն
Ծակել են կուրծքս, երբ —
Մի երջանիկ դիպված
Փրկություն է բերել:
Ինչքա՛ն եմ ազատվել հանկարծ —
Ինձ կորած եմ կարծել երբ ես...
Ուզո՞ւմ եք՝ ձեզ պատմեմ մի արյունոտ արկած՝
Մեր պայքարում փոքրիկ դա մի դեպք է թեպետ: —
. . . . . .
. . . . . .

Մի փոքրիկ քաղաքում էր:
Տասնևութը թվին:
Թշնամին դիմանում էր:
Կռվելով՝ մենք քաղաքը տվինք:
Թշնամին տիրել էր
Քաղաքի դիրքերին:
Մեր բոլոր ընկերները
Ընկան գերի:

Ես և ընկերս՝
Երկու արմեյցի՝
Նետեցինք զենքերս —
Գնացինք:
Բոլոր փողոցները,
Անկյունից անկյուն,

Թշնամին բռնել էր,
Կապել էր փողոցները, որպես հանգույց:

Ես անցա ցանկապատը:
Մտա այգին:
Նկատեց ընկերոջս մի սպիտակ կազակ:
Եվ ահա — մտրակեց իր ձին
Եվ ընկերոջս հասավ:
-Որտեղի՞ց ես, — հարցրեց կազակը:
-Դե էնտեղի՛ց, դիրքի՛ց...
-Բաս ո՞ւր է հրացանդ:
-Նետեցի:
— Կարմիր արմեյցի՞ ես:
-Այո՛:
-Այո՞ ո՞...
Եվ մտրակեց իր ձին
Եվ քշեց՝ նրա վրայով:

Ինձ օգնության կանչեց
Ընկերս ներքևից:
Սուրը քունքին առավ,
Անցավ թևից:
Երկրորդ հարվածն հետո
Գանգը կիսեց:
Ես հեռացա փութով,
Որ չկիսվեմ ես է՛լ:

Այգիների միջով
Ես մտա մի տուն:
Հետո ընկա կրկին
Ծանոթ տեղեր:
Ու քայլեցի մթում, որպես կատու. —
Արյունը հոսում էր քաղաքում, որպես հեղեղ:
Ինձ բռնեցին շուտով:
Խուզարկեցին թեթև:
Բան չգտան վրաս՝ ձեռք չտվին:
Ինչ որ եղավ սակայն — մահից վատ չէ՞ր միթե:
Ինձ քշեցին մի տեղ,
Մի տեղ,
Ուր կարող էր լինել մահը՝ կյանքի դեվիզ:
Մի հարյուր մարդու հետևից,
Ինձ էլ խառնած նրանց՝ դաշտը տարան:
Ճամփին բռնում էին
Սրան-նրան:
Փողոցներում տեսա
Հազար ընկեր:

Ո՛րը քունքից զարկած,
Ո՛րը վզից:
Ողջը ծանոթ մարդիկ,
Ծանոթ դեմքեր:
Հիմա դիակ դարձած՝
Փլատակներ մսի:
Սակայն թողնենք այդ դեռ:
Կայարանի հանդեպ
Կար «Ciy»-ի մի մեծ, հսկայական ռեկլամ:
Ցուցանակի նման ցցված էր նա այնտեղ՝
Զույգ սյուների, կարծես զույգ ոտքերի վրա:
Ա՛յ, «Ciy»-ի հենց այդ ցուցանակից
Կախված էին մերոնք... Հինգ սպիտակ մերկ դի:
Ինչ-որ կանայք, հարբած, շուրջը պարում էին:
Լեզուները հանում ու ծիծաղում լկտի:

Եվ կայարանն հետո...

Այնտեղ, դռան մոտիկ,
Երկու լապտեր կար փոքր, սովորական, գազի:
Չորս ընկերներ այդտեղ մեկտեղ կախված էին՝
Սև լեզուներն հանած ու ոտքերը հողից
Բարձրացրած հազիվ...
Կայարանի մոտից մեզ քշեցին դաշտը:
Երկաթ բահեր տվին:
Եվ փորեցինք ահա մեր ձեռքով մի մեծ
Եղբայրական շիրիմ:

Երկո՛ւ հազար ընկեր մենք դրեցինք այդտեղ,
Լցրինք իրար վրա, որպես ձկներ մգլած:
Որը թե չէր մեռել, կամ վիրավոր էր թե՝
Նրան նետում էին այդպես՝ մի աչքը բաց:

Հասկանո՞ւմ եք արդյոք, ընկերնե՛ր,
Թե ինչ ապրեց հոգիս այդ գիշերին,
Թե հարազա՛տ, մոտի՛կ, եղբայրական ձեռներ,
Ինչքա՛ն, ինչքա՛ն անգամ ինձ դրեցին շիրիմ:

Իսկ առավոտ, երբ ես
Դարձա քաղաք —
Դրված էր մեյդանում
Մի կախաղան:
Շուրջը մարդիկ, կանայք,
Հագած-կապած.
Եկել էին կարծես
Զվարթ կաբակ:

Ու տերտերներ ճերմակ,
Որոնց շրթից
Հոսում էր, որպես թերմացք,
Ինչ-որ մի երգ խրթին:

Եվ բերեցին ահա, շրջապատած,
Մեր զինկոմին՝ տկլոր, որպես մորուք:
Նա քայլում էր հաստատ գլուխը բարձր,
Կարմիր դրոշ ուներ կարծես բռնած
Իր կապույտ, իր լուրթ աչքերում:

Կախաղանի ներքև
Դրված էր մի արկղ:
Սապոնի էր՝ վրան գրած «Բոդլո»:
Նա բարձրացավ վրան՝
Բա՛րձր, բարձր. —
Օ, ինձ այնպես թվաց, թե շուռ կտա հիմա
Երկրագունդը ոտով:

Նա նայեց այդպես իրա շուրջը՝
Հայացքը որպես գերանդի:
Ու գլխատեց կարծես նա հայացքով իր այդ —
Թշնամական վաշտեր ու բանակներ անթիվ:

Ուզեց ինձ էլ հանկարծ
Կարծես հնձի:
Հասկանո՞ւմ եք՝
Նա
Նայում էր —
Ի՛նձ:
Եվ ճանաչե՞ց արդյոք,
Հասկացա՞վ,
Հասկացա՞վ արդյոք, որ հայացքը
Կախաղան էր՝ իմ դեմ ահազարհուր կեցած:
Բայց չտեսա էլ ես:
Էլ չիմացա:
Երբ նայեցի հետո՝ նրա դին
Արդեն կախված էր ցած:
Ընկերնե՛ր,
Ես ո՞նց չխենթացա…
. . . . . .
Այսպե՛ս է ահա, Պեր-Լաշե՛զ:
Ես փրկեցի կաշիս,
Բայց անողո՛ք եղա,
Երբ Կարմիր Բանակը կրկին
Մտավ քաղաք:

Օ, երեք օր չանցած ես ունեի արդեն
Կարմիր ձեռներ...
. . . . . .
Հասկանո՞ւմ եք արդյոք, ընկերնե՛ր,
Հասկանո՞ւմ եք արդյոք հիմա թե —
Ինչքա՛ն ենք ունեցել մենք է՛լ
Պեր-Լաշեզի պատեր:

Այս պատերի ներքո երբ ընկավ
Մեր վերջին ընկերը —
Այն օրից
Մեր կռիվը անվե՛րջ, անընդհա՛տ է:
Պեր-Լաշեզի պատեր ինչքա՛ն ենք մենք փորել…
Բայց ունենք մենք մի պատ, ընկերներ, —
Եվ ուրի՛շ է, ուրի՛շ այդ մի պատը:

Մոսկովում է նա:
Հյուսիսում:

Այստեղից հեռո՛ւ է:
Ձեզ ծանոթ է սակայն նրա ճամփան:
Եվ գիտե պայքարող բանվորը—
Լոնդոնում նա լինի, թե Ռուրում,
Որ կոչվում է նա՝
Կրեմլյան պատ:

Պարկած են այնտեղ ընկերներ,
Որ պիտի պառկեին ձեզ հետ:
Նա մի կարմիր, մի նոր
Պեր-Լաշե՛զ է:
Բայց ուրի՛շ, ուրի՛շ Պեր-Լաշեզ:
Հաղթանակի մի պա՛տ:
Նրանո՛վ ենք փառքի մենք հասել,
Աշխարհը երկուսի կիսել:
Նրանո՛վ ենք այսօր
Հպա՛րտ:

Մե՛նք ենք փորել պատը
հաղթանակից հետո:
Մեր շարքերի համար
Դա հաղթական կամա՛ր է:
Այնտեղի՛ց է անցնում մեր հիմնականը, հո՛ւնը:
Պայքարո՛վ ենք դրել
Ամեն մի քարն այնտեղ.
Հաղթանակո՛վ հիմնել
Մեր Կարմիր Պանթեոնը:

Ձեզ գուցե ցնո՞րք է թվում,
Որ աշխարհում հիմա
Կարմիր Պանթեո՛ն կա:
Եվ պառկած են այնտեղ քով-քովի
Մեր բոլոր ընկերները՝ Մոսկովում
Հոկտեմբերին ընկած:

Պառկած են նրանք, որ ընկան
Առաջին գրոհի՛ն մեր:
Երբ առաջին անգամ
Զնգաց
Հոկտեմբերի հի՛մնը:
Եվ առաջին այդ մեր
Մարտիկներից բացի —
Պառկած են այնտեղ ընկերներ,
Վիթխարի, արի ընկերներ,
Որ պայքարի համար մեր վեհ
Քառուղիներ բացին:

Սակայն բոլո՛ր այդ վեհ շիրիմների կողքին
Կա առաջի՛նը, մե՛ծը:
Այդ բոլորի կողքին — այն մեծագո՛ւյնը կա:
Կանգնած է նա այնտեղ, իբր անհաղթ փառքի
Մի վիթխարի վկա:
Պառկած է այնտեղ — Լենինը...
Մեր կարմիր Ղեկավարը —
Լսո՞ւմ եք...
Այդպիսի ղեկավար — չկա՛,
Ու չի՛ եղել երբեք —
Ո՛չ երեկ,
Ո՛չ առաջ,
Ո՛չ հնո՛ւմը:

Լենինը—
Ուղեղն էր մեր դասի.
Մեր դասի հոգի՛ն էր:
Նրա ամե՛ն մասում
Հոսում էր մեր դասի արյունը:
Նրա մկա՛նն ամեն,
Ամեն բջիջը մի —
Դասակարգի համար եռում էր, պայքարում էր:
Լենինը —
Դե որպես երկրագունդը:
Այսինքն՝ աշխարհը,
Որ հավաքել է կյանքը իր ջղերում:
Լենինը

Հավաքել է իր մեջ —
Հիսո՛ւն հազար սերունդ:
Բանվորական, իհարկե,
Բանվորական սերունդ:

Դասակարգը
Դրել էր նրա մեջ իր ամբողջ մեծությունը:
Նա եռանդ,
Կամք,
Եվ գիտությո՛ւն էր:

Դիսցիպլի՛ն էր Լենինը
Դասակարգի մի նոր,
Որ ձգտումներ անի
Ընդհանուր:
Որ փոխելու է կյանքը
Հանուր:

Հարկավոր էր ամբողջ մի դասի
Ինչքա՜ն քրտինք ու ջանք,
Որ ծնվեր հանճար մի այնպիսի,
Ինչպիսին էր ինքը...
Ինչքա՜ն եռանդ էր պետք —
Արևմուտքից մինչև արևելք
Ու հյուսիսից՝ հարավ:
Այսպես
Ձուլեց նա կամքը մեր
Եվ հաղթություն տարավ:

. . . . . .
. . . . . .
Այստե՛ղ է
Կոմունարների Պատը:
Ցցված է ահա այստեղ նա:
Այս փոքրիկ,
Փորփրած այս ֆասադը,
Այս փլատակը դեղնած:

Մնացո՛ղն է առաջվա պատի:
Մի փոքրիկ կտորը:
Մնացել է այն օրից այդպես՝
Ինչպես եղել է:
Վրան՝
Հատիկ-հատիկ
Գնդակների տեղերը:

Քշեցին հորդու-հորդու
Ու բերեցին այստեղ,
Ի՞նչ.
Թաղեցին ձեզ թե՝
Կարծում են՝ խեղդեցի՞ն ապագան:
Ընկերնե՛ր,
Ընկաք թե որ դուք —
Բայց,
Լսում եք
— Մենք կա՛նք:
Դեռ կգա՛նք:

Լցված է կյանքը հիմա
Մեր արշավի թինդով:
Մեր հոգինդով լեցո՛ւն է:
Շուտո՛վ,
Շուտո՛վ կգանք,
Կբերենք– Կարմիր Հատուցումը:

Վայրկյանը
Լարուն է հիմա, որպես երկունք:
Գալարվում է աշխարհը:
Պիտի ծնի՛:
Դեմառդեմ
Բանակնե՛ր երկու:
Պայքար է գալիքի
Ու համառող հնի:

Հինը
Հևում է ահա ներքևում:
Տագնապից գալարվում է:
Նվում է:
Հավաքում է ուժերը,
Կուտակում.
Խեղդել է կամենում բնում
Լեռնացող ընդհարումը:
Սարսափից դեղնել է
Երեսի կաշին:
Գույնը թափել:
Չռել է աչքերը,
Հառել հյուսիս:
Զառանցում է նոր Ռուր,
Պեր-Լաշեզ:
Դիե՛ր,
Դիե՛ր,
Դիե՛ր.

էշելոններ մսի:
Կարծում է գալիքը՝
Անխուսափելին
Գալու է հյուսիսից:
Իհարկե, այնտե՛ղ է
Գլխավոր մեր բերդը:
Մեր գլխավոր ամրոցը —
Իհարկե, հյուսիսո՛ւմ է:
Կդիմանա՞ր սակայն մինչև օրս մեր բերդը,
Թե չլիներ կյանքում,
Հնդուչինից  Զանգու —
Մեր կենդանի հոսումը:

Թե չլիներ մեր շունչը Փարիզում,
Չլիներ Լոնդոնո՛ւմ կամ:
Երկրագնդի եթե
Յուրաքանչյուր մասում
Չբազմանար, չաճեր
Հոկտեմբերի հունդը:
Յուրաքանչյուր ինչում թե չշաչեր
Մեր պայքարի շռինդը հոնդուն —
Հիմա հո չէր Փարիզը գալարվի ներքևը
Հոգեվարքի տենդում:
Տեսնում եմ՝
Ներքևում ահա,
Փողոցների եռում, շառաչում —
Լսո՞ւմ եք
Բառաչում է սարսափը:
Բանվորական թաղերը խավարում —
Լսում եք —
Աղմկում են,
Խոսում են:
Որպես վրեժ մի ալ —
Հոսում է այնտեղից սարսափը
Դեպի Էտուալ:

Նրա շուրջը,
Վրան
Իջնում է ահա աղջամուղջը.
Թանձրանում է վուալը.
Կորչում է մշուշում շրջագիծը լուսե:
Արդեն Էտուալը
Դողում է, որպես տերև, գալիքների ահից
Լսե՛ք, լսե՛ք, լսե՛ք. —
Այդ թաղերի վրա
Շուտով կելնե արևը, որպես դահիճ...

1925, Բեռլին

## ԷԼԵԳԻԱ, ԳՐՎԱԾ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

I

Տեսի երկիրը ես Իտալիո,
Եվ Վենետիկը, և գոնդոլներ,,.
Այնտեղ շրջում էր պոետը մեր
Երազային իր տարտամ քայլով:
Չշլացած այն փարթամ փայլով,
Գեղեցկությամբ այն հեքիաթային,
Նա օրորում էր երգով մի հին
Իր սիրտը, սիրտը դեռ դայլայլող:
Այնտեղ արևը քնքուշ բույրով
Ցողում էր ծովը այնպե՞ս հեշտին,
Իսկ նա հիվանդ էր հին մի վշտից,
Հին մորմոքից՝ իր սիրտը այրող:
Նա իր սրտով հին, հին քնարով
Եվ մատներով իր՝ արդեն անուժ՝
Դեռ գուրգուրում էր հեռու մի հուշ —
Եվ այնպե՞ս, այնպե՞ս, այնպե՞ս անուշ
Նա փաղաքշում էր հուշը այդ ուշ,
Եվ ի՞նչ էր հուշը, — մշուշ ու մուժ: —

II

Նա երազում էր Արփաչայը
Եվ հին Գյումրին իր հեռավոր —
Եվ այն, ինչ հին էր, հուշ էր, այլ էր —
Նրան թվում էր առավոտ:
Նա ինձ ասում էր, — հեռվում հեռու,
Ուր դա՛շտն է, դա՛շտն է Շիրակի,
Կա հին խրճիթ մի, մի տուն խարխուլ,
Որ ազատվել է կրակից:
Այնտեղ հոսում է մի հաշտ առու
Եվ բարդիները երկնասլաց
Հիմա հիշում են երգը իրա
Եվ գլուխները թափահարում:
Նրանք թափում են թերթերը չոր,
Ծածկում խրճիթը հնամյա այն,
Ինչպես երդերը մահամնա,
Որ հեծկլտում են համր լացով:
Այն իր խրճի՛թն է: — Այնտե՛ղ է նա
Հյուսել երդերն իր ու երազել:

Այնտեղ վարդե՛ր կան, թերթեր
դեղնած,
Այնտեղ երազ կա, ու երգ, ու սեր: —

III

Նա դեգերել էր, եղել էր նա
Շատ ծովերում ու ցամաքներում
Եվ ամենո՛ւր նա, օ ամենո՛ւր
Տեսել էր նույնը: — Քաղաքներում
Գործարաններ էր տեսել նա բյուր,
Ու գործավորներ՝ համր ու հլու,
Ու գործավորներ՝ ինչպես թաբուն:
Եվ ամեհի այդ քաղաքներում,
Օծված ցնորքով ու վաստակով՝
Նա ամբոխներ էր տեսել հլու
Եվ տերեր՝ շռայլ ու հաստափոր:
Կյանքում տեսել էր նա լոկ տերեր
Եվ բազմություններ կամակատար,
Որ ընդունակ են կյանքը կրել,
Ինչպես օրենք մի հավերժական:
Եվ նա ատել էր այդ տերերին,
Բայց ավելի՝ այդ թաբուննե՛րը,
Նրանց, ում կյանքը անիծել է
Եվ դարձրել է ճորտ ու գերի:
Եվ նա ասում էր: — Երկրի վրա
Գազա՛ն է, գա՛յլ է մարդը մարդուն:
Կյանքի օրենքն է հավերժական,
Որ մեկը լաթ է, մեկը՝ արդուկ: —
Եվ նա ասում էր՝ նո՛ւյնն է մարդը
Եվ միշտ էլ նույնը կմնա,
Մինչև ցնդի այս ակնթարթը,
Որ ընթանում է դեպի մահ:
Ամբողջ կյանքում նա ու աշխարհում
Միայն այս բանն էր հասկացել —
Եվ պատրանքին այս, ստին հլու՝
Նա երազել էր ու լացել:

IV

Եվ թափառում էր նա, որբ ու ծեր,
Քաղաքներում այդ բազմաժխոր,
Որ ողողված են երկաթաշեն
Գործարանների թանձր ծխով:
Չտեսնված մի, քանդող խանդով
Շաչում էր շուրջը մի գոռ պայքար.

Ամեն վայրկյանը — մի գործադուլ,
Անդուլ կռիվ մի հերոսական...
Սակայն հոդին իր՝ հավիտյան խուլ
Խոլ պայքարին այդ աշխարհաշեն՝
Քաշվում էր մեջն իր, ինչպես խխունջ
Կամ օրորվում էր, ինչպես տաշեղ:
Ուրի՛շ երազ էր նրան հուզել,
Ուրիշ ցնորք մի, սեր հնագույն —
Եվ հարազատ էր նրա հոգուն
Միայն այդ հինը: — Օ, նա կուզեր
Հեռու տնակն իր վերադառնալ,
Գտնել առվակը կրկին այն հին,
Ուր իր երգերը կարկաչեին
Երազային ու տխրաբարբառ: —
Սակայն մեր կյանքը սավետական
Նրան թվում էր անթով ու սուտ.
Նրա աղմուկը խորթ էր նրան
Եվ անհաղորդ էր նրա լեզուն:
Նրան թվում էր մեր լույսը՝ ցուրտ,
Մեր արեգակը՝ գիշերային,
Մեր քաղաքները՝ ահով լեցուն,
Եվ մեր դաշտերը՝ ամայի. ..
Նրա աչքին մեր Հոկտեմբերը
Ըմբոստ մի բունտ էր անիմաստ,
Որի ձգտումն էր ա՛յն բերելը,
Որ լոկ ցնորք է ու երազ:
Եվ մեր հորձանքը՝ երկրում ելած,
Մեր աշխատանքը դյուցազնական,
Նրան թվում էր սին մի երազ.
Որ ցնդելու՝ է ծանր ու դանդաղ:
Նրան թվում էր մանկան մի խաղ
Մեր ընդվզումը, պայքարը թեժ —
Եվ ուր որ կյանք են կերտում հիմա —
Նա լոկ տեսնում էր մահ ու աղետ:
Եվ ո՛ւժը, ո՛ւժը մեր՝ նոր ծագող,
Մեր հորձանուտը՝ կյանքում հորդած՝
Նրան թվում էր մութ մի հորդա՝
Ու ավերո՛ղ լոկ ու կործանող:
Եվ աշխարհում մեր նահիրական
Մեր մենամարտը ընդդեմ հնի —
Նրան թվում էր անիրական,
Ինչպես տարտամ մի, խառը վայրկյան
Երբ արթնանում ես ծանր քնից:
Եվ նա ասում էր. — Մինչև շիրիմ
Պիտի նույն հուշը նա օրորե,
Եվ չե՞ն գա, չե՞ն գա պայծառ օրեր

Ո՛չ ծեր սրտին իր, ո՛չ աշխարհին:
Անցածը հուշ էր չնաշխարհիկ
Նրա սրտի՛ն ծեր, գալիքը — սուտ,
Եվ օրորուն այս հին երազով՝
Իրեն կարծում էր նոր մի Նազոն,
Որ հայրենի իր երկրից անդին
Շրջում է որբ ու վտարանդի: —

V

Ես լսում էի նրան հանգիստ
Եվ փակում էի աչքերս երբ —
Թվում էր մեկը երգում է երգ,
Որ հին է, հին է, ինչպես զանգի
Տխուր ղողանջը օրերում այն,
Երբ նահիրյան մի եկեղեցի
Շռայլ փռում էր երկրի վրա
Իր «օրհնությունը» և « եղիցին... »:
Բացվում էր դեմս մի մութ կամար,
Ուր արեգակը՝ թելից կախած՝
Լուսավորում էր քաղաքներ մառ
Ու գյուղեր՝ ծխոտ ու խեղդամահ:
Թախիծ էր, թույն էր այն աշխարհում,
Այնտեղ մամուռ էր միայն աճում.
Այնտեղ տերտերն էր ու վաշխառուն
Ու խարազա՛նն էր այնտեղ շաչում:
Եվ հաշտ առուն այն, հեքիաթ-առուն,
Որ երազում էր կարոտով նա —
Այն արոտնե՛րն էր միայն ջրում,
Որոնց տիրում էր մի ռես Հովնան:
Մյուս դաշտերը — չլուտ ու չոր,
Ու դաշտերում այն — գրաստ-ապին,
Հագին նեխած մի, ցեխոտ շապիկ,
Հոգին միշտ համր, հրատոչոր:
Եվ ժամը, ժամը գյուղամիջում՝
Կյանքի վրա այդ նստած թուխսի,
Եվ քահանան ծեր ու ծեր մուխսին,
Եվ աղոթքները Եղսան բաջու:
Իսկ քաղաքնե՞րը... Այստեղ արդեն,
Որպես առանցքը ամբողջ կյանքի —
Բարսեղ աղա մի, կամ մի Արսեն
Կիսաչարչի ու կիսաբանկիր:
Ահա իմ դե՛մն է, դե՛մն է իմ նա.
Տեսնում եմ դեմքը նրա ճարպոտ.
Խոզի մռութ մի, ուռած մի փոր.
Նա ուղարկում է որդուն գիմնազ,

Ունի տներ ու խանութներ մեծ,
Գիտե ուտել կուշտ, չափով խմել,
Սակայն սիրում է անչափ, անչափ
Ծծել քրտինքը բազմաչարչար
Բանակների այն, որ աշխարհում
Միայն հոգնում են ու աշխատում:
Ահա՛ առանցքը: — Շուրջը սակայն.
Ինչպես լուսինը շուրջը հողի —
Դառնում է կյանքը նաիրական
Ու լիանում է նրա շողից...
Հլու ու համր նրա խոսքին
Ու շարժումին մի նրա մատի —
Ջրօրհնեքից, օ, մինչև զատիկ —
Դառնում է շուրջը կյանքը «ազգի»:
Դառնում են շուրջը գրքեր, թերթեր,
Դպրոց, թատրոն ու եկեղեցի,
Տներ, կառքեր բյուր, օթո ու ձի,
Հոգաբարձու ու վարձու տերտեր:
Դառնում են շուրջը վարդապետներ,
Որ ըստ տեղի ու ժամանակի
Թե՛ փաստաբան են, գրող են թե՛,
Թե՛ խմբապետ են, թե՛ խմբագիր:
Նրանք են ուղը, աղը կյանքի,
Նրանք են փայլը աշխարհի այն,
Ուր արևում է վերից մի «հայ»
Կիսաչարչի ու կիսաբանկիր:
Նա վե՛րն է, վե՛րն է, ինչպես արև,
Փառաբանում են նրանք նրան,
Եվ նա թափում է նրանց վրա
Իր բարությունը՝ փայլը հրե:
Եվ նա թվում է նրանց օրենք,
Ինչպես արևը հավերժական,
Որ պարգևում է պայծառ օրեր
Եվ շնորհում է թե՛ լույս, թե՛ կյանք: —
Ահա՛ ցնորքը, բախտը բուրյան,
Որ երազում էր նրա հոգին.
Թեկուզ այս կյանքը մթին էր «քիչ»,
Բայց… «հարազատ էր ու նաիրյան»:
Այս կյանքը փառք էր թվում նրան,
Անհուն դրախտ մի՝ հուշով նախշուն:
Եվ ա՛յս էր, ա՛յս էր, ա՛յս էր, որ նա
Չնաշխարհիկ մի բախտ էր հաշվում…

VI

... Ես պատմում էի նրան, թե մեր
Երկիրը ի՛նչ է հիմա դառնում
Եվ ի՞նչ ուժեր են հիմա հառնում
Իր երազած այն աշխարհի դե՛մ:
Ես պատմում էի այգը մեր մեծ
Եվ առավոտը մեր իրական
Եվ այն, որ սիրտս թինդով երգեց,
Եվ այն, որ նոր է ու պիտի գա:
Ես ասում էի. — երկրում հեռու,
Ուր մեր աշխարհն է սավետական,
Հիմա ելնում է ուրի՛շ մի կյանք
Եվ ա՛յլ պայքար է հիմա եռում:
Որ այն, ինչ մութ էր, հնին անտես,
Որ խորշերում էր, ներսում, միգում —
Հիմա դառել է հրե մի գունդ
Եվ բորբոքում է կյանքը այնտեղ:
Որ ոնց գարնանը հեղեղը գա
Եվ կապանքները ձմռան քանդե —
Այդպես մրրիկը այն հեռակա
Խուլ աշխարհում մեր արձագանքեց:
Ինչպես հանքում հին, երբ վերևի
Շերտերը ծուխ են արդեն դառնում —
Ուրիշ ուժեր են վարից հառնում
Ու բարձրանում են վեր՝ արևին, —
Այդպես մրրիկը այն կարմրակեզ,
Որ Հոկտեմբեր է հիմա կոչվում —
Բերես երկրին մեր նո՛ր մի աճում
Եվ աշխարհնե՛ր նոր հանեց հանդես:
Եվ այդ աշխարհը, ուժը այդ մեր —
Օ, ա՞յլ է, ա՞յլ է, չեղած երբեք.
Որպեսզի գար նա, կյանքում հորդեր
Դեռ հարկավոր էր հինը սրբել:
Այդ ուժը նո՛ր է, ձերին օտար,
Ձերին ներհա՛կ միշտ ու հակադիր,
Ինչպես փայտի՝ դեմ — հալած մետաղ,
Ինչպես ջրի՝ դեմ — հրի հատիկ:
Դա մեր բանակն է, ելած վարի՛ց,
Խուլ խավարի՛ց ձեր աշխարհի այն,
Որ մեր քրտինքը փոխում քարի՝
Եվ մեզ թողնում էր արյուն միայն:
Մեր կյանքը մութ էր ձեր աշխարհում,
Անդուռ նկուղ էր, անանց ձմեռ.
Եկավ պայքարը, ցուրտը ցրեց —
Եվ ձմեռի՛ տեղ — տեսանք գարուն:
Մենք մեր օրերը, այգը դարու
Հոկտեմբերից ենք հիմա հաշվում

Եվ անհաջող մի, հիմար սիրուց
Դեպի լեռները մենք չե՛նք քաշվում:
Եվ սրտերում մեր — տրտունջ չկա.
Մենք հավատում ենք հիմա կյանքին.
Մեզ հմայում են գործ ու պայքար
Եվ հոգնությունը աշխատանքի:
Քո ճանապարհը աշխարհում այն
Դու գնացել ես մեն ու մենակ —
Իսկ մենք անթիվ ենք, անհուն բանակ
Եվ կառուցում ենք հիմա անահ
Մեր նոր աշխարհը՝ պայծառ ու լայն:
Եվ մենք ասում ենք.-Մե՛նք ենք հիմքը
Ամբողջ կյանքի ու մարդկության.
Ամբողջ աշխարհը հայրենիք է
Եվ աշխատանքը ու քրտինքը
Օ, նո՞ր աշխարհ մի պիտի տան —
Նրանց, ում կյանքը անիծել է,
Ով ճորտ է, մերկ է ու անտուն,
Բայց պայքարում են հիմա անդուլ
Եվ աշխատում են ստեղծել
Նոր մարդկություն մի՝ անցավ, անցեց,..
. . . . . .

Մեր երգը — սա՛ է: Եվ մենք հիմա
Խուլ աշխարհում մեր նաիրական
Բերել ենք ուժ նոր, ու թա՛փ, ու կա՛մք,
Որպեսզի կյանքը աշխարհի ա՛յն,
Որ դուք քանդել եք ու կործանել —
Վերաշինենք ու վերածնենք: —
Եվ մենք անթիվ ենք ու անհաշիվ,
Մենք մեր երկրում ենք ու ամենուր —
Եվ անհաջող մի, հիմար սիրու
Դեպի լեռները մենք չենք քաշվի: —
Հիմա ելնում ենք մենք մեր կաշվից,
Հիմա հոգնում ենք, տնքում անքուն,
Որ մեր զնգուն այն, հիմար Զրնգուն
Քիլովատներ ու վոյլտեր հաշվի:
Ուր անապատ էր, դաշտ էր ամա,
Ուր լոկ երաշտ էր ու մահ բոցե —
Մենք ջրանցքներ ենք շինել հիմա
Եվ մեր դաշտերը ոսկեզօծել:
Այնտեղ, ուր հովն էր քո կարկաչում,
Ուր կուզեիր որ Զարոդ ապրի —
Հիմա դրել ենք երկաթ ֆաբրիկ
Եվ մեքենան է այնտեղ շաչում:
Եվ քիլովատը յուրաքանչյուր,

Ամեն մի վոյլտը այնտեղ հաշված —
Օ, ա՛յլ վոյլտեր է կյանքի կանչում
Եվ քիլովատներ հանում աշխարհ:
Օ, դաշտերում այն մեր անջրդի,
Ուր կառքը փառք էր, եթե գնար —
Մեր նոր բանա՛կն է ելնում բանտից,
Այնտեղ զնգում է երբ մեքենան:
Երբ ծխնելույզն է ծխում այնտեղ
Եվ հիդրոշենը փռում կայծեր —
Դա թա՛թն է, թա՛թն է մեր երկաթե
Քանդում աշխարհը հնամյա ձեր...
Այնտեղ մեր շուրջը ծփում է դեռ
Ճղճիմ ճահիճը ձեր ծանրանիստ —
Եվ տարիներ դեռ քանի՞, քանի՛
Պիտի նա թափը մեր կաշկանդե:
Կարծում ես հինը չկա՞ այնտեղ,
Քո երազածը՝ հուշով նախշած: —
Օ, ո՛չ. — կանգնած ենք դեռ դեմառդե՛մ
Երկրում մեր և՛ս — երկու աշխարհ:
Եվ ձե՛րը, ծե՛րը — ճնշող է դեռ:
Քո ներբողածը — դեռ կա՛, դեռ կա՛.
Եվ կլինի՛ նա երկա՛ր, երկա՛ր,
Քանի դեռ հինը մենք չենք քանդել:
Կապրի՛ , կապրի՛ դեռ շունչդ այնտե՛ղ,
Կերգեն երգերը դեռ քո թողած,
Քանի կյանքում մեր կանգուն է դեռ
Ցնորք — բոստանը քո ներբողած:
Եվ դա՛ է, դա՛ է, դա՛ է արդեն,
Քո այդ բոստանն է ու զույգ բարդին
Եվ մեքենա՛ն մեր, որ դեմառդեմ
Հիմա ելել են մենամարտի:
Եվ այս պայքարը համր, լռին,
Այս մենամարտը մեր առօրյա —
Օ, ավելի՛ է տագնապալի,
Քան բարիկադը հոկտեմբերյան...
Օ, ձեր աշխարհը — դեռ կա՛, դեռ կա՛,
Նա դեռ նստած է, հաստանստուկ,
Եվ քո երգերը երեկ երգած
Դեռ շատերի՛ն են այնտեղ ազդում:
Բայց դա աշխարհն է մահապարտված,
Կյանքի մամուռը, տիղմը անհուն,
Որ բոստանի՛ն քո, առվին կառչած՝
Ե՛վ համառում է, և՛ հեռանում:
Եվ խուղերի երբ անդուլ մթում
Վառվում է լամպը էլեկտրական —
Դա մեր պայքա՛րն է ընդդեմ անդուռ

Խուլ աշխարհի ձեր նաիրական:
Եվ մեր քլունգը՝ լեռը քանդող՝
Երբ թունելներ է ձգում երկար —
Դա ո՛չ թե լեռն է քանդում անդուլ,
Այլ ձեր աշխարհը սարսափահար:
Քանդում, քանդում է նա անհանգիստ,
Քարե բերդերը շպրտում դեն
Եվ նո՛ր շերտեր է կանչում կյանքի
Եվ բանակնե՛ր նոր հանում հանդես:
Ելնո՞ւմ, ելնո՞ւմ են նրանք արդեն,
Ստվարանում են օրը օրին.
Ինչպես մետաղը երկրի խորից,
Ինչպես գարնանը հեղեղ հորդե:
— Դա հորձանուտն է բանվորական,
Հորդել — գալիս է ահագնորեն,
Որ ծանրությունը պայքարի այս
Լայն ուսերով իր էգուց կրե:
Գալի՞ս, գալի՞ս են նրանք ահա,
Լցնում երկիրը շառաչով զիլ,
Եվ մեր երգերը է՛լ ավելի
Հնչում են բարձր ու խանդավառ:
Դողում է հողը այդ ընթացքից
Եվ եռանդից այդ, խանդից անծայր,
Եվ մեր գալիքը՝ այնքա՞ն պայծառ
Ահա բացվում է իմ հայացքին…

VII

Այնքան պայծա՞ռ է այդ ապագան...
Տեսնում եմ վա՛ղը, վա՛ղը, շաղոտ
Երկրի վրա մեր սավետական
Ահա բացվում է մի առավոտ:
Ահա գյուղեր ու քաղաքներ նոր՝
Երկաթ ցանցով մի իրար կապված,
Եվ առօրյա՛ն մեր ահա վաղվա՝
Լցված խինդով նոր ու աղմուկով
Ահա շենքեր նոր, զվարթ տներ,
Ուր լո՞ւյս կա, լո՞ւյս կա, լո՞ւյս կա այնքան…
Չկան խուղերը նաիրական,
Ուր լույսը փառք էր, եթե լիներ:
Ու դարեր անթիվ ու տարիներ
Ապրում էր մարդը ինչպես միջատ,
Ու չար աստված մի՝ երկնից իջած՝
Օրհնում էր կյանքը այն մոխիրե...
Ելել է կյանքը, քնից զարթնել,
Դողում է հողը բեղուն բերքից.

Ու շո՞ւրջը, շո՞ւրջը, շո՞ւրջը երկրի —
Աշխարհը լա՞յն է ու անպատնեշ:
Աշխարհը դաշտ է մի համերաշխ,
Երկիրը ո՞նց է, ո՞նց է քրտնել...
Ապրում են շուրջը ժողովուրդներ՝
Եղբայրական ու հավիտյան հա՛շտ:
Եվ մա՛րդը, մա՛րդը ահա վաղվա՝
Հարվածներից հին մեջքը շտկած.
Ահա հայացքը, սիրտը իր պարզ
Եվ աշխարհում — իր քայլքը վստահ...
. . . . . .
Ահա ցնորքը մեր անսահման,
Մեր երազանքը, վարպե՛տ: Սակայն,
Սա երազանք է մի այնպիսի,
Որ չի՛ տրվի մեզ խոսքերով սին,
Որի համար — օ, դարե՞ր, դարե՛ր —
Մենք պայքարել ենք ու պայքարել:
Ու պայքարում ենք: — Իհա՛րկե դու
Մեր երազին այս չե՛ս հավատում:
Դու երազում ես, այստեղ նստած,
Մարմանդ առու մի, մի խուլ բոստան
Եվ հեզ գառնուկ մի, որ բառաչե —
Սակայն այդ երգը — մեր երգը չէ՛ ...

VIII

Եվ լսի՛ր, լսի՛ր, լսի՛ր, վարպե՛տ, —
Իզուր ես հինը դու երազում
Եվ զո՛ւր է, զո՛ւր է սիրտդ հարբել
Անմխիթար այդ, սին երազով:
Իզուր է սիրտը քո գազազում
Երկրի հանդեպ մեր վերածնվող.
Ո չ մեր երկիրն է շվայտ Հռոմ
Եվ ո՛չ էլ ինքդ — նոր մի Նազոն:
Իզուր ստին այդ, մթին գերի
Դու անիծում ես ուժը մեր նոր. —
Դու այդ ուժի՛ց ես փախել ելնող
Եվ ո՛չ թե, ո՛չ թե արքաներից:
Եվ գաս եթե դու երկիրը մեր
Եվ նույնը, նույնը, նույնը մնաս —
Մեր նոր արևը չի գուրգուրե
Քո այդ երգերը մահամնա:
Քեզ կընդունե այն աշխարհը հին,
Որ դեռ ծամում է մամուռ ու ցեց,
Բայց այդ արևը ձմեռային
Դժվա՞ր թե սիրտդ տաքացնե:

Եվ կմնաս դու տխուր ու ծեր,
Այդ նո՛ւյն ձմեռը քո ցուրտ հոգում,-
Եվ հուսահատ ու որբ կլինես
Ինչպես հեռու այս Վենետիկում...

1925 հունվար

Վենետիկ

## ՊՈԵՄ ՀԵՐՈՍԱԿԱՆ

## ՊՐՈԼՈԳ

I

Լեֆյան թմբուկը թողած մի կողմ,
Հատվող տողերը նետելով դեն,
Կրկին խրթին մի խոր դողով
Առնում եմ յամբ ես ու քողաղոտ,
Որ մեր պայքարը քնարերգեմ:
Կռվի շռինդ էր, թինդ էր երեկ,
Երեկ ճակատ էր ու բարիկադ,
Երեկ ճչում էր ամե՛ն մի քար
Ու պայքարում էր ամե՛ն տերև:
Ելել էր կյանքը հունից երեկ
Ու կոտրատում էր խութերն իր հին.
Հատվող տողեր էր երեկ բերել
Պոեմներին իմ ու երգերին...
Երբ սուր սուլում էր կյանքի քամին,
Ճչում էր կյանքը, ինչպես շչակ —
Օ, հարկավոր էր այնպե՛ս ճչալ,
Որ որոտո՛ւմ էլ իմանային:
Այսօր մեր կյանքը հանգիստ է քիչ,
Ռումբի շաչյունը այսօր չկա.
Թեկուզ այսօր էլ դեռ կա Չեկան,
Սակայն գործում է սառն ու հանգիստ:
Թեկուզ մեր կյանքը հորձանք է դեռ,
Թեկուզ պայքարը կրկի՛ն համառ —
Բայց դադարե՞լ են հո հողմահար
Որոտումները թնդանոթի:
Եվ ես առնում եմ քնար եթե,
Փոխում եմ զենքս, — սակայն գիտեմ՝
Թնդանոթները երբ աղմկեն —
Կրկին տողերս կդառնան թեժ...

II

«Երեկ...»:
Բառում այս որքա՛ն փորձանք,
Որքան կրա՛կ կա ու կամք անկոր.
Ես ո՞նց երգեմ այս խաղաղ հանգով
Այն տարիները անվերադարձ...
Ամեն մի ժամը՝ հիմա մի հարց,
Ամեն վայրկյանը՝ զարմանք մի հուր.
Ամեն մի քայլը՝ սխալ դրած՝
Փոխել կարող էր կյանքը՝ մահու:
Խոր վարանքո՛վ մի, անհուն ահով,
Ես մոտենում եմ հիմա մեր այն
Տարիներին թեժ ու հողմահար,
Երբ մութ էր դեմը, անապահով:
Երբ հողմերում խուլ ու մթագին,
Ինչպես գարնանը ելման ջրեր —
Հորդել գալիս էր ուժ մի նորեկ՝
Անկազմակերպ դեռ, անգիտակից...
Երբ խորշերից խոր, կյանքի տակից
Ելնում էր ուժը մեր ապագա.
Հորդում էր կամքը իր ահագին
Մեր հորձանուտը բանվորական:
Երբ մեր երկրում հին, ուր շարունակ
Քեռի Նիկոլն էր նիզակ ճոճել —
Ելնում էր նո՞ր մի, նո՞ր մի բանակ,
Որ Հոկտեմբերն էր կյանքի կոչել...
Օ, երկունքո՛վ խոր, մահվան գնով,
Կոփվում էր կյանքը մեր իրական.
Ցավով ելնում էր արև մի նոր
Երկրի վրա մեր նահիրական...
Գնում էր կյանքը անդարձ հունով,
Քանդում էր հինը, ոնց զառանցանք —
Ու բարձրանում էր էպոս մի նոր
Տարիներից այն՝ դժվար անցած...

III

Հիմա ելնում են ահա իմ դեմ
Այն տարիները, արդեն անցած.
Եվ այն դեմքերը, որ հրեղեն
Տարիներո՛ւմ այն հերոսացան...
Ելնում են դեմս, ժպտում են ինձ,
Կանչում են բա՞րձր, բա՞րձր ձայնով —
Եվ հարազատ է ամեն մի ճիչ
Այնպես հոգուն իմ, սրտին իմ՝ մո՛տ:

Ողջո՞ւյն, ողջո՞ւյն ձեզ, իմ ընկերնե՛ր,
Իմ հերոսնե՛ր նոր՝ ելած երեկ.
Հիմա ձեր կամքն է երկրում ելել,
Ձեր հաղթանա՛կն է ամենուրեք...
Անհուն լույսով մի, մի նո՛ր փայլով
Մեր աչքերի՛ դեմ պայծառացած՝
Ահա գործե՛րը ձեր արյունոտ
Եվ բախումները արճիճափայլ...
Եվ ժողովուրդը իմ նաիրյան
Հրե հողմո՛վ ձեր, հողմո՛վ ձեր տար,
Եվ կռիվները այն անդադար,
Եվ քաղաքները՝ իրար վրա...
Դեռ կյանքը ա՛յլ էր, տագնապը՝ այլ,
Մի ա՛յլ ոգի էր երկրում տիրում,
Բայց աչքերի՛ դեմ ձեր երերուն
Հուրհրատում էր ուրի՛շ մի փայլ:
Երկրում դեռ մուժ էր ու մեգ մռայլ,
Երկրում տիրում էր նաիրյանը...
Բացել էր մահը իր բերանը
Եվ սպասում էր անայլայլ:
Տարիներում այն դեռ ո՞վ գիտեր,
Որ խորշերո՛ւմ խոր, կյանքի տակին
Եռում էր ուժը մեր ահագին,
Մեր հորձանուտը ահագնաթև:
Եվ չտեսա՞վ իմ սիրտը միթե
Մութ հողմերում այն — ո՛ւժը մեր նոր,
Որ վարանքո՛վ մի դեռ նո՞ր, դեռ նո՞ր
Ելնում էր՝ նո՞ր էր, նո՞ր էր հորդել...
Եվ մի՞թե, մի՞թե, մի՞թե չերգե՞ց
Եվ չողջունե՞ց իմ սիրտը խնդուն
Այն առավոտը — այն խոր մթնում,
Խոր խավարո՛ւմ այն — արևն այն կեզ:
Երկրում երբ մա՛հ դեռ ու մուժ կար մի՝
Այն ո՞ւմ հայացքն էր անահասաստ,
Որ մեր գալիքը այնքա՞ն կարմիր
Եվ այնքա՞ն, այնքա՞ն պայծառ տեսավ
Եվ շատերի՛ն դեռ թվում էր երբ,
Թե գերեզմա՛ն է մեր դեմ բացվում —
Իմ աղաղակը, իմ երգը չէ՞ր՝
Հնչեց խանդո՛վ խոր ու խաղացկուն…
Խո՛ր հիացքով մի ու խինդով խոր
Ես ողջունեցի այգը երկրիս
Եվ ավետեցի թինդով երգիս
Երկրիս թռիչքը ու բախտը նոր:
Եվ աղմկում են եթե այսօր,
Ղժժում են շուրջս ձայներ նորեկ —

Ես հարցնում եմ թախիծով խոր. —
Ձեր ձայնը ո՞ւր էր, ո՞ւր էր երեկ...
Ինչքան էլ խորը ես դեգերեմ,
Ինչքան երթին ձեր լինեմ «օտար» —
Գիտեմ՝ երկիրս ինձ փա՛ռք կտա
Եվ սերունդները ինձ կներեն...

1925, Հռոմ

**ԻՄ ԸՆԿԵՐ ԼԻՊՈՆ**

(Բալլադ մանկության, բախտախաղի, պայքարի և հերոսության մասին)

Ընկեր Լիպարիտ Մխչյանի հիշատակին

Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է գինով...
Ես մի ընկեր ունեի՝ Լիպո անունով:

Ինչքան հիշում եմ նրան՝ աչքերիս հանդեպ
Մի նաիրյան տեսարան բացվում է հապճեպ:

Փռվում է դեմս իսկույն մի փողոց խաղաղ,
Ու փողոցի անկյունում — մի վտիտ տղա:

Նիրհում է Կարսը՝ խաղաղ ամառնամուտին...
Ինչքա՞ն վտիտ է տղան այդ ոտաբոբիկ:

Նա նստած է մի քարի — տասնամյա տղան,
Ու նիրհում է առաջին — մի ցածլիկ սեղան:

Կլոր սեղան է ցածլիկ, մեջտեղում — մի չարխ.
Բախտախաղ է մանկական — կոպեկնոց վիճակ:

Տո՛ւր մի կոպեկ ու խփի՛ր, — թե բախտդ բանեց —
Մի տուփ լուցկի, կամ մի տուփ քորոց կհանես:

Կապուտաչյա այդ տղան, ա՜խ, ինչքա՜ն էր չար.
Մեզ հետ կռվում էր հաճախ, ծեծվում չարաչար:

Բախտը ժպտար եթե մեզ ու լուցկի հաներ —
Նա իր չարխը կծռեր ու կռիվ կաներ:

Ուներ բարի նա մի մայր՝ ծեր ու չքավոր.
Միակ նեցուկն էր նա տան բոլորին պահող:

Ինչքան հիշում եմ հիմա մանկությունս ես —
Կապուտաչյա այդ տղան ելնում է իմ դեմ:

Տեսնում եմ միշտ նրան ես իր չարխի առջև...
Հետո օրեր անցան շատ, սլացան հապճեպ:

Ու կորցրի ես նրան: — Աշխարհում այնինչ
Եկան օրեր հուրհուրան, տարիներ անջինջ:

Պատերազմներ եղան մեծ, պայքարներ բազում —
Եվ ամբողջ կյանքը փոխվեց, ինչպես երազում:

Դասակարգեր ընկան հին ու ելան նորեր —
Օրեր վառվառ ու անգին, անմոռա՛ց օրեր…

Մի օր ելանք ու առանք Երևանը մենք —
Հետո դաշնակը շարժեց մառուզեր ու զենք:

Նահանջեցինք քաղաքից մենք լուսաբացին —
Եվ ընկերոջս նորի՛ց ես հանդիպեցի. —

Երկու ամիս էր արդեն ճակատում էինք —
Վերջին օրերը միայն մենք հանդիպեցինք:

Լիպարիտ էր դարձել նա, իմ ընկեր Լիպոն,
Արշավում էր բանակում՝ ռազմի շապիկով:

Նա զինկոմն էր մեր գնդի, մեր գնդի հոգին.
Անճանաչ էր համարյա՝ զորշ շինելն հագին:

Ճանաչեցի սակայն ես: — Մոտեցա նրան,
Ասի՝ հիշո՞ւմ ես, Լիպո՛, Կարսը նահիրյան…

— Հիշո՞ւմ ես չարխը քո էն... — Նա ժպտաց, ու խիստ
Ասաց — Գնում ենք էգուց. Պատրաստվի՛ր, Եղի՛շ:

— Դե, էն չարխը... նա չկա՛... չկա... Հիմա մենք
Ուրի՞շ չարխեր պիտի այս աշխարհում շարժենք:

Բախտախաղ չէ սակայն սա, այլ կռիվ ու կամք.
Լուսաբացին մենք պիտի առաջանանք…

— Դաշնակը խաղ է կարծում, հանաք է անում...
Դե, կխոսենք մի լավ — Երևանում…
. . . . . .

… Լուսաբացին մենք անցանք գրոհի, —
Լուսաբացին խփեցին Լիպոյին...

Լուսաբացին նա ընկավ կռվում,
Երբ հաղթանակն էր վառվում, փռվում:

Ընկավ կռվում
Մեր զինկոմն արի.
Ընկավ Լիպոն
Երևանի
Ճանապարհին...

...Լուսաբացին Երևանը երևաց.
Լուսաբացին մենք մտանք Երևան:

Լուսաբացին մեր բանակը հաղթական
Քաղաք մտավ՝ հետը կարմիր մի դազաղ...

Լուսաբացին ո՛չ մի «ախ» —
Սակայն —

Լուսաբացին դրոշներ հուրհուրան
Իջան ընկեր Լիպարիտի
Վրա...
Խոնարհվեցին դրոշները բանակի —
Ու պառկած էր իմ ընկեր Լիպոն՝
Ռազմի կարմիր իր զգեստներն հագին:
— Փա՞ռք քեզ, փա՞ռք քեզ,
Մեր զինկոմ
Արի. —
Փառք, որ ընկար
Հաղթանակի
Ճանապարհին…
. . . . . .
Հիմա Լիպոն իմ չկա, նա չկա հիմա, —
Ո՞վ չի սակայն երազում այդպիսի մի մահ…

Նա պառկած է
Կոմունարների
Այգում.
- Փա՞ռք քեզ, ընկած
Մեր քաջարի
Զինկո՛մ:

Դու պայքարի
Դրոշ եղար
Վառ մի.
— Թե տեսնեի՞ր ի՞նչ է դարձել

Մեր Բանակը
Կարմի՛ր:

Նա աշխարհում բանակն է, օ, առաջի՛ն:
Եվ ո՛չ մի ուժ չի՛ դիմանա առաջին:

Ննջի՛ր խաղաղ
Կոմունարների
Այգում.
— Փա՞ռք քեզ, ընկած
Մեր քաջարի
Զինկոմ.,,

1926

**ԲԱԼԼԱԴ ԳԵՂՋԿԱԿԱՆ**

(Աղջիկները պարում են ու երգում)

— Սիրո՛ւն աղջիկ, ո՞ւմն ես սիրում աշխարհում
Սավետական էս մեր սիրուն աշխարհում:

Քաղքից էկած էն տղին եմ ես սիրում,
Ճակատը բաց էն տղի՛ն եմ ես սիրում,
Աչքերը շող էն տղին եմ ես սիրում,
Մաշին քշող էն տղին եմ ես սիրում...

-Ընչի՞ համար դու չես սիրում էն տղին,
Բոյը սիրուն, բուսը սիրուն էն տղին,
Հոնքը կիտած, բեղը սրած էն տղին,
Գլխին սև-սև փափախ դրած էն տղին,
Մաուզերը կողքին կախած էն տղին,
Մեր հանդերից հեռու փախած էն տղին...

Ընչի՞ սիրեմ բեղերը ցից էն տղին,
Հո՛ղը դնեմ սև ու անսիրտ էն տղին,
Ձեռքը տռուզ, խելքը տռուզ էն տղին,
Թալան տվող, լիրբ ու հարուստ էն տղին,
Մաուզերին ձեռքը դրած էն տղին,
Ըռանչպարի շիվան ու լաց էն տղին...

-Էն ո՞նց եղավ, որ քեզ սիրեց էն տղեն:
-Շեկ մազերի՛ս աչքը չռեց էն տղեն,
Արնոտ աչքը վրես ածեց էն տղեն,
Մաուզերից կրակ բացեց էն տղեն.
Ալևորիկ մորս ծեծեց էն տղեն,
Ջահել սրտես արուն ծծեց էն տղեն…

-Ե՞րբ պատահեց էդ բոլորը աշխարհում:
-Երբ դեռ սև էր խալխի օրը աշխարհում,
Երբ դաշնակի ձեռն էր տիրում աշխարհում,
Երբ ունևոր-տե՛րն էր տիրում աշխարհում:
Երբ ռանչպարին արև չկա՛ր աշխարհում,
Երբ ռանչպարի օրն էր խավա՛ր աշխարհում ...

— Էն ո՞նց եղավ՝ քշեց հորըդ նա գեղից,
— Եկավ, քշեց քաջ ախպո՛րդ նա գեղից,
Կրակ տվեց, ավար հանեց նա գեղից
Քիչ էր մնում՝ քեզ էլ տաներ նա գեղից...

— Էդ էն կրակ, ցավ տարին էր մեր գեղում,
Երբ սև կրակ ու արին էր մեր գեղում,
Ռանչպարը թվանք առավ մեր գեղում,
Էն սև տղեն մի հավ դառավ մեր գեղում:

Հետո էն սև Սեպուն էկավ մեր գեղում,
Էկավ, փռեց կրակ ու ցավ մեր գեղում,
Ռանչպարին գերի առավ մեր գեղում,
Արունն էլավ — սելավ դառավ մեր գեղում...
-Թվանք առած՝ փախավ հերըս մեր գեղից,
Հետը փախավ քաջ ախպերըս մեր գեղից,
Ինչքան ռանչպար-տղամարդ կար — մեր գեղից
Ելան գացին Ղասախու սար մեր գեղից...

Հետո էկավ, գեղը տիրեց էն տղեն,
Շեկ մազերիս աչքը չռեց էն տղեն,
Արնոտ աչքը վրես ածեց էն տղեն
Մաուզերից կրակ բացեց էն տղեն,
Ալևորիկ մորս ծեծեց էն տղեն,
Ջահել սրտես արուն ծծեց էն տղեն...
— Հետո էկան վառման օրեր, հետո կռվի օրեր էկան,
Գեղից գացած իմ ախպերներ պոպոզավոր, հուրհեր էկան.
Ալևորիկ իմ հե՛րն էկավ...
Իմ բայլշևիկ ախպե՛րն էկավ...

— Էն օրվանից, երբ ախպերս էկավ գեղ,
Երբ բալյշևիկ, ռանչպար հերս էկավ գեղ—
Կարմիր գարուն, կանաչ արև էկավ գեղ,
Բանվոր տղից, քաղքից բարև էկավ գեղ…
Մաշին նստած՝ բանվոր տղեն էկավ գեղ, —
Ոնց որ գարուն մի հրեղեն — էկավ գեղ…

Ընչի համար էլ ես սիրեմ էն տղին
Մազերը սև, աչքերը սև էն տղին,

Հոնքը կիտած, բեղը սրած էն տղին,
Գլխին սև-սև փափախ դրած էն տղին,
Մաուզերը կողքից կախած էն տղին,
Մեր հանդերից հեռու փախած էն տղին...

-Իմ ուզածն է քաղքից էկած էն տղեն,
Աչքերը բաց ու սիրտը բաց էն տղեն,
Գլխին կաշվե գլխարկ դրած էն տղեն,
Ըռնչպարի սրտով սիրած էն տղեն...

-Ես էն տղի տեսքն եմ սիրում աշխարհում,
Մաշին քշող ձեռքն եմ սիրում աշխարհում,
Նրա անուշ երգն եմ սիրում աշխարհում,
Սավետական էս մեր սիրուն աշխարհում...

1928

## ԲԱԼԼԱԴ ԳՆԴԱՊԵՏ ՏՈՄՍՈՆԻ,ԿՈՄԵՐԻՏ ՏՂԻ ԵՎ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու —
Որքա՞ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Ես ունեմ ընկեր մի, ընկեր մի մոտիկ,
Նա մեջքին կապում է մի բարակ գոտի,
Նա գլխին դնում է հասարակ կեպի —
Իսկական մի հերոս է չգրված վեպի,
Հասարակ բանվոր է նա Բալախանում —
Փորում է նա հողը ու նավթ է հանում:

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու, —
Որքա՞ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Այս վտիտ բանվորը, այս վտիտ տղան
Այն տարին եղել է համարյա խոխա:
Այդ այն մութ տարին էր, երբ ծովի բացից
Գրավեց քաղաքը մեր — անգլիացին:
Երբ եկավ, նստեց նա ու հպեց պատին
Մեր ըմբոստ քաղաքն ու պրոլետարիատին:
Տոմսոնի կոշիկն էր քաղաքում տիրում. —
Թշնամին դաժան էր, բարեկամն — հեռու...
Բայց ե՞րբ է բանվորը լռել աշխարհում, —
Նա խուլ պայքարո՛ւմ էր, անդո՛ւլ պայքարում:

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու, —
Որքա՞ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Այդ մութ օրերին էր, երբ մի օր բերին
Լցրեցին բանտերը մեր ընկերներին:
Եվ վաղ առավոտը, հանկարծ, դեմուդեմ —
Մեր վտիտ տղին այս կանչեց Կոմիտեն:
Գաղտնի Կոմիտեն մեր կանչեց ու ասաց.
« — Դու քաջ կոմերիտ ես՝ հասակդ առած,
Քո հայրը բանվոր է, ինքդ պրոլետար.
Տեսնո՞ւմ ես թղթերը. — վերցրո՛ւ ու տա՛ր:
Մերոնք գործադուլ են պատրաստում արդեն.
Այս խոզ գնդապետը ելել է մեր դեմ —
Ուզում է ողջի՛ն նա դարձնի գերի.
Կտանես այս թղթերը նրա զորքերին,
Կմտնես փողոցները խռիվ ու բանուկ —
Իբրև թե աֆիշ ես հանգիստ բաժանում»: —

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու, —
Որքա՞ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Հրճվանքից շողաց մեր քաջ տղի հոգին,
Կարծես թե նա տերը դարձավ քաղաքի.
Աչքերում ցոլաց մի խնդություն անհուն. —
Տեսեք՝ ինչ գործե՞ր են նրան վստահում...
Ճերմակ թերթիկները գրպանը խոթեց. —
Իսկի չվախի՛ թող գաղտնի Կոմիտեն:
Ու վազե՛ց, վազե՛ց նա սրտի դողոցով.
Դիմացից՝ մի վաշտ էր անցնում փողոցով, —
Զսպելով սրտում իր մի կրծող, մութ բան —
Մոտեցավ նրանց նա ու ասաց «Գուդբայ»...
Ասաց, ծիծաղեց նա կամաց, ինքնիրեն —
Ու հանեց թերթիկները, սկսեց ցրել...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու, —
Որքա՞ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Այս ի՞նչ քաջ տղա՛ է, այս ի՞նչ լավ ցրիչ...
Բոլոր զինվորները մեկ-մեկ վերցրին:
Սակայն հայհոյանքը կոկորդում զսպած՝
Մեր տղի գլուխը արնոտեց սպան:
Հարվածից, գլուխը արնոտեց աղի —
Կարմիր կաթիլները թափվեցին հողին...
Բայց երկրորդ հարվածը երբ օդում շողաց —
Արդեն չքացել էր, կորել էր տղան...

Քաղաք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ — Բաքու, —
Որքա՞ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Հնիհև հասավ մեր Կոմիտեն տղան.
Արնոտած երեսը հրճվանքից շողաց.
Կապեցին գլուխը, դրին անկողին.
Ուղարկող ընկերը համբուրեց տղին...
Հետո գործադուլ մեծ եղավ քաղաքում —
Ելան բանվորները — ու հաղթեց Բաքուն:
Ամբողջ պրոլետարը կանգնեց դեմուդեմ —
Խոզուկ Տոմսոնին այն հաղթեց Կոմիտեն...

Հաղթեց գործադուլը ինգլիշ զորքերին —
Բաքվի պրոլետարը չդարձավ գերի.
Սարսեց գնդապետը մեր ուժից անթիվ —
Եվ ելան ընկերները Բայիլի բանտից...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քա՛ղաք իմ — Բաքու, —
Որքա՞ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Կեցցե՛ գործադուլը, կեցցե Կոմիտեն,
Կեցցե՛ և փոքրիկ այն, կոմերիտ տղեն,
Կեցցե՛ մեր պայքարը ու կամքը արի—
Կեցցե՛ն բանվորները համայն աշխարհի...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քա՛ղաք իմ — Բաքու, —
Որքա՞ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

1928

## ԲԱԼԼԱԴ ՔՍԱՆԸՎԵՑԻ ՄԱՍԻՆ

I

Ամեն առավոտ ծեգին,
Երբ քնից զարթնում է Բաքուն,
Երբ, ելած գիշերվա մեգից,
Արթնանում է կյանքը քաղաքում, —
Երբ ձայնով աշխույժ ու հնչուն,
Քաղաքի բոլոր մասերից
Շչակները գործի են կանչում
Պրոլետարներին, —
Քաղաքի ծայրերից բոլոր
Զգվելով երբ շարան-շարան
Բանվորները հոծ խմբերով
Շտապում են դեպ գործարան, —
Ամեն առավոտ ծեգին,
Այդ ժամին գորշ, մխերանգ —
Զուլվելով երթին ամենքի —
Քաղաքից անցնում են և նրանք:

II

Քսանըվեց հոգի են նրանք —
Եվ խոհուն, մտազբաղ են բոլորը: —
Առջևից գնում է նա —
Երկաթյա Կարմիր Կոմանդորը:
Քայլերով հաստատ, համաչափ.
Հետևում են նրան ընկերները,
Ընթանում են քայլերով շտապ,
Շտապում են դեպի վիշկաները:
Աննկատ, ձուլված ամենքին,
Քայլում են նրանք դեպի ծովը.
Ողջունում են ջրերը դեմից,
Համբուրում է հովը:
Համբուրում է դեմքերը քամին,
Շշնջում է խոսքեր հյուսիսի.
Երկաթյա շքախումբ է դա մի —
Գնում է զորահանդեսի: —

III

Քայլերով հաստատ, համաչափ
Ընթանում են նրանք խմբովին,
Անցնում են բուլվարի միջով,
Մոտենում են ծովին:
Խփում է ծովը ափերին,
Երկինքը գորշ է, կապար,
Ճոճվում են նավերը սևերիզ՝
Շղթայով ափին կապած:
Իսկ հեռուն — ուրի՞շ նավեր,
Կողերով ծանր նստած՝
Սահելով գնում են վեր —
Դեպի Պարսկաստան...
Գնում են դեպի Էնզելի,
Գնում են դեպի Իրան:
Տանում են երկրից Լենինի
Մի հեղուկ ալ-հուրհուրան:
Նայում են նրանք նավերին
Եվ իրենց շրթերով անբառ,
Անսահման խինդը դեմքերին՝
Շշնջում են. — Բարի՞ ճամփա...

IV

Տեսնում են ապա հեռևում
Եվ ուրիշ նավեր նրանք.
Մշուշում նրանց երևում,

Արևում են ափեր հուրհուրան:
Տեսնում են նավեր ծանրակող,
Որ ջրերը խորունկ արխած՝
Գնում են դեպի Կրասնովոդսկ,
Գնում են դեպի Հաշտարխան...
Նայում են կարոտով անդուլ
Այդ հեռու ափերին նրանք.
Մի երգ է այնտեղից թնդում,
Խնդալով ողջունում նրանց:
Դաշտերում անբեր ու ամա
Տեսնում են հազա՞ր նվաճում
Երկաթե անտառի նման
Սերունդնե՛ր են ելնում ու աճում:
Հասնում են նրանց ականջին
Վիթխարի մուրճերի ձայներ.
Շչակնե՛ր են թնդալով կանչում.
Աշխատանքն է հնչում այնտեղ:
Լսում են նրանք այնտեղից
Բյուրավոր ոտքերի դոփյուն.
Քրտի՞նք է բարձրանում հանդերից,
Մի կուրծք է անդուլ տրոփում:
Նայում են հրճվանքով անհուն —
Ու խնդուն եռանդով ջամբած՝
Կոմանդորը ձեռքով է անում —
Ու թեքում են նրանք ճամփան...

V

Ու, կրկին հեռուն նայելով,
Քայլերով հաստատ, համաչափ,
Անցնում են նրանք Բայիլով,
Մտնում են քաղաքը նվաճած...
Տարինե՞ր են անցել կորովի,
Սուրացել, գնացել անդարձ —
Ու ելել է նահանջող ծովից
Մի ամբողջ նո՞ր նավթանտառ:
Ուր ծովն էր առաջ շառաչում
Եփվելով զուր եռանդից —
Վիշկանե՞ր են հիմա աճում,
Վիշկաներ անծայր, անթիվ:
Թնդում է երկիրը նվաճած,
Շնչում է եռանդ ու կրակ,
Անցնում են քայլերով համաչափ,
Երկաթե քայլերով նրանք:
Դեմքերով՝ վառված արևից,
Մազութով, մրով ծեփած

Վիշկաները կեցած բարևի
Ասում են. — Բարև՞, Ստեփա՛ն...
Աշխատում են, եռում են բոլորը.
Մրոտած դեմքեր ու ձեռներ: —
Հիացած՝ Կարմիր Կոմանդորը
Շշնջում է, — Բարև՛, ընկերնե՛ր: —
Ու մտնում են նրանք վիշկաները,
Երկաթե քայլերով շրջում.—
Դառնում են փոկերն, անիվները,
Եռանդի ձայնով շշնջում:
Շշնջում է Կարմիր Կոմանդորը
Փոկերի աղմուկի միջից —
Եվ լսում են, լսում են բոլորը
Նրա ձայնը ջինջ ու վճիտ:

VI

Եվ ասում է նա — Կոմանդորը. —
«Տոկացե՛ք, ընկերնե՛ր անգին.
Ձեր ամեն մի փորած նավթահորը
Մի քա՛յլ է ցանկալի կյանքին:
Բացվել է հորիզոնը լուսե,
Պայքարով ակոսել մի կյանք.
Ձեզ համա՛ր գիշերով մի սև
Ավազե դաշտերում մենք ընկանք:
Քսանըվեց էինք մենք, քսանըվեց,
Բայց անթի՛վ, անթի՛վ է մեր անունը.
Ոչ գնդակը մեզ սպանեց
Եվ ո՛չ էլ կսպանե հոգնությունը:
Քանի կաք, ընկերնե՛ր, քանի կաք,
Քանի կա աշխատանքը անդուլ —
Մեր երթին — վախճան չկա,
Մեր պայծառ գործին — պարտություն:
Տոկացե՛ք, ընկերնե՛ր, մենք ձեզ հե՛տ ենք
Տոկացե՛ք, ընկերնե՛ր անգին,
Որ անցնենք այս նեղ արահետը
Եվ հասնենք ցանկալի կյանքին...»:

VII

Շշնջում է Կարմիր Կոմանդորը
Փոկերի աղմուկի միջից —
Եվ լսում են, լսում են բոլորը
Նրա ձայնը ջինջ ու վճիտ:
Ու անտես ամենքին, ինչպես ռիթմը,
Այնտեղից ելնում են նրանք,

Թողնելով սրտերում հուր շռինդ մի,
Վառելով անմար մի եռանդ:
Ու կրկին, հրճվանքով անհուն,
Գլուխը բարձր ու ուղիղ՝
Կոմանդորը ձեռքով է անում
Եվ փոխում են նրանք ուղին:
Հոնդում է դեմից քամին,
Բայց անշեղ քայլերով նրանք
Անցնում են Բալախանի,
Մտնում են գործարան ու հանք:
Շրջում են այդպես ամենուր,
Մտնում են գործարան, զավոդ,
Դեմքերին իջնում է մուր,
Շորերին նստում է նավթի հոտ:
Եվ մինչև բարձրանում է օրը,
Դառնում է թնդացող ցերեկ —
Շրջում է Կարմիր Կոմանդորը,
Լինում է ամենուրեք:
Զուլվելով դարձող փոկերին,
Աղմըկող ռիթմերի միջից
Խոսում է ընկերներին
Իր ձայնով հաստատ ու վճիտ:
Ու, ռիթմի նման անտես.
Զուլվելով սրտերին նրանց —
Շշնջում է, շնչում է անվերջ,
Անդադար ավյուն ու եռանդ:

VIII

Եվ ապա, երբ դառնում է օրը
Շառաչուն, թնդացող ցերեկ —
Իրարից բաժանվում են բոլորը,
Ցրվում են ամենուրեք:
Մտազբաղ, գլուխը թեքած,
Քայլերի համաչափ զարկով —
Ստեփանը դնում է Ցեկա,
Զափարիձեն — դեպի Սովնարկոմ:
Գնում են և մյուս ընկերները,
Ամենքին անտես քայլերով
Անցնում են բոլոր փողոցները,
Մտնում են հիմնարկները բոլոր:
Սրտերում անբոց մի կրակ,
Պայքարում կոփված խոսքերով
Ամենուր շնչում են նրանք
Անդադար եռանդ ու կորով:
Աշխատանքը անտակ է, մեծ է,

Թշնամին անտես ու դժնի —
Եվ շրջում են այդպես Քսանըվեցը.
Մինչև իրիկունը իջնի:
Շրջում են անվերջ, շշնջում են,
Առօրյա աշխատանքը հսկում,
Մինչև իրիկունը իջնում է
Ու վառում կրակներ ոսկուն:
Եվ իջնում է երբ իրիկունը,
Որ հոգնած սրտերին նստի —
Քսանըվեցը անխոս հեռանում են,
Գնում են հանգստի:

IX

Եվ ամեն առավոտ, երբ օրը
Բարձրանում է՝ հոգսը թևին —
Շրջում է Կարմիր Կոմանդորը
Քսանհինգ ընկերներ ետևից:
Շրջում են բոլոր վիշկաները,
Մտնում են գործարան ու հանք —
Քսանըվեց կարմիր ընկերնե՛ր են,
Քսանըվեց մարտիկներ նրանք:
Զուլվելով դարձող փոկերին,
Աղմըկող ռիթմերի միջից
Խոսում են ընկերներին
Ձայներով հաստատ ու վճիտ:
Ասում են նրանք. — Տոկացե՛ք,
Տոկացե՛ք, ընկերնե՛ր անգին,
Վառվել է հորիզոնը լուսե,
Առավոտը ցանկալի կյանքի:
Քանի կաք, ընկերնե՛ր, քանի կաք,
Քանի կա աշխատանքը անդուլ —
Մեր երթին — վախճան չկա,
Մեր պայծառ գործին — պարտություն…

1928

## ԽՄԲԱՊԵՏ ՇԱՎԱՐՇԸ

I

Փողոցում լռություն էր ու թանձր խավար,
Առավոտը մոտ էր, բայց դեռ չէր բացվում —
Իսկ հյուրանոցում խմբապետ Շավարշը
Խմում էր, խմում էր ու մուժով լցվում:
Խմբապետ Շավարշը: — Մի հաղթ տղամարդ:
Երեսին՝ վերից վար՝ դաշույնի հարված.

Այդ հարվածն համարում էր իր դեմքի զարդը՝
Մանավանդ, երբ դժգոհ էր ու մի քիչ հարբած:
Այդ հարվածն — ու բեղերը: — Դեղին ոլորած,
Երկու խուրձ հրեղեն, երկու առու,
Որ, ծանր, իջնելով կզակի վրա —
Նրան տալիս էին «քաջի» համարում:
Եվ մռայլ աչքերը՝ բիբերում արյուն,
Եվ խիտ հոնքերի գերանդին...
Նա իրեն համարում էր — անհաղթ արու,
Որպես հրաշք՝ ելած հայ ցեղի արգանդից:
Շավարշը խմում էր: — Լուռ, մռայլ բազմած,
Սեղանի գլուխը, որպես ամպ՝ ծանր.
Եվ ամեն մի բաժակը քամած
Նրան դարձնում էր ավելի համր:
Մենակ չէր Շավարշը: — Նրա հետ նստած
Նրա քաջ խոխեքը, իր խմբի տղերքը՝
Իրենց խմբապետի հռչակին վստահ՝
Անվերջ խմում էին — ու հոսում էր երգը:
Իգդիրցի Եգորը, Ղարսեցի Հարոն,
Մշեցի Թաթիկը ու Սաքոն Ղաչաղ,
Որոնցից վախենում էր անգամ ինքը — Դրոն,
Որ իրենց կանչել էր առավոտը վաղ:
Նա նրանց կանչել էր առավոտ վեցին,
Շավարշին կարգադրել էր, որ բերի իր խումբը.
Գիտեին, որ ուզում է ուղարկի գործի, —
Եվ ահա Շավարշը մինչև այդ — խմում էր:
Շավարշը մռայլ էր: Մի մթին կասկած
Օձի պես կրծում էր նրա սիրտը.
Սեղանի գլուխը մութ, մռայլ բազմած՝
Անդադար խմում էր ու հայացքը — բիրտ էր:
Կանչել է Դրոն առավոտ վեցին, —
Մտածում էր Շավարշը, — բայց ինչո՞ւ է կանչել
Ասաց՝ ղրկելու է կարևոր գործի —
Եվ թողեց, որ կասկածը մինչև լույս տանջե
Եվ ուտի իր սիրտը: — Ինչո՞ւ չասաց,
Թե այդ ի՞նչ գործի է ուղարկում նա.
Ուղեղում վխտում էր կասկած հազար.
Մտածում էր՝ գնա՞, թե չգնա:
Ո՞վ գիտե Դրոյին: Այո: Ո՞վ գիտե:
Կարող է սարքել հազար դավ: Դրոն:
Դժվար է կռվել հետը:
Չուզեց խաթրով անի — կանի զոռով:
Կհանի իր վրեժը: — Երեկ չէ՞ր միթե,
Որ Շավարշն սպառնաց շտաբը քանդել:
Ինչո՞ւ: — Որովհետև
Ռուսահայ սպաներն են իշխում այնտեղ:

Ռսացած սպաները: —
Օսլայած տղերք,
Ձեռքերին՝  ձեռնոցներ, դեմքերին՝ պուդրա՛:
Ո՛չ զենք են տեսել, ո՛չ կռիվ: — Մերկ
Աղջիկներ են միայն տեսել դրանք..
Եվ դրանք ահա, այդ լակոտները,
Որոնց ինքը կարող է տանել բաղանիք —
Ուզում են, որ խմբապետները
Իրենց ձեռքին դառնան կույր խաղալիք:
Ուզում են տիրանան երկրին, բանակին,
Հաստատեն ռսացած մի իշխանություն.
Բայց ո՞նց նա կռանա դրանց տակին.
Կնի՞կ է ինքը, թե կատո՞ւ...
Իսկ Դրոն, իգդիրցի այդ խմբապետը,
Որ եղել է հերոս, անվախ տեռորիստ
Դրոն — նրանց հետ է
Եվ ուզում է դառնա մինիստր:
Ռազմական մինիստր: — Լա՛վ Լա՛վ:
Հետո՞: Ի՞նչ պիտի անի հետո նա:
Դե, որ մինիստր դառավ —
Կարող է բոլորին տա գետնովը:
Կարող է հավաքի իգդիրցիներին,
Բռնոտի բոլորին, զինաթափի,
Սպանի, ջանդակները շներին քցի,
Որ ծաղկի իր շտաբը...
Խռնվեցին մտքերը Շավարշի գլխում.
Գլուխը ծանրացավ, լցրեց ու խմեց:
Սրտում մռմռացող կասկածը խուլ
Դառնում էր հետզհետե մեծ:
Դե, Դրոն — թագավոր է: — Դեռ երեկ էր
Սպանեց իր տղերքից երկուսին,
Որովհետև այդ տղերքը
Հարբած՝ թքել էին մեկի երեսին:
Կառքից իջեցրել էին ու դեմքին թքել.
Հետո դուրս էր եկել, որ մինիստր է...
Դե, տղերքը — հարբած են եղել.
Հարբածին — էլ ի՞նչ մինիստր:
Թքել էին դեմքին ու նստել նրա կառքը,
Մինիստրի կառքը, — վա՛յ, հարամզադե՛ք..
Բայց հո չկործանվե՛ց աշխարքը.
Մինիստրը աշխա՞րք էր ազատել...
Իհարկե, սխալ էր: Իհարկե, Դրոն
Վարվել էր անվայել, վարվել էր տմարդի.
Խաբելով կանչել էր նրանց միլիցիատուն —
Այդպես չի վարվի տղամարդը:
Խաբելով կանչել էր, թե կների.

Տղերքն էլ եկել էին, — և ահա միամիտ
Նրանց հանել էին կամերից
Ու կռնակից խփել... Միայն մի
Ինչ-որ հարբած մարդու ներկայությամբ...
Սուս ու փուս: Գաղտագողի: Անձեն:
Ո՞վ գիտե Դրոյին... Ինչքա՜ն է նա
Այդպես գաղտագողի հնձել...
Մեկը — Թևիկն էր, Եգորի եղբայրը.
Եգորը Դրոյին կների՞: — Ոչ: —
Ահա նստել իր մոտ — խմում է անդադար
Ու հարբած՝ համբուրում է ընկերոջը
Ղարսեցի Հարոյին: — Լա՛վ: Լա՛վ:
Եգորը իր մարդն է այսուհետև:
Եղբոր պես լինելու է մոտիկ, հալալ.
Նույնիսկ կռվեն եթե:
Ա՛յ քեզ մինիստր... Ա՛յ քեզ Դրո:
Ա՛յ քեզ խմբապետ քաջ...
Ձեռքը խփեց սեղանին Շավարշը —
Հողը դողաց:
Խփեց ու խմեց: Նորից խմեց: Մռայլ:
Ու ոչ մի բառ չասաց: Գլուխը
Ծանր՝ դրեց կրկին իր բռունցքի վրա.
Այդպես անշարժ — մնաց: Իսկ շուրջը աղմուկ էր:
Երգում էր Ղաչաղը: — Բայաթի՞ էր, թե ե՞րգ:
Թուրքերեն, որ լսել էր Շավարշը. — ե՞րբ:
Գլխում ծանրացել էր մի թանձր մեգ.
Սրտում խլրտում էր կասկածը դեռ:
Ուզում էր բարձրանա, թքի հացին,
Իրենց կերած հացին, շուռ տա սեղանը: —
Արդեն մոտենում էր լուսաբացը.
Իսկ նա դեռ տատանվում էր. չգիտեր,
Թե կատարի՞ արդյոք Դրոյի հրամանը:
Ուզում էր տասնոցը հանի, կրակի,
Բայց իրեն զսպում էր. մտածում էր:
Վերջապես տղամարդի վարտիք է հագին,
Երակներում — արյուն է, և ոչ թե — մածուն է:
Դե, Դրոն թագավոր է: — Ու թո՛ղ լինի:
Բայց հո չի՞ կարող այդ մարդը
Ինչ ուզենա — անի. —
Բա իրա՞ — Շավարշի՞ — աշիրա՞թը:
Իր հետ է աշիրաթը: — Շավարշը հիշեց.
Ուղեղում բացվեց լայնանիստ —
Ալագյազը... դուման... անաստղ գիշեր...
Շների ոռնոց անհանգիստ...
Անցնում են գյուղերից: Առջևից — տավարը՝
Հայկական, թուրքական գյուղերից քշած:

Գյուղերում — ընկել է հավարը.
Լաչա՞կ էր էդ գյուղերի գլխին քաշած...
Ճռճռում են սայլերը, ձիերը դոփում:
Սայլերին — երեխեք, կնանիք. բեռ...
Դումանը շոյող է, ինչպես զեփյուռ,
Ձիերի դոփյունը, ինչպես երգ...
Առջևից — տավարը, հետևից — աշիրաթը՝
Շավարշի աշիրաթը. — խնուսցիներ,
Որոնց տեղահան էր արել —
Պատերազմի թաթը —
Ու աշխարհում ցրել:
Շատերը՝ կորցրած տուն, տեղ,
Ընտանիք, երեխեք, հայր, մայր, —
Այժմ պատրաստ էին ամեն ինչ քանդել
Մի լավ ձիու, կամ մի բեռ ալյուրի համար:
Ով էլ հանդիպեր, ումն էլ լիներ.
Ռսի, թուրքի, հայի — միևնույն չէ՞:
Միայն թե քաղցից չոռնար կինը —
Միայն թե երեխեն շունչը չփչեր:
Խնուսից — Ալաշկերտ: Հետո Ղարս:
Ցուրտ, մերկ, սով, տիֆ:
Ինչքա՜ն, ինչքա՜ն մեռան,
Քաղցից, կամ ետ չեկան ֆրոնտից:
Ամբողջ ճանապարհը — դիակներ, մահ:
Ով որ մնաց՝ մնաց: Հասան վերջապես
Այն ռսի երկիրը, որի համար
Այնքան արյուն էին իրենք թափել...
Հասան: Թափվեցին կիսամերկ: Եվ ի՞նչ.
Մնացին երկնքի տակ բաց,
Ցուրտը հետևից, քաղցն առջևից —
Ոչ օգնություն, ոչ բան:
«Ռուսահայ եղբայրնե՜ր»... հա՜ — հա՜...
Ընդունեցին — թուրքից էլ վատ, այո՛.
«Ռուսահայ եղբայրնե՛ր»... «Հայրենի՜ք». «Հայ»
Կուշտ. ականջները դինջ. ապահով:
Բայց ինչո՞ւ ընդունեցին այդքան վա՛տ, վա՛տ,
Օտարի, թշնամու, գրողի պես.
Դե, հայեր են լիրբ, մուխաննաթ, —
Մտածում էր Շավարշը — հայեր են գեշ,
Այլասերված հայեր, ռսացած. — ոչ
Կովի երես տեսած, ոչ կռվի ահ.
Եվ դա չէ՞ր պատճառը, որ
Ոչխարների նման սարսափահար,
Նրանք փախան ֆրոնտից, տվին Էրզրումը,
Հետո Ղարսն, Ալեքպոլը... վա՛յ ձեզ, հայե՛ր...
Շավարշի գլուխը մտքերից եռում էր.

Շավարշը դառը ծիծաղեց.
Խմեց. ու հոսեցին կրկին մտքերը —
Իրարից ավելի պղտոր ու ծանր, —
Իսկ Ղաչաղը երգում էր, դեռ երգում էր,
Հոսում էր դառնությունը համը...
Եվ հանկարծ Շավարշը — այնքա՞ն պարզ —
Կարծես դեմը լիներ, կարծես կենդանի —
Հիշեց. — առավոտը բացվում էր, թարմ, —
Շրջապատել էին թուրքական Թալինը:
Երեք օր էր արդեն — կռվում էին.
Շրջապատել էին գյուղը չորս կողմից խիտ.
Մարմանդ լուսաբաց էր, երբ
Գյուղը զարթնեց հանկարծ թանձր ծխից. —
Շավարշի տղերքը գիշերը
Վառել էին գյուղը մի ծերից — ու հիմա
Չորս կողմից խուժեցին նրանք ներս՝
Փռելով իրենց շուրջը ահ, մա՛հ, մա՛հ:
Աղմուկ, ճիչ, լաց, սմբակների շռինդ.
Ինքը, նստած սև ձին, ձեռին մաուզեր,
Փափախը թեք դրած, մի ձեռով պինդ
Գրկած ձիու բաշը՝ արշավում էր...
Եվ հանկարծ... ծառս եղավ Շավարշի ձին. ի՞նչ:
Ի՞նչ զարմանալի հրաշք, Շավա՛րշ...
Դիմացից դուրս թռավ մի հրեշտակ, չէ՛, կի՛ն.
Ձին սանձեց Շավարշը — ու մնաց:
Ջաննաթի փերի էր, կին չէ՛ր, չէ՛
Չէր տեսել Շավարշը այդպիսի կին.
Սարսափած աչքերով կինը նայեց շուրջը —
Աչքերը սև էին, սև ու ջինջ:
Սև մազերը թափված ուսերին, կուրծքը բաց,
Ալաբաստրե, ճերմակ ձյունների նման
Շողշողում էր կուրծքը, ինչպես լուսաբացին
Ալագյազը, երբ ցնդում է դումանը:
Շավարշը սանձել էր ձին, քարացել.
Ազդեցիկ էր տեսքը՝ հագի
Կաշվե սև զգեստը, ձին տակի,
Որ սարսափահար ծառացել՝
Խփում էր մի ոտքը հողին, վրնջում էր,
Աչքերից թափում էր բոց, շանթ, ադամանդ, ծուխ, —
Շավարշը լսում էր իր ձիու վրնջյունը
Եվ ուռչում էր կուրծքը, ուռչո՛ւմ, ուռչո՛ւմ, ուռչո՛ւմ...
Տեսարանը շքեղ էր. ինքը — զարհուրելի,
Ծառացած կնոջ առջև, ինչպես սուրբ Գևորգ.
Ու կնոջ աչքերը՝ սարսափով լի,
Աչքերը, որպես գիշեր: Ու թվում էր — ցնորք է:
Մի վայրկյան էր միայն, որ տևեց

Երկար, ինչպես դարը: — Շավարշը մի պահ միայն
Ուզում էր բաց թողնել ձին հետևից,
Վախենալով, որ կինը կանէանա,
Կտեսլանա հանկարծ, կցնդի,
Կդառնա գարնանային մշուշ, ամպ, ցող —
Ու կմնա լոկ ինքը ու ձին՝
Գյուղամիջին ահից խրխնջացող. —
Բայց պատահեց հանկարծ զարմանալի.
Զարմանալի մի բան.-Կինը, հևիհև,
Ինչպես ճերմակ փրփուր, ճերմակ ալիք —
Փլվեց, փռվեց Շավարշի նժույգի առջևը. —
«Կուրբա՛ն», — կանչեց կինը. — «կուրբան սյանի,
Սյա՛ն մյանըմ իգիթըմ, սյա՛ն մյանի ալ.
Մյան սյավարըմ սյանի, իգիթ էրմյանի» —
Զայնը՝ աղբրի՛ նման, աղբրի՛ նման զուլալ...
Ի՞նչ էր, ի՞նչ էր. Ի՞նչ էր– ցնո՞րք էր, զառանցա՞նք, տե՞նդ.
(Քրտինքի մեջ կորած ձին
Լիզում էր թաց լնդերքը
Եվ հազիվ էր դիմանում սանձին) —
Երբ դիմացից հանկարծ, դիմացի խրճիթից
Դուրս թռավ մի զինվոր ձեռքին դաշույն, —
Հետո հիշում է Շավարշը մի զարհուրելի ճիչ.
Հետո մշո՛ւշ, մշո՛ւշ, մշո՛ւշ...
— Չե՛մ տա, — գոռաց զինվորը, — չեմ տա, Շավարշ, իմն է. —
Իմ ձեռքերից փախավ շան քածը...
Վրա պրծավ մռայլ, — ու շողշողաց դաշույնը,
Ու Շավարշին թվաց, թե հարբած է: —
Ու հիշում է Շավարշը — Կինը՝ վերքը կողքին՝
Թավալվում է իր կարմիր արյան մեջ — և —
Իր մաուզերի շո՛ղքը, իր մաուզերի շո՛ղքը,
Ու զինվորի դիակը — իր ձիու սմբակների առջև...
. . . . . .
Այն ի՞նչ էր, ի՞նչ էր, ի՞նչ էր, ցնո՞րք էր, զառանցա՞նք, տե՞նդ.
Խենթի պես, նրանց դիակների վրայով, քշեց իր ձին,
Այրեց, ջարդեց, թափեց, քանդեց, քանդեց,
Գյուղը դաշտ դարձրեց կարմիր հնձի:
Կոտորեց, չհարցրեց ծեր, կին, աղջիկ, մանուկ, —
Մինչև ուշ գիշեր, մինչև ուշ գիշեր ասպատակեց.
Հետո լուսինը կարծես արյան մեջ էր լողանում,
Իսկ գյուղը դիակ էր կարծես՝ կապված իր ձիու ասպանդակից:
Ուղեղում մշուշ էր — կարմիր, ալ, արյունարբու,
Ուղեղում թուրք կնոջ մարմինը վառվում էր, որպես վերք.
Հետո հարբեց Շավարշը, գայլը արյունով է հարբում,
Իսկ Շավարշը — մի գայլ էր, որ կորցրել էր մի էգ —
Մի սպիտակ, մի մաքուր, մի հրաշալի...
. . . . . Շավարշը

Բռունցքը խփեց սեղանին. Խմեց. և երբ
Սրբեց բեղերը բռունցքով — հիշեց իր ձիու բաշը,
Իսկ Ղաչաղը երգում էր դեռ:

II

Արդեն փողոցում ցրվում էր խավարը,
Մոտենում էր առավոտը, պղտոր բացվում, —
Իսկ խմբապետ Շավարշը
Դեռ խմում էր, խմում էր ու մուժով լցվում:
Տղերքն հարբել էին: — Թաթիկը՝
Սիրեկանի նման գրկած Հարոյին՝
Համբուրում էր նրան հարյուրապատիկ —
Իսկ Եգորը հայհոյում էր Դրոյին:
Շավարշը մտածում էր: — Մտքերի թելը,
Որ այնպես տարածվել էր Ղաչաղի երգից՝
Թողնելով հիշողության, անցյալի ելը՝
Դրոյի շուրջը ոլորվեց կրկին:
Արդեն բացվում էր առավոտը. — արդեն
Բաց-կարմիր թանաքի նման Երևանի վրա
Թափվում էր հորանջող ու մգլած այգը —
Եվ Եգորի հայհոյանքն էր ողջունում նրան,
Միայն այդ հայհոյանքը: — Քաղաքում դեռ
Մարդիկ քնած էին ծանր, տագնապալի քնով,
Եվ բացվող առավոտը անտանելի մի բեռ էր,
Որ իջնում էր կրկին իր անմխիթար հունով.—
Քաղաքը դեռ քնած էր լուռ, համր, ծանր,
Ներքևը միայն, հյուրանոցի առջևը, փողոցում
Կանացի՞, մանկակա՞ն, թե՞ պառավային մի ձայն
Վնգստալով օդն էր սղոցում. —
Շավարշը մտածում էր. հարկավոր էր իսկույն որոշել
Հարկավոր էր գնալ, կամ չգնալ, մնում էր
Մի-երկու ժամ միայն: — Եվ նա որոշեց.—
Նա կգնա, բայց մենակ, խումբը՝
Կազմ, պատրաստ կսպասի քաղաքից դուրս,
Փարաքարի մոտի այգիներում, հետո —
Հետո հայտնի կանի: — Զինվորներից լոկ չորսը
Կգնան իր հետ առավոտուն. —
Եգորը, Ղաչաղը, Թաթիկը, Հարոն. —
Հենց սրանք — բավական են կարո՞ղ է՝
Թող հարձակվի Դրոն.—
Բայց ո՞վ է... նրա ձեռքը... պահողը...
Կարող է բանտարկի: Կարող է հանկարծ
Սպանի տղերքից սրան, կամ նրան:
Ոլորեց Շավարշը իր պղտոր հայացքը
Հիշեց արյունոտ այն տեսարանը

Միլիցիատան բակում, ավազին,
Իրար կողքի ընկած — երկու դիակ.
Իգդիրցի Թևիկը և Աղասին՝
Լուռ, արնաշաղախ. միայն
Ծոծրակների վրա — փոքրիկ վերքեր.
Խփված էր կռնակից... Այդպե՛ս: —
Դեպի մաուզերը տարավ
Շավարշը իր ձեռքը.
Արյունը գլուխը խփեց —
Հարբեց...

Դա ո՛չ թե քամին է փողոցում շաչում,
Եվ ոչ էլ հրթիռը հրդեհում խավարը, —
Իր խմբի տղերանց հետ դա հյուրանոցում
Խմում, աղմկում է խմբապետ Շավարշը:
Այդ նա էր, որ տարավ ձեռքը մաուզերին,
Հանեց, քաշեց. — և վաղ առավոտվա մեջ
Չարագուշակ, դաժան երգեց մաուզերը
Արյան, մուժի, մահի, ասպատակի երգ...
Հետո ձայնակցեցին նրան մյուսները՝
Եգորը, Թաթիկը, Ղաչաղ Սաքոն, —
Իսկ քաղաքը, սմքած, դեռ քնել էր
Ու զառանցում էր մաուզերի կրակոց:
Ինչպես տիֆով հիվանդի զառանցանքում հրե,
Նախճիրի պես բացվող առավոտվա ֆոնին
Գծելով տագնապի հնչնագրեր —
Երգում էր մաուզերի սիմֆոնին:
Կրակում էին տղերքը — բաց պատուհանից.
Իրար կողքի կանգնած, հայացքները դեպի լուսաբացը.
Համազարկը թռչում էր տանիքից — տանիք,
Առավոտվա միջով, որ նրանց պես հարբած էր:
Պղտոր առավոտվա միջով, առավոտվա մեգին,
Քաղաքի վրայով, որ զառանցում էր, —
Սավառնում էր խմբապետ Շավարշի հոգին,
Հարբած, մռայլ, դաժան, ինչպես ձյունը,
Որ բուք դարձած՝ խեղդում է տրորում,
Դարձնում աշխարհը, կյանքը, ամեն ինչ — տենդ.
Կրակում էր խումբը ու նայում հեռուն՝ աչքերում
Արյան, մեգի, մահի, տագնապի նախճիրներ...
Շուռ եկավ հետո Շավարշը, մաուզերը ձեռին —
— Գնա՛նք, — գոռաց տղերքին, — ու պրծավ դուրս.
Խռպոտ՝ հորդեց կոկորդից քրքիջը:
Հետո — հայհոյանքը. հետո —
— Եգո՛ր, — կանչեց, — լսո՞ւմ ես. մեզ Դրոն ուզել է,
Ուզում է ուղարկի երկինք՝ եղբայրներիդ քով...

Ու կրկին շառաչեց Շավարշի մաուզերը —
Ասպատակի, մահի, արյան երգով:
Ահռելի էր Շավարշը, ձեռքին մաուզեր
Օրորվելով, գնում էր մեգի միջից.
Հետևից — իր տղերքը, բոլորի ձեռքին — զենք,
Բոլորն էլ — իր նման հարբած: — Առաջից
Քայլում էր, որպես սպառնալիք, ինքը, կողքեկողք
Ընկնելով — գնում էր. այրում էր սիրտը տապը.
Հետո բռնեց նրան մի խեղդող դող.
Գլուխը շուռ եկավ. սիրտը թափեց —
Հենց այնտեղ, փողոցի մայթերին: — Տղերքը
Բռնել էին նրան: — Փողոցում,
Ու դադարել էր արդեն մաուզերների երգը —
Մի ծանր խռպոց էր միայն օդը սղոցում: —
Մեկը, մոտիկ ընկած, մեռնում էր երևի.
Կի՞ն էր, տղամա՞րդ էր, երեխա՞, — անհայտ էր,
Ո՞ւմ ինչ, թե նաիրյան ծագող արևին
Խռպոցով էր դիմավորում այդ մարդը:
— Հանգստացավ Շավարշը: — Եվ երբ,
Բեղերը սրբելով, անցավ առաջ երկու
Զառանցանքի նման երեխաներ,
Աչքերով ամեհի, ահարկու —
Ինչպես շները սովամահ, դաշտում դեգերող,
Հղի կանանց նման փորներն ուռած,
Մագիլների նման ձեռքերով
Հարձակվեցին Շավարշի փսխածի վրա —
Եվ սկսեցին լափել ագահաբար՝ ընկած
Երեսնիվայր մայթին, ինչպես շներ, —
Ու նրանց աչքերում պսպղում էր քաղցը՝
Անասնական, անեզրական, անեզր...
. . . . . .
Գնում էր փողոցով խմբապետ Շավարշը,
Հետևից — տղերքը, իր նման հարբած:
Արդեն արթնանում էր զառանցող քաղաքը,
Արդեն առավոտ էր դառնում լուսաբացը:
Տներից ելնելով հետզհետե՝ մարդիկ
Անխոս գնում էին՝ դեմքերին հոգս: —
Անցնում էր Շավարշը, իր խմբով, մայթից,
Տարածում էր շուրջը զարհուրանք, դող:
Եվ հանկարծ– կրկին նա քաշեց մաուզերը,
Առաջին հանդիպած մարդուն հրամայեց
Դեպի պա՛տը ռեխդ, դե շո՞ւռ տուր երեսդ,
Տեսնո՞ւմ ես՝ անցնում են մայթից– ահա ե՛ս: —
Շավա՛րշն է անցնողը: — Տղերքը զվարթ
Հռհռացին բարձր, հայհոյեց Հարոն, —
Ու շուռ եկավ մարդը, նայեց դեպի պատը,

Եվ անցավ Շավարշը՝  հայացքը արյուն:
Եվ հետո — ինչքան նա հանդիպեց մարդու՝
Բոլորին հրամայեց նայել պատին.
Բոլորի դեմքերին նա վախ էր կարդում
Եվ դա համարում էր — բարձր պատիվ,
Եվ այդ պատճառով էլ — չափազանց հպարտ էր:
Մի ամբողջ փողոց նա այդպես անցավ,
Մինչև հանդիպեց մի մարդու,
Որ երեսը շրջել չկամեցավ…
— Երե՛սդ, — գոռաց Շավարշը, — դեպի պատը,
Թե չէ ռեխ-մռեխդ հիմի կջարդեմ... —
Բայց այդ զարմանալի մարդը
Մաուզերը քաշեց — ու կանգնեց նրա դեմ:
Շավարշը շվարեց, երա՞զ էր, տե՞նդ, —
Ուզեց մաուզերի բլթակը քաշի,
Երբ հանկարծ հետևից մի ծանր ձեռք
Բռունցքով խփեց Շավարշին:
Շավարշը օրորվեց, ընկավ մայթին.
Փողոցը երերաց, աչքերում, մթնեց.
Ու թվաց Շավարշին, թե այդ մարդը
Քաշեց իր ուղեղում երկաթե պատնեշ...
Չլսեց էլ Շավարշը իր խմբի տղերանց
Մաուզերների ձայնը և չզգաց անգամ,
Թե ինչպես Եգորը հանկարծ
Քարի պես ծանրածանր — իր վրա ընկավ:
Չտեսավ Շավարշը և այն, թե հետո
Իր խմբի մնացորդը ոնց նահանջեց.
Լոկ թվում էր նրան, թե մեկը երկաթով
Այրում է իր ականջը:
Եվ տանը միայն, երբ աչքերը բացեց,
Ուշքի եկավ մի քիչ — հասկացավ, որ այդ մարդը
Որին հանդիպել էր — եղել է իր մեծ
Խաչեղբայր — խմբապետ Սմբատը:
. . . . . .. . .
. . . . . .. . .

## ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԵՐԿԵՐԻՑ

## ՊՈԵՄՆԵՐ

## ՄԵԾ ԱՌՕՐՅԱՆ

Գիշեր էր արդեն, երբ վերադարձավ: —
Ճամփին, փողոցում, քամին սանձարձակ
Հոնդում էր ցուրտ, փչում էր խոնավ

Եվ մտնում մինչև ոսկորները: — Նա
Մրսել էր թեկուզ և սրթսրթում էր
Ինչպես թրջած հավ, — ուղեղը սակայն
Եռում էր անսանձ խոհերի տապից:
Իր ամբողջ կյանքում առաջին անգամ
Նա չնկատեց ցուրտը, չանիծեց
Աշխարհը, մարդկանց և իր բախտը բութ
Ու անաջողակ: — Ուղեղում — մտքեր
Նոր ու անսովոր, մտքեր, որոնք մեծ
Ու ճնշող էին ու հրապուրիչ,
Ինչպես մի հեռու, հզոր, անծանոթ
Աշխարհից հնչող շռնդալից երգ: —
Եվ հիշում էր նա, նորից ու նորից,
Ամբողջը... նրանց դեմքերը, նրա
Խոսքերը և՛ պարզ, և՛ զարմանալի,
Ինչպես մեքենան այն հրաշագործ,
Որ գումարում է, հանում, բաժանում
Եվ բազմապատկում: Այդպե՛ս, ճի՛շտ այդպես
Զարմացավ նա, երբ առաջին անգամ
Ցույց տվին նրան հաշվող մեքենան: —
Այդ զարմանալի մեքենան: — Իր գորշ,
Իր միապաղաղ կյանքում, ուր չկար
Ո՛չ մի բան լուսեղ ու զարմանալի,
Որ ամբողջովին մի շղթա էր գորշ,
Փոքրիկ հոգսերի, — որ տևում էր լոկ,
Որպես ռոճիկից ռոճիկ ընթացող
Մի տաղտկալի երթ, — իր կյանքում դա մի
Հրաշք էր վսեմ ու անիրական: —
Այդ զարմանալի մեքենան…Մի պահ,
Առաջին անգամ երբ նա դարձըրեց
Այդ մեքենայի կոթը, — մի վայրկյան
Կաշկանդեց նրան անդրաշխարհային
Մի երանություն: — Մի վայրկյան նրան
Թվաց, թե ինքը մի գերերկրային
Հանճարի ուժով պոկվեց առօրյա
Իր անաստղ կյանքից — և թռավ դեպի
Հրաշքով լեցուն աշխարհ մի ուրիշ,
Դեպի հեռավոր աշխարհն այն, որի
Փարթամ, դյութական կենցաղի մասին
Երազել է միշտ ինքը, որպես մի
Դրախտի մասին: — Որի գիտության
Ու հարստության մասին նա այնքան
Կարդացել է դեռ մանուկ հասակից
Անթիվ գրքերում ու ժուռնալներում:
Օ, չքնա՛ղ աշխարհ... — նա գուրգուրանքով
Շոյեց մեքենան մի քանի անգամ,

Հետո հուզմունքից փայլող աչքերով
Նայեց հիմնարկի վարիչի դեմքին
Եվ ժպտաց մի պահ գոհ ու հաղթական: —
Այո՛, հուզմունքից փայլող աչքերով
Նայելով անթարթ վարիչի դեմքին —
Ժպտաց նա մի պահ՝ գոհ ու հաղթական
Եվ հետո, փայլող աչքերը կրկին
Հառելով փոքրիկ այն մեքենային —
Նա բարակ քրքջաց՝ հեգնանքով, թաքուն
Արհամարհանքով լեցուն քրքիջով...
«Հի՛-հի՛-հի՛» — քրքջաց, ձեռքերը հետո
Ինքնագոհաբար նա քսեց իրար
Եվ ասաց. « — Այո՛... սիրելի վարիչ, —
Այսպիսի բանե՛ր...» — Իսկ վարիչը՝ բութ
Հայացքն հառելով իր փայլող դեմքին,
Չհասկանալով իր արձակած սուր
Հեգնանքը՝ նետած նրանց հասցեին

Երեխայաբար ծիծաղեց ինքն էլ...
Կարո՞ղ էր արդյոք լոկ կուսակցական
Իր տոմսի ուժով մարդու շարք անցած
Այդ ողորմելին, — մտածում էր նա, —
Հասկանալ իր սուր հեգնանքը՝ հղած
Իրենց հասցեին: — Կարո՞ղ էր արդյոք
Այդ ողորմելին հասկանալ, որ այդ
Ֆանտաստիկական մեքենան իրոք
Մի անհերքելի մահավճի՛ռ էր
Ուղղած իրենց դե՛մ: — Ի՞նչ ունեն սրանք,—
Մտածում էր նա, նրանց վիթխարի
Հանճարի, ուժի և տեխնիկական

Քանքարի հանդեպ... Ի՞նչ ունեն — միայն
Տկլոր սրունքներ և ուրիշ ոչինչ:
Եվ ի՛նչ, ի՛նչ հեգնանք սատանայական, —
Մտածել էր նա հաճախ, — այսպիսի
Մարդկային տարրից, նման չքավոր
Երկրում՝ ունենալ կոմունիստական
Հասարակակարգ կառուցելու ի՛ղձ...
Երեք տարի է ահա, որ ինքը
Այստեղ, նաիրյան այս գործարանում
Աշխատում է սոսկ մի հաշվետարի—
Պաշտոնով: — Երեք տարի շարունակ
Այստե՞ղ է թափել իր քրտինքը նա,—
Եվ ի՞նչ է տեսել՝ տգիտությունից
Եվ ստոր, փոքրիկ շահերի համար
Իրար դեմ մղվող պայքարից բացի...

Վերևում՝ գործին անծանոթ մարդիկ,
Եսասեր, իրար ոտքի տակ փորող,
Անդեմ, ինքնագոհ և ստրկամիտ: —
Իսկ գործարանի բանվորնե՞րը... օ,
Կա՞ արդյոք թեկուզ լույսի մի նշույլ
Այդ մարդկանց կյանքում…Կարո՞ղ է արդյոք
Մի բան սպասել ինքը նրանցից,
Երբ ճանաչում է նրանց ավելի՛,
Քան ինքը — իրեն: Խեղճ, տգետ մարդիկ,
Օրվա վաստակի համար մաքառող,
Մարդիկ, որ կարծես իզուր են կրում
Կոչումը մարդու: — Նրանց պիտի դեռ
Սովորեցնես քթները սրբել
Եվ ապա՛ նստել հացի... օ, նրանց
Փոխելու համար սերունդնե՛ր են պետք
Եվ ո՛չ թե օրեր, կամ տասնամյակներ: —
Կարո՞ղ են նրանք հասկանալ արդյոք, —
Մտածում էր նա դեռ երեկ, — թեկուզ
Տարրական մի միտք — կարո՞ղ է նրանց
Գլուխը մտնել որևէ վսեմ
Գաղափար... օ, դա մի անիրական
Հրաշք էր թվում նրան դեռ երեկ, —
Նա ավելի շատ գլո՛ւխը կտար,
Քան կհամոզվեր երեկ, որ նրանք,
Այդ քարե դարից մնացած մարդիկ
Կարող են լինել խոհի ընդունակ,
Կարող են իրենց մտքով ըմբռնել
Մի բարձր, պայծառ գաղափար, կամ խոհ: —
Նա չէ՛ր էլ կարող երևակայել
Դեռ երեկ, որ այս ածխադեմ մարդիկ
Կարող են երբեք լինել ընդունակ
Ինքնազոհության և հերոսության, —
Որ մարդիկ այդ մութ կարող են իրենց
Սրտերում կրել ոգևորության
Հուրը սրբազան, այն հուրը, որով
Դառնում է մարդը աստված ու հերոս...
Այո՛ — տարիներ շարունակ իրեն
Համոզել է նա, որ մարդիկ այդ մութ
Լոկ ուտելո՛ւ են ընդունակ, այո՛, —
Ուտելո՛ւ միայն և ծանր, դժվար,
Անմարդավայել, սև աշխատանքի, —
Բայց այսօր ահա, ընդամենը մի
Ժամվա ընթացքում, փլվում է հանկարծ
Իր, տարիների ընթացքում կոփված,
Համոզմունքների շենքը անհողդողդ —
Եվ չի՛ հավատում իր աչքերին նա,

Դժվարությամբ է իր միտքը ահա
Ենթարկվում իր նոր, անհասկանալի
Զգացմունքների եռուն հորձանքին...
Եվ ո՞նց պատահեց ամբողջը... Այնքա՛ն
Այնքա՛ն հասարակ ու զարմանալի,
Այո՛ — հասարակ ու զարմանալի,
Ինչպես մեքենան այն հրաշագործ, —
Հաշվող մեքենան: —
...Առավոտ նրան
Եկան ասացին, որ երեկոյան
Հայտարարված է ընդհանուր ժողով,
Ուր սոցմրցության հարցն է դրվելու
Քննության... Այո՛: — Լսեց քմծիծաղ,
Ինչպես լսում էր նա սովորաբար
Լուրերն այդպիսի, — և որոշեց գալ: —
Նախ՝ ա՛յն պատճառով, որ պարտադիր էր
Ներկայությունը պաշտոնյաների,
Եվ ապա — դե, նա ի՞նչ պիտի աներ
Տանը: — Եվ եկավ: — Ժողովը տևեց
Բավական երկար: — Նախ նայում էր նա
Շուրջը՝ քմծիծաղ արհամարհանքով
(Իհարկե, գաղտնի...) — Իսկ հետո... հետո..
Օ, ինքն է՛լ գլխի չընկավ, թե հետո
Ո՛նց, ո՛նց գրավվեց ինքն հետզհետե,
Կարծես թե մեկը սուզեց նրան մեծ
Մի կաթսայի մեջ... Կարծես թե մեկը
Պիրկ, ջղուտ ձեռքով պոկեց իր խավար
Աչքերից բարակ, թափանցիկ մի քող —
Եվ տեսավ հանկարծ նա այն, որ երեկ
Չէր կարող անգամ երևակայել,
Թե կարող է ինքն զգալ ու տեսնել...
Եվ ինչի՞ց, ինչի՞ց, ինչի՞ց սկսվեց,—
Մտածում էր նա՝ ժողովից հետո
Վերադառնալիս: — Ցուրտ, խոնավ քամին
Լիզում էր նրա դեմքը, թափանցում
Մինչև թոքերը բավական հիվանդ, —
Նա չէր նկատում ո՛չ մի բան սակայն,
Ձեռքերը կոխած գրպաններն՝ արագ
Քայլում էր ցեխոտ, խարխուլ մայթերով,
Ու բոցկլտում էր ուղեղը՝ ջերմին
Խոհերից թե՛ նոր, թե՛ զարմանալի...
«Ինչի՞ց սկսվեց...» — Հիշեց. — դահլիճում
Ծուխ, ծանոթ մշուշ: — Մշուշում — դեմքեր,
Բոլորը ծանոթ: — Նրանց ամեն օր
Տեսնում էր ինքը, ու թվում էր թե
Ճանաչում է նա յուրաքանչյուրին,

Ինչպես սեփական իր կնոջը, կամ
Երեխաներին: — Նստած էր Խեչոն,
Այդ վտիտ մարմնով բանվորը, որի
Դեմքին կա նստած միշտ դժգոհություն,
Ինչի՞ց — չգիտես: — Նստած էր Համոն,
Այդ հայհոյասեր լենինականցին,
Այդ պարծենկոտը, որ չի՛ հավանում
Ոչ ոքի՝ բացի սեփական անձից: —
Մուկուչը հետո, այդ երիտասարդ
Բանվորը, որ միշտ ծաղրում է իրեն,
Սիրում է խմել և գնալ կինո,
Թեկուզ ունի մայր, կին ու երեխա,
Որ նայում են լոկ նրա վաստակին: —
Նստած էր Հայրոն... Տպավորվել էր
Նրա ուղեղում մանավանդ նրա՛,
Այդ տարիքն առած, բայց անգրագետ,
Կոպիտ, քչախոս, մի՛շտ անբավական
Բանվորի դեմքը... Այդ մարդը, որի
Ամե՛ն մի մազը ծանոթ էր իրեն,
Որին չէր սիրում ինքը և որից
Նա չէր սպասում ոչինչ՝ վայրենի
Հայհոյանքներից և մութ, եսամոլ
Իղձերից բացի: — Նա չէ՞ր, այդ Հայրոն,
Որ քիչ էր մնում սպաներ մի օր
Իր ընկերներից մեկին՝ մի փոքրիկ
Վեճի ժամանակ... Եվ այսպես, հերթով
Մտաբերում էր նա նրանց մեկ-մեկ, —
Մոտ հիսուն հոգի, որ նստած էին
Սկզբում դժգոհ, հոգնած դեմքերով:
Դահլիճը արդեն լցված էր ծխով,
Հորանջում էին արդեն ձանձրույթից,
Երբ եկավ հանկարծ զեկուցողը — և
Ժողովն սկսվեց: — Ինքը անկյունում
Կծկված՝ մի փոքր արհամարհական
Ժպիտը դեմքին՝ նայում էր նրան: —
Ի՞նչ էր սպասում այդ հավաքույթից
Ինքը — թվում է, թե պարզ է, առանց
Երկար խոսքերի: — Մի պաշտոնական
Զեկուցում, հետո վաղուց պատրաստված
Մի բանաձևի քվեարկություն —
Եվ ուրիշ ոչինչ: — Մութ, մեռյալ մի գործ,
Որ փաթաթվում է այդ անգրագետ
Խեղճերի վզին, որպես մի վերին,
Անխուսափելի կամքի ցանկություն...
Այդպե՛ս էլ կարծես սկսվեց: — Նախ նա,
Այդ զեկուցողը, հայտնեց, որ իրենց

Սոցմրցության են կանչել՝ Լենինի —
Քաղաքից՝ հսկա մի գործարանի
Բանվորները... (Նա այդպես էլ ասաց՝
«Լենինի քաղաքը», և ո՛չ — Լենինգրադ,
Ինչո՞ւ, չգիտեր ինքն էլ երևի...) —
Խոսեց նա հետո մրցության մասին,
Դրա էության, — բերեց ցիտատներ
Լենինից, Մարքսից և Ստալինից, —
Եվ հետո անցավ սոցիալիստական
Շինարարության հնգամյա հսկա
Պլանին: Բերեց մի քանի թվեր,
Հետո անպաճույճ, պարզ, հասկանալի
Խոսքերով պատմեց, նկարագրեց
Աշխատանքները նա այդ վիթխարի —
Եվ հանկարծ ինքն էլ նկատեց, որ մի
Ինչ-որ անսովոր, խոր լարվածությամբ
Լսում են ահա բոլորը նրան, —
Լսում է ի՛նքն էլ և աչքերից իր
Ընկնում է կարծես մի մութ վարագույր...
Բայց ո՛չ. — դեռ դա չէ՛ր պատճառը իր այդ
Անսպասելի ոգևորության, —
Զեկուցումը չէ՛ր... Չէ՞ որ՝ ինչ որ նա՛,
Այդ զեկուցողը պատմեց ժողովին —
Ո՛չ նորություն էր իր համար, ո՛չ էլ
Երկնքից իջած մարգարեություն...
Չէ որ, վերջապես, այդ մարդու ասած
Բոլոր այդ վսեմ բաների մասին
Ինքը բազմիցս կարդացել էր մեր
Բոլոր թերթերում և ժուռնալներում —
Կարդացել էր և... չէր հավատացել: —
Ուրեմն դա չէ՛ր պատճառը նրա
Ոգևորության: — Բա ի՞նչն էր, ի՞նչը, —
Մտածում էր նա արագ քայլերով
Կտրելով ծանոթ ճանապարհը: — Նա
Իր ներքին անթարթ հայացքը հառած
Սեփական մտքի խորքը՝ ճգնում էր
Լրիվ ճշտությամբ, մանրամասնորեն
Վերականգնել իր բորբոքված մտքում
Ամբողջը: — Այո՛: — Զեկուցողը երբ
Իր խոսքն ավարտեց — դահլիճում արդեն
Տիրում էր մի խոր, ջերմին լռություն: —
Մի լարվածություն անսպասելի
Նստել էր, ծանր, բոլորի դեմքին —
Եվ ի՛նքն էլ, ի՛նքն էլ համակված էր այդ
Խոր, անակնկալ, գոլ լարվածությամբ…
Բայց դա ո՞նց, դա ո՞նց, դա ոնց պատահեց

Այդ ինչպե՞ս եղավ, որ ինքն էլ հանկարծ,
Համակված կարծես մի մութ մոգությամբ
Սկսեց տարվել մտքերով — այնքա՛ն
Նոր ու անսովոր… Իր մշուշապատ,
Թե՞ պայծառացած աչքերի առջև,
Գուցե ընդհանուր այդ լարվածության
Ազդեցության տակ — սկսեց հանկարծ
Վիթխարի պատկեր մի գծագրվել,
Մի զարմանալի, հոյակապ պատկեր…
Դահլիճում տիրող կապույտ լռության,
Կապտավուն ծխի ու մարդկային այդ,
Խոր լարվածության միջից ելնելով,
Զուլվելով գուցե իր լսողության
Սահմանին հասնող խոսքերից, նաև
Մարդկային խորունկ շնչառությունից, —
Հյուսվելով նրբին, անհասկանալի,
Անշոշափելի տարրերից — քիչ-քիչ
Իր պայծառացած աչքերի առջև
Սկսվեց փռվել պատկերն այդ — այնքա՛ն
Ե՛վ հեքիաթային, և՛… հասանելի: —
Տեսնում էր նա բիլ մշուշի միջից
Դաշտեր, հովիտներ, լեռներ ամեհի,
Քաղաքներ հսկա ու գործարաններ, —
Եվ հասնում էին նրա ականջին
Ամեհի ձայներ… Բանա՞կ էր արդյոք,
Մի բազմամիլիոն, երկաթյա բանակ,
Որ արշավանքի ելած լցրել էր
Աշխարհը հաստատ, մեկին ձայներով…
Ոտքերի դոփյուն, մկանների երգ,
Լարված կամքերի աճումն ամեհի,
Փոկերի դղիրդ, շչակների ձայն, —
Եվ ձուլված իրար այս ամենը՝ մի
Աղմուկի նման ռիթմային, հզոր,
Որպես երկաթյա երաժշտություն՝
Հնչում էր վսեմ ու անպարտելի…
Եվ այդ ամեհի երաժշտության,
Այդ ծխի, կապույտ մշուշի միջից,
Այդ բիլ լռության — տեսնում էր նա կոշտ,
Մազապատ, անտաշ դեմքը Հայրոյի,
Որ այնտեղ, բեմից, ձեռքը ծոծրակին,
Քաշում էր կարծես իր կոպիտ կրծքից
Խոսքի ու խոհի անսովոր գլխից
Այնքան հասարակ ու գոտեպնդիչ
Բառեր… օ, այո՛ — խոսում էր — Հայրոն…
Եվ ի՞նչ էր ասում. — օ, սովորական
Բառեր… Հասարակ, բայց զարմանալի

Խոսքեր…Հասարա՛կ, — օ, ո՛չ, — և եթե
Հասարակ էին խոսքերը նրա,
Ապա… ճի՛շտ այնքան հասարակ, որքան
Պարզ ու հասարակ է վերջ ի վերջո
Հաշվող մեքենան… այն զարմանալի,
Հրաշք-մեքենան: — Հայրոյի ասած
Խոսքերում անշուշտ ա՛յն էր իր համար
Թե՛ անակնկալ, թե՛ զարմանալի,
Որ ինքը… այո՛, չէր կարող երբեք
Երևակայել, որ նա, այդ Հայրոն,
Ընդունակ է գեթ գլխի ընկնելու,
Թե ինչ են ուզում մարդիկ իրենից,
Էլ ո՞ւր մնաց, որ նա զգար իրեն
Անխախտ մասնիկը այն մեծ բանակի,
Որ Երևանից մինչև Լենինգրադ
Ձայնում են իրար՝ ֆանտաստիկական
Եվ չտեսնված մի աշխատանքի,
Մի վեհ, վիթխարի մի գործի համար…
Խոսեցին հետո մյուսները: — Եվ —
Այն մարդիկ, որոնց ինքը ամեն օր
Տեսնում էր, ապրում հետները, և միշտ
Թվում էր նրան, թե ճանաչում է
Ինքը բոլորին ավելի, քան լավ, —
Հանկարծ հառնեցին իր առջև — այնքա՛ն
Կարծես անծանոթ, անճանաչելի: —
Երեք տարի է ահա, որ ինքը
Ապրում է այստեղ, այս մարդկանց կողքին, —
Մտածում էր նա, — և ի՞նչ. — այս երեք
Տարվա ընթացքում կարողացե՞լ է
Արդյոք հասկանալ այս մարդկանց, տեսնել,
Զգալ, թե ինչո՞վ, ինչո՞վ են նրանք
Ապրում ու շնչում: — Ճգնե՞լ է արդյոք
Ըմբռնել նրանց առօրյա կյանքի
Ու աշխատանքի իմաստը, — նրանց
Անդուլ մաքառման և ընդվզումի
Իմաստը: — Օ, ո՛չ… Վերցնենք թեկուզ, —
Մտածում էր նա, — այդ նույն Հայրոյին.
Անցել է անփույթ այդ մարդու կողքից
Ինքը ամեն օր տեսել է միայն
Նրա մարդկային թերությունների
Կեղևը, նրա կոպիտ խոսքերի,
Նրա ձեռների, կեղտոտ մատների
Կոշտերը միայն: — Եվ այսպես — բոլոր
Այդ մարդկանց, նրանց առօրյա անդուլ
Աշխատանքների և նրանց ամբողջ
Գործի նկատմամբ: — Անանցանելի

Մի պատնեշ է միշտ եղել բարձրացած
Կարծես իր — և այդ բանակի միջև,
Մի զարմանալի անթափանց պատնեշ,
Որը չես կարող թեկուզ շոշափել,
Բայց պինդ է այդ նուրբ պատնեշը գուցե,
Քան քարը: — Այո՛: — Եվ պատնեշը այդ,
Քաշված իր և իր շրջապատի մեջ —
Ինչի՞ց է արդյոք դա առաջացել...
Ինչի՞ց, օ, ինչի՞ց, — հարցընում էր նա, —
Եվ չէր հասկանում, չէր գտնում դրա
Պատճառն իսկական: — Անդրադառնալով
Իր ամբողջ կյանքին՝ փորձում էր գտնել
Այդ հարցին նա մի պատասխան: — Փոքրիկ,
Խուլ, գավառական քաղաքում ահա —
Իր հայրը՝ չարչի՞, թե՞ արհեստավոր...
Օ, և՛ այս, և՛ այն: — Տանը շարունակ
Չքավորություն, խեղճություն, կարիք...
Երկդասյան դպրոց. հետո սեփական
Ջանքերով մի կերպ ընկած Երևան.
Սովորում է նա թեմականում... և —
Դա ե՞րբ էր, — թողեց դպրոցը, մտավ
Հաշվապահական կուրսեր — և ահա
Դարձավ հաշվետար: — Տասնյոթ թվին
Նա ամուսնացավ — և այն օրվանից
Աշխատում է նա գրասենյակներում: —
Կարգեր են փոխվել, բանակներ եկել,
Բանակներ անցել — իսկ նա միևնույն
Մատյանների մեջ թաղված շարունակ
Ապրում է մի գորշ խխունջի նման,
Դժգոհ իրենից, դժգոհ բոլորից,
Դժգոհ մանավանդ անհասկանալի
Այս «ընկերներից», որոնցից միայն
Սարսափել է ինքն ու ակընկալել
Ամենայն չարիք ու դժբախտություն...
Հեռու է եղել ինքը շարունակ, —
Մտածում էր նա, — կռվից, պայքարից. —
Չի եղել երբեք նա կուսակցական,
Դժգոհ է եղել նա դաշնակներից,
Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ չի հավատացել
Եվ սրանց... Ինչո՞ւ... Ի՞նչն է վախեցել
Կորցնել, բացի իր խեղճությունից,
Իր ճղճիմ, խղճուկ, անաստղ գոյության
Գորշ, անհրապույր հեռանկարից...
Խխունջի նման կառչած շարունակ
Իր ընտանիքին, հոգսերին, հացի
Չնչին փշրանքին, թաղված գլխովին

Այդ ամենի մեջ — չի կարողացել
Սթափվել, բանալ աչքերը, տեսնել
Իր շուրջը թափով թնդացող կյանքի
Ընթացքը թե՛ վեհ, թե՛ հերոսական...
Ինչո՞ւ, օ, ինչո՞ւ, — հարցնում էր նա
Ինքը իրենից, և չէր կարենում
Գտնել իր հարցին պատասխան: —Արագ,

Կուրծքը դեմ տված քամու հորձանքին,
Քայլում էր նա՝ ողջ մարմինը թեքած, —
Եվ քամու հնչեղ հորձանքում նա ա՛յլ
Ձայներ էր լսում, նոր ու կատաղի,
Տեսնում էր դեմքեր կոպիտ, անծանոթ, —
Եվ բարձրանում էր նրա մշուշոտ,
Բայց պայծառացած աչքերի առջև
Ելնելով կարծես գիշերվա մուժից —
Մեր մեծ առօրյան... Մի նո՛ր, վիթխարի
Իմաստ էր նրա աչքին ստանում
Այն ամենը, որ ինքը ամեն օր
Տեսնում էր, սակայն՝ անհասկանալի
Ինչ-որ պատճառով՝ նա չէ՛ր հասկանում
Մինչև այս գիշեր... Առաջին անգամ
Այդ հաշվետարը, այդ մարդը փոքրիկ,
Որ ապրել էր միշտ իր փոքրիկ, ճղճիմ,
Ինչին հոգսերով, — առաջին անգամ
Իր անաստղ կյանքում զգաց նա կյանքի
Աճումն, ահռելի ընթացքը, — նրա
Երկաթ քայլերի դոփյունն անհողդողդ: —
Այնտեղ, մշուշում, տեսնում էր նա մի
Հսկա գործարան... Քաղաքում հեռու,
Ուր չի եղել նա իր կյանքում երբեք,
Որից բյուրավոր վերստեր են իրեն
Բաժանում, — այնտեղ, քաղաքում այդ մեծ,
Որ առաջնորդի անունն է կրում
Բազմությունների այս արևակամ, —
Տեսնում էր այնտեղ նա կրակներ բյո՛ւր,
Աստղերի նման փայլող կրակներ,
Որոնց շուրջն անդուլ եռում են այս մեր
Հայրոյի նման ածխադեմ մարդկանց
Հոծ բազմություններ... Այդ կրակներից
Ձգվում են ահա դեպի խորքը այս
Հեռավոր երկրի — կրակե թելեր: —
Ձգվում են թելեր ոսկեցոլ աստղի
Շողերի նման: — Երբ նայում է մարդ
Կիսախուփ աչով հեռու աստղերին —
Այդպիսի ահա ոսկեցոլ թելեր,

Զգվելով այդ ջինջ, պայծառ աստղերից՝
Կապում են մարդու հայացքը նրա՛նց,
Այդ ջինջ աստղերին: — Առաջին անգամ
Նա զգաց այդ պիրկ, անմար թելերի
Գոյությունը — և աշխարհը նրա
Աչքերին հանկարծ լայնացա՛վ, ձգվե՛ց,
Դարձավ անսահմա՛ն, անծի՛ր, անեզե՛րք,
Երկնքի՛, հոգո՛ւ և տիեզերքի՛
Նման անեզերք: — Թեթև քայլերով
Տուն հասավ, թակեց նա դուռը: — Քամին
Շաչում էր դեռ թունդ, թռչում սանձարձակ:
Գիշեր էր արդեն, երբ վերադարձավ: —

Արագ մտավ տուն: — Կինը հարցական
Հառեց մի վայրկյան աչքերը նրա
Շորերին, դեմքին և ոչինչ չասաց: —
Սենյակում փայտյա սեղանի վրա,
Դրված էր մի հին դեղին ինքնաեռ,
Կողքին — մի քանի դատարկ բաժակներ—
Եվ ուրիշ ոչինչ: — Թափառ աչքերով
Նայեց մի վայրկյան այդ ամենին նա,
«Թեյ կա՞» — հարցըրեց մեքենայաբար
Կնոջը — և երբ կինը օրորեց
Գլուխը — նա լուռ վերարկուն հանեց
Եվ գնաց, պառկեց անկյունում դրված
Անկողնի վրա: — «Հարբա՞ծ է», իրեն
Հարց տվեց մտքում կինը, հետո լուռ,
Չարացած դեմքով չանչ արավ նրան —
Եվ ինքն էլ իր հին շորերն հանելով,
Մտավ անկողին: —
Սենյակի մթնում
Խոր լռության մեջ այդ գիշեր երկար
Մտածում էր նա՝ աչքերը հառած
Մութ առաստաղին: — Եվ սրթսրթալով
Երբ վերջապես նա աչքերը փակեց
Եվ քունը՝ խոնավ, զգվող թաթերով
Սկսեց իջնել նրա աչքերին, —
Դեռ հնչում էին նրա ականջին
Ամեհի խոսքեր ու ոտնաձայներ,
Կրակներ էին իր դեմ կայծկլտում —
Եվ մթության մեջ թվում էր նրան,
Թե իր հոգնաբեկ մարմնի վրայով
Դոփելով անցնում, անցնում են անվերջ
Հայրոյի նման ածխադեմ մարդկանց
Երկաթյա գնդեր, — գնում են դեպի

Երկաթից, կամքից ու աշխատանքից
Կոփվող մի աշխարհ……
……..

Իսկ առավոտյան,
Երբ եկավ կրկին նա գրասենյակ
Քնատ էր դեմքը, դժգոհ ու մռայլ.
Գիշերը կարծես եղել էր քեֆի
Եվ այժմ ծանր էր գլուխը, սիրտը
Խառնում էր կարծես — և աշխարհը ողջ
Թվում էր պղտոր, մթին զառանցանք: —
Իր մթնած, կիտված հոնքերի տակից
Նայում էր մեկ-մեկ նա շուրջը, նրանց,
Եվ նրանք կրկին նո՛ւյնն էին թվում,
Նույնն էին թվում այդ մարդիկ նրան՝
Նույն սովորական և անհրապույր,
Կարիքից, հոգսից ու աշխատանքից
Բթացած մարդիկ… Երեկվա իր մեծ
Խոհերից նրա պղտոր ուղեղում
Մնացել էր լոկ մի մթին մորմոք,
Մնացել էր լոկ խղճի խայթի պես
Մի ծանր զգացմունք, որը ճգնում էր
Նա իր մեջ խեղդել: — Նման զգացմունք
Ունենում է մարդ, երբ հանցանք է մի
Կատարում գաղտնի. — խայթում է խիղճը —
Եվ իզուր է նա ճգնում թաքցնել
Սեփական խղճից գիտակցությունը
Այդ անդառնալի հանցագործության…
Այդպես երբեմն հարբելուց հետո,
Մյուս առավոտ ամաչում է մարդ,
Երբ հիշում է, որ ինչ-որ անծանոթ
Մի մարդու առջև բացել է սիրտը
Գիշերը՝ խելքից ընկած ժամանակ…
Հեռու, մարմրող ցոլքերի նման
Ցոլացին մի պահ նրա պղտորված
Գիտակցության մեջ երեկվա իր մեծ
Խոհերի վերջին փշրանքները — և
Սուզվեցին անդարձ ուղեղի մուժում: —
Նա թթված դեմքով բացեց իր հսկա
Հաշվեմատյանը, մի վերջին անգամ
Բութ, դժգոհ դեմքով իր շուրջը նայեց —
Եվ խորասուզվեց իր մանրակրկիտ,
Անվերջ, չհատնող հաշիվների մեջ: —
«Հը, հո չե՞ս հարբել գիշերը» — նրան
Հարցրեց Կարոն, հաշվապահը: — Նա
Լուռ, անթարթ նայեց նրա աչքերին

Եվ ասաց. — «Այո ... մի փոքր... երեկ...
Ժողովից հետո...» — Եվ կրկին նա լուռ
Թեքվեց իր հսկա մատյանի վրա
Եվ խորասուզվեց հաշիվների մեջ...
……
Այսպես
Մի անգամ ահա այդ փոքրիկ մարդու,
Այդ հաշվետարի մոտով, այդքան մոտ,
Թնդալով անցավ մեր մեծ առօրյան,
Նա անգամ զգաց, շոշափեց մտքով
Ընթացքը նրա հսկավիթխարի, —
Նայեց նա մի պահ հրաշքի նման
Իր աչքերի դեմ բռնկված այդ վեհ,
Այդ շոնդալով անցնող պատկերին—
Եվ ընկճվելով նրա ամեհի
Մեծության ներքո, այդ անգրկելի,
Անհուն վեհության — սուզվեց նա կրկին
Իր սովորական մտմտանքի մեջ...

Եվ նովելը մեր վերջացավ այսպես: —

1929

**REQUIEM AETERNAM**

**ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**

Ա

Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք: —
Դեմքիդ տանջանքն է դրել
Անագորույն մի կնիք: —
Եվ հանճարի հեռակա
Հուրն է հանգչում ճակատիդ,
Ինչպես մարող ճառագայթ
Արարատի գագաթին: —

Բ

Հայրենի ե՛րգն ես դու մեր
Հալածական, ինչպես ամպ,
Որ քամիներն են ցրել
Եվ տարիներն ապստամբ: —
Ժողովրդի հանճարեղ
Սրտով երկնած ձայն ու շունչ,

Որ բարբառել ես դարեր
Օտարության մշուշում:

Գ

Առանձին ձայնն է ինչպես
Դառնում հնչյուն հայրենի —
Դաշնության մեջ լոկ հնչեղ
Հայրենական ձայների, —
Այդպես մեր հին դաշնության
Ով մարգարե տարագիր, —
Դու գտանում ես ահա
Ե՛վ ժողովուրդ, և՛ երկիր:

Դ

Հայրենի երգ մեր վսեմ,
Հազարամյա՜ մեր հանճար, —
Լոկ ժողովո՛ւրդն է հյուսել
Քո դաշնությունը պայծառ, —
Քեզ ժողովո՛ւրդն է խոնարհ
Տառապանքով իր ծնել,
Իր ավյունով պահել վառ,
Իր ոգու մեջ ընդունել…

Դ*
Քեզ ժողովո՛ւրդն է չարքաշ
Իր բորբ շնչով տվել շունչ, —
Ո՛չ մի իշխան կամ արքա
Քեզ չի՛ պահել իր նաշում: —
Թե՛ հայրենի, թե՛ օտար
Տիրողների համար միշտ
Եղել ես — ձա՛յն որոտան,
Եվ հա՛ր օտար, և ո՛ւրիշ: —

Ե

Դու աշխատա՜նքն ես երգել
Եվ քրտինքը մաճկալի. —
Անջո՛ւր հանգեր ու հերկեր,
Սիրո երգեր անձկալի...
Դու պանդուխտի տարագիր
Սի՛րտն ես երգել կարոտող՝
Անհայրենիք արագիլ՝
Կապված հուշի նարոտով: —

Ջ

Հնչյուններ ես հավաքել
Հենքի համար քո երգի
Դու՝ հանդերից մահաբեր

Հայրենական եզերքի.-

Եվ հայրենի հանդերի

Մրմունջներից չմարող
Հյուսել ես երգ անթերի
Սերունդների համար նոր: —

Է

Դու երգել ես միայն ճորտ
Ժողովրդի համար մեր
Երգեր՝ կյանքի նման խոր
Եվ զրկանքի նման վեհ: —
Եվ երգերում քո անհուն—
Ժողովրդի սրբազան
Սե՛րն է միայն վեհանում
Եվ աշխատանքը դաժան: —

Ը

Դու երգել ես միայն բորբ
Ժողովրդի սրտում մեր
Վառվող ցնորքն անհողդողդ՝
Իր գալիքի մասին վես: —
Հայրենիքի՛ մասին նոր,
Կյանքի, որ հաշտ ու ազատ —
Ծնվելու է արյունով
Եվ զոհերով սրբազան...

Թ

Քո ժողովո՛ւրդն է խոնարհ
Քո երգերում անրջել՝
Իր կյանքի տենչն անհնար
Եվ սիրո շունչը հնչեղ: —
Խաղաղությունն հաշտ ու սուրբ՝
Տանիքների վրա մեր,
Եվ սիրո խոսք ու շշուկ
Հասկերի երգ ու համերգ...

Ժ

Մեղմ՝ կարկաչում էր քո ջերմ
Երգը՝ երկրում մեր անշող—
Տանիքների վրա մեր
Եվ սրտերի ղողանջող:
Կարկաչում էր նա հուշիկ,
Մինչև խորշակն այն դաժան
Հո՛ւշ դարձրեց ու փոշի
Երկիր ու երգ սրբազան...

ԺԱ

Քեզ չմնաց անգամ քո
Հայրենի հող կոչվող սև
Այն հեռաստանն արնակոխ,
Որ քո ցնորքն էր լուսե:
Քեզ չմնաց անգամ ժանտ
Այն արեգակն հայրենի,
Որ ավելի՛ էր դաժան,
Քան թշնամին վայրենի...

ԺԲ

Քեզ չմնաց անգամ քո
Գորշ ժողովուրդն այն չարքաշ,
Որ, ինչպես եզ գլխիկոր,
Տքնում էր լուռ ու չարքաշ. —
Սև զրկանքում մտորող
Քո ժողովո՛ւրդն անգամ հեզ,
Որ լոկ հացի ու սիրո
Հույզերո՛վ էր սնում քեզ...

ԺԳ

Քո ժողովուրդը չարքաշ.
Հազարամյա զրկանքով,
Հազա՛ր սրով զարկած հար՝
Մարտիրոսյա՛լ իր կյանքով —
Իր եզերքում հայրենի
Հազիվ գտած հող մի բուռ —
Քշվե՛լ է հար իր բնից,
Իր խրճիթից ընդհանուր...

ԺԴ

Քեզ չմնաց անգամ քո
Հայրենիքում դեռ աճած՝
Մի բուռ ցնորք, մի խուրձ խոտ
Կամ թոնիրում թխած հաց...
Գերի երկրում քո անթով
Անգամ մի մա՛յր, որը քեզ
Սնե՛ր անգին իր կաթով
Եվ հավատով իր փրկեր...

ԺԳ

Չար ուրագան մի շաչող,
Դաժան մրրիկ մի ահեղ —
Քշեց շյուղի նման չոր,
Հողմի նման խելահեղ, —
Եվ տերևներ ինչպես հին
Ծառից ընկած ու անկյանք —
Քշեց երախը մահի
Թե՛ մայրերին, թե՛ մանկանց…

ԺԴ

Զարհուրելի եռանդով,
Ինչպես քաղցած մի գազան—
Սրբեց կամքով մի քանդող
Երկիր ու տուն սրբազան…
Լափեց եզերքը քո հին՝
Ե՛վ ժողովուրդ, և՛ վաստակ, —
Եվ անապատ ամայի
Դարձավ երկիրն Հայաստան...

ԺԵ

Ինչպես գրքից պոկված թերթ,
Կամ չորացած արտի շյուղ,
Նետված հողմով այն անեզր
Մահվան քամուն ու փոշուն, —
Դու՝ հանճարի նման մեր՝
Հազարամյա ուրվական՝
Դարձար տերև մահամերձ,
Քշված ոգի ու վկա...

ԺԶ

Հողմով տարված ինչպես շյուղ, —
Ուղիներում դու տեսար

Հրաճարակ կյանք ու խուղ,
Եվ ժողովուրդ հրկիզված: —
Ինչպես մահո՛ւ մանգաղով, —
Տեսար գյուղե՛ր դու հնձած, —
Այդ ժողովո՛ւրդն էր քո ողջ,
Որ քեզ տվեց երգի ձայն...

ԺԷ

Եվ արդեն խո՛լ դարձած հողմ,
Խաղերի ծուխ ու փոշի՝
Քշված ձեռքով անողորմ
Զարհուրելի մի ուժի, —
Խելակորույս քո ոգին
Դո՛ւրս շպրտվեց երկրից հար, —
Եվ թափառեց տարագիր,
Իբրև մեռա՛ծ երգի բառ...

ԺԸ

Վիթիխարի եզ մի ինչպես՝
Սովից տոչոր՝ հանկարծ գա,
Լիզե մի ողջ ոսկի դեզ
Եվ չթողնի հե՛տք անգամ, —
Այդպես աղետն այն զարհուր
Անցավ բարձրիկ քո դաշտից, —
Եվ դաշտն ամբողջ դարձավ մո՛ւր,
Ինչպես արտը՝ երաշտից: —

Ի

Հալածակա՛ն, որպես քո
Ո՛ղջ ժողովուրդն այն պահին —
Խելակորույս քո ոգով
Չարվեցի՛ր դու Մահի...
Ո՛չ. — չմեռա՛ր այնժամ դու,
Այլ սարսափից խելագար՝
Երազեցիր դառնալ տուն,
Որ աշխարհում էլ չկար...

ԻԱ

Եվ՝ սարսափից խելագար
Ե՛վ զզզված, և՛ բոկոտն
Մահվան սքեմ դու հագար
Եվ սնվեցիր քո ոգով: —

Բայց քո ոգին չքամեց
Եվ չէ՛ր կարող քամել ժանտ
Այն զոհերի մեծամեծ
Արյունը սուրբ ու անչափ...

ԻԲ

Անհնարի՛ն էր, Վարպետ,
Որ քո ոգին ստեղծող
Հղիանա՛ր ու արբեր
Ավյունով ժանտ ու խոցող...
Անհնարին էր, որ քո
Երգի ոգին հանճարեղ
Նաիրական իր երգով
Այնժամ երգեր մի արև…

ԻԳ

Անհանգրվան, ինչպես նոր,
Հալածական Արքա Լիր՝
Սրտում քո՝ սո՛ւրբ մի ցնորք՝
Անէացած մի երկիր, —
Զգեցած մահ ու սարսափ,
Տեսած և՛ ահ, և՛ դժոխք, —
Ինչպես կարող էր անսալ
Ոգին քո կյանք ու ցնորք…

ԻԴ

Քո հին սրինգը գրկած,
Իբրև մանուկ մի ազատ,
Որ դեռ պահում է երգած
Երգերիդ շունչն հարազատ, —
Քո այդ եղեգն երգեցիկ
Հեռու ափեր դու տարար.
Բայց դու երբեք չերգեցիր
Նրանով — ե՛րգ փրկարար...

ԻԵ

Անհանգրվան տարվեցիր
Երկրից. երկիր, որպես մերկ,
Անհայրենիք մուրացիկ,
Որ հացի տեղ — ունի ե՛րգ: —
Բայց չլսեց ոչ ոք քեզ,
Քեզ ոչ մի սիրտ չգթաց, —

Միայն քամին մորմոքեց,
Միայն անձրևն իջավ թաց...

ԻԶ

Եվ ափերում այն օտար,
Ուր քեզ նետեց հողմը սև —
Դու ունկնդիր չգտար,
Իսկ պատահմամբ թե լսեց
Քեզ մի անցորդ կամ մոլոր
Մի ուղևոր հոգնաբեկ, —
Տեսար, որ նույն հողմերով
Քշվածներ են նրանք հեք...

ԻԷ

Նրանք՝ իրենք — տարագիր,
Իրենք՝ և՛ որբ, և՛ անճար—
Ունկնդրում են քո երգին,
Որ երազեն ու տենչան, —
Որ՝ բռնելով քո թելից
Իրենց սրտով կարոտող
Դառնան երկիրն այն էլի,
Գոնե հուշով փարատող…

ԻԸ

Ինչ պիտի տար սրտին քո,
Քո հանճարին որբացած
Նրանց անհող արցունքով
Ցողված ոգիդ նրբաձայն...
Հեռու երկրից քո այն վառ.
Ժողովրդից՝ դարձած հուշ —
Ո՞նց քո ոգին որոտար
Կարոտանքից նրանց ուշ...

ԻԹ

Որքան էլ պի՛րկ նա լիներ՝
Ստեղծագործ քո ոգին —
Ո՞ր դաշտերում նա հիներ
Երգն իր անմահ մորմոքի...
Ա՜խ, ծաղկի սերմն՝ հայրենի
Հող չի՛ հաճախ ճանաչում, —
Բայց սե՛րմն հոգու — միայն իր
Հայրենիքում է աճում…

Լ

Ամայացա՛վ քո ոգին,
Ինչպես անջուր հանդի հող,
Եվ մազերին քո չոքեց
Ձմեռ ու ձյուն անողոք: —
Եվ գետնահար, որպես ծառ՝
Պոկված հողմով կատաղի —
Բեկվեց ոգին քո պայծառ՝
Առանց բույրի ու շաղի: —

ԼԱ

Քո հեռավոր երկրի ջեռ
Արոտների նման ա՛յն,
Որ դարձրեց սև մի ձեռք
Հերկ՝ խորշակյալ և ունայն, —
Խորշակյալ դաշտ դարձավ չոր
Այդպես ոգի՛ քո հնչեղ,
Որ ո՛չ արև կենսաշող,
Ոչ հույսի շող չշնչեց: —

ԼԲ

Հո՛ղ ցանեցիր ու մոխիր
Քո մազերին զառամյալ, —
Եվ՝ հալածված ոսոխից՝
Երազեցիր միայն մահ...
Զառանցանքի մեջ զարհուր
Երազվեցին քեզ հեռվից —
Հրդեհ ու ջարդ ընդհանուր
Եվ գլխատում արևի...

ԼԳ

Ապա խավար իջավ խոր
Եվ հանճարեղ քո ոգում
Փռվեց գիշեր ու ժխոր,
Եվ մտքի մուժ բորբոքուն. —
Եվ տարինե՛ր անցան սին,
Եվ քո ոգին խելագար
Կիզվեց հուրո՛վ այն զազիր,
Մինչև գիշեր վերջին զար: —

ԼԴ

Ո՞վ հայրենի մեր երգի
Հրե հանճար տառապած.
Դու չտեսա՞ր քո երկրի
Արշալույսը փառապանծ...
Իբրև աճյո՞ւն դու եկար,
Իբրև մեռա՞ծ տարագիր, —
Հին դաշնության դու վկա
Եվ առաջին քարակիր…

ԼԵ

Անհանգրվան, ինչպես մի
Տերև, պոկված իր ծառից՝
Քեզ վտարեց մի քամի
Քո հայրենի աշխարհից, —
Եվ քո ոգում՝ հայրենի
Հուշն արյունով նա նշեց —
Զառանցանքով արյունի՝
Հորդած կարմիր մի գիշեր — …

ԼԶ

Ճի՛շտ է, Վարպետ: — Քո ոգուն
Իջած մուժի՛ նման մառ.—
Եվ հալածող մահաթույն,
Եվ խավարի պես խավար, —
Այն օրերում մեր երկրի,
Մեր աշխարհի՛ վրա ողջ—
Իջել էր սև՞ ավերքի
Զարհուրելի մռայլ քո՛ղ…

ԼԷ

Այն օրերին արդեն մեր
Ողջ աշխարհում համարյա՝
Նստե՛լ էր սև, ինչպես նեռ,
Մեր սև ոսոխն հնօրյա, —
Ինչպես բերքի տեղ հանդի՝
Հնձեն թուփեր վարդենի, —
Այդպես մահու գերանդին
Հունձն էր արել արդեն իր: —

ԼԸ

Ո՛ղջ աշխարհում արդեն մեր,
Ծայրեիծայր համարյա

Կենդանի հունտ էր ինչ դեռ
Պարտեզներում հնօրյա, —
Եվ՝ ամենից առաջ՝ ինչ
Բողբոջ ու ծի՛լ էր ոգու՝
Որ շյուղ անգամ էլ չաճի —
Հնձել էր ձեռքն ահարկու: —

ԼԹ

Վերջին հողի վրա լոկ,
Վերջին քարին հայրենի,
Ցցված կղզու նման շոգ՝
Օվկիանում արյունի, —
Վերջին քարի վրա այդ,
Դեռ մնացած անողող՝
Զառանցում էր հուսահատ
Մեր ժողովուրդը՝ դեռ ողջ...

Խ

Զառանցում էր կիսամեռ
Ժողովրդի մեր մի բուռ
Մնացորդը, որ չուներ
Էլ փրկության կարծես դուռ: —
Հորդաներով ամեհի
Շրջապատված ու ողող՝
Տերն էր նաև «հայրենի»
Քշում անդունդն անողոք...

ԽԱ

Ինչպես մարդկանց նավաբեկ՝
Կառչած լաստին մոտեցող —
Ծովահենն է հրում լերկ
Մոլեգնությամբ դեպի ծով. —
Ժողովրդի ինչպես մեր
Բեկորները այդ չնչին. —
«Հայրենական» տերն էր դեռ
Հրում անդունդը վերջին...

ԽԲ

Փորձանքներից հարատև
Արդեն կորած, անուղի,
Այդ շյուղն անգամ մահամերձ
Ժողովրդի ու հողի, —

«Իր» տերերի ձեռքով սև,
Որպես դիակ՝ կրծքին քար —
Պիտի սուզվեր վերջապես, —
Թե փրկությունը չգար…

ԽԳ

Բայց փրկությունը եկավ
Խո՛ր խավարում, ինչպես լույս
Արեգակի հեռակա,
Որ ճառագում է վերուստ…
Որպես հրաշք նա եկավ,
Որպես որո՛տ — շառաչեց, —
Խնդությունից խելագար,
Մի փրկչի պե՛ս փառաճեմ...

ԽԴ

Հեռուներում հյուսիսի
Պայթեց որոտն այդ ահեղ:
Ո՛չ մի ուրիշ Հիսուսի
Դեռ այդպիսի խելահեղ
Խնդությամբ չէր առաջել,
Տառապյալ մարդն իր օրում,—
Ո՛չ մի փրկչի համբավ չէ՛ր
Այդպես շաչել դեռ հեռու...

ԽԵ

Ո՛չ մի փրկիչ աշխարհում
Դեռ չէր եկել այդքան մեծ,
Այդքան զորեղ ու արու,
Այդքան և՛ հաշտ, և՛ աններ: —
Դեռ աշխարհի սկզբից
Մինչև օրերն այս նորոգ —
Չէր տեսել կյանքը փրկիչ՝
Այսքան ատող ու ներող: —

ԽԶ

Դեռ աշխարհ չէր եկել մինչ
Փրկչի գալուստն այս անհուն —
Այսպիսի բիրտ մի փրկիչ,
Այսպիսի սուրբ մի անուն: —
Շա՛տ է տեսել տառապած
Մարդն աշխարհում «փրկիչներ», —

Բայց այսպիսի փառապանծ
Դեռ փրկիչ չէր կյանք իջել: —

ԽԷ

Տառապած մարդն աշխարհում
Փրկիչներ է տեսել բյուր—
Ինչ-որ չարի ու բարու
Տախտակներով ընդհանուր: —
Նրանք եկել են անխախտ՝
Միշտ՝ Աստուծո անունով՝
Բերելու լույս ու նոր բախտ
Զուրկ սրտերին՝ հանուն հոր: —

ԽԸ

Նրանք եկել են սիրո
Ե՛վ տանջանքի, և՛ հլու
Չարչարանքի խոսքերով,
Խոստանալով անմար լույս:
Նրանք եկել են խոնարհ,
Փշյա պսակ ձեռներին,
Իբրև անպարտ մի զրահ՝
Բախտ կռելու մի վերին: —

ԽԹ

Նրանք եկել են բոլոր
Հոգնածներին, խեղճերին,
Հոգիներին այն մոլոր,
Տառապանքի լճերից
Մաղձ ու լեղի լոկ խմող
Թշվառներին տալու զենք, —
Որպեսզի կյանք նրանք նոր
Եվ նոր բերկրանք երազեն: —

Ժ

Եվ՝ աշխարհի սկզբից
Մինչև օրերը ներկա —
Ինչքան եկել է փրկիչ՝
Մորուքը կարճ, թե երկար, —
Դեմքով կարմիր, թե դեղին
Կամ սպիտակ, անգամ սև,
Նույն խորհուրդով լոկ հղի՝
Նույն պատգամն են բերել — «Սե՛ր»:

ԾԱ

«Սե՛ր»... — Մարդկության անցյալ ողջ
Պատմության մեջ, — մարդկության
Երազներում՝ այն դողդոջ —
Կապկանման մարդու լայն
Գազանատիպ բերանով
Հնձած խոսքից առաջին,
Մինչ «հանճարեղ մարդը նոր»
Նույնն են կրկնում բառացի...

ԿԳ

«Օ՛, եղբայրներ կարոտյալ,
Եվ գոսնացած, և՛ բորոտ,
Դուք չեք տեսնում լուսափայլ
«Կյանքն» աշխարհում այն նորոգ: —
Թե վիճակված է անհուն
Երջանկություն երկնային, —
Իսկ նրանց՝ վի՛շտ անանուն
Ընկան երբ գիրկը մահի...» —

ԿԶ

«Ուրեմն դո՛ւք եք կյանքի
Երանյալներն իսկական, —
Ով զավակներ զրկանքի,
Որ տառապել եք այնքան, —
Օվկիանի պես անեզր
Սիրով խոնարհ ու ներող, —
Սիրեցեք սև շղթաներ
Կռողներին ձեր բոլոր…: —

ԿԷ

Ինչքան ուզում են նոքա՝
Այդ կեսարներն անբարիշտ՝
Խարույկներով բորբոքած՝
Ողջակիզեն ձեզ ընդմիշտ, —
Միևնույնն է սիրեցե՛ք
Դահիճներին ձեր այդ դուք, —
Չի եղբայրներն են ձեր հեք,
Ձեր զոհերն են նոքա կույր...: —

ԿԸ

Ձեր եղբայրնե՛րն են անգետ
Մեծատուններն այս կյանքի,
Որոնք պիտի ժառանգեն
Երկնային փառքը անգին...
Որքան կյանքում այս նոքա
Վայելեն ու հղփանան, —
Այնքան կյանքում ապագա
Պիտ հալածվեն ու տոկան...»: —

ԿԹ

«Գանահարեն թող նոքա
Եվ հալածեն հիմա ձեզ, —
Եվ կրակով բորբոքած
Կիզեն ձեր կուրծքը հրկեզ,
Միևնո՛ւյն է, սիրեցե՛ք
Ստրուկներին դուք այդ ծույլ, —
Զի ճնշվածներ են լոկ հեք,
Եվ զոհեր են նոքա կույր...» —

Հ

Օ՛, եղբայրնե՛ր կարոտյալ
Ե՛վ գոսնացած, և՛ բորոտ, —
Եկեք սրտով ձեր օծյալ,
Եղեք ոգով համբերող, —
Քանզի կյանք եք միայն դո՛ւք.
Կյանքի տերերն իսկական
Եվ ոչ ոգով այն ստրուկ՝
Բորոտյալներն իսկական» —

ՀԱ

«Օվկիանի պես անեզր
Սիրով խոնարհ ու ներող —
Սիրեցեք ձեզ շղթաներ
Կռող ձեռքերն այդ գերող...
Քանզի նշված են նոքա
Նիշով անդարձ մի մահի, —
Իսկ դրախտում ապագա
Ձեզ կա վայե՛լք երկնային...»: —

ՀԲ

Ո՛վ, տառապյալ մարդկության
Հազարամյա պատմություն, —

Ո՞ր անդունդում դու գտար
Այս թույնի պես մի սև թույն, —
Ի՞նչ չարչարանք է անել
Իր թույնը սև քեզ նյութել,
Որ երազանքն այս անել
Տարիներով քեզ դյութեց...

ՀԳ

Եվ — բյո՛ւր անգամ, որ կրկին՝
Բյուրապատիկ խոցված սիրտ, —
Անգոյության եզերքից
Ընկած եզերքը այս բիրտ, —
Ինչ հալածանք դու զարհուր
Այս աշխարհում կրեցիր,
Ո՞ր երազանքն այս հանուր
Քո ընդերքում սնեցիր...: —

ՀԴ

Եվ չգիտեմ անգամ ես,
Թե պատմության մեջ ամբողջ —
Որքան էլ սև ու հրկեզ,
Որքան էլ մութ անողոք, —
Եղե՞լ է մի ավելի
Հիմարական զառանցանք, —
Քան երազաքն այս՝ վերին
Բախտ խոստացող ու բերկրանք...

ՀԵ

Ինչպե՞ս է մարդը չարքաշ,
Որ երկրային է անչափ, —
Հավատացել այդ «առկախ»,
Ցնորքին սուտ ու անշահ, —
Ի՞նչպես է նա անհաշիվ
Դարե՜ր, — և ոչ լոկ «հոգին»,
Այլև իր կյանքն ու կաշին
Տվել այդ սին ցնորքին...

ՀԹ

Հին երազին իր ընտել
Տառապյալ մարդն աշխարհում
Սպասում էր փրկչին դեռ՝
Սին հույսերով զարդարուն,

Երազում էր, որ կգա
Նա հեզությամբ ու սիրով,
Սակայն ահեղ նա եկավ՝
Կայծակներով ու հրով:

Զ

Ոչ Հիսուսի պես խոնարհ,
Ոչ Բուդդայի նման հեզ,
Մրրկաշունչ նա եկավ,
Որոտաձայն ու հրկեզ:
Եկավ ձեռքին բռնած իր
Ոչ թե «սիրո» տախտակներ,
Այլ — բռնություն անպատիր,
Ատելություն մարտատենչ,

ԶԱ

Ոչ թե «ներման» ու «գթի»
Սին պատգամներ նա բերեց,
Այլ փրկարար որոտի
Եվ հարվածի աներեր:
Առ իշխաններ ու արքան
Կյանքի տերերն այն բոլոր —
Հռչակեց ոխ արնակամ,
Ատելություն արնհոլով:

ԶԲ

Շառաչելով նա եկավ,
Որոտալով որպես հողմ,
Մոլեգնությամբ խելագար,
Հուր սփռելով ամեն կողմ:
Տախտակներին նրա հուր
Մի պատվիրան կար գրած՝
«Դաշտերին — դաշն ընդհանուր»,
«Պալատներին — պատերազմ»:

ԶԳ

Ո՛չ հնազանդ ճորտի «սեր»,
Ո՛չ հեզություն ու ներում,
Հատուցման հուր հրդեհեց
Նա ճորտացած սրտերում:
Մե՜ծ պայքարի նա կոչեց,
Պատերազմի աններում,

Որ խնդություն բողբոջե
Զրկվածների սրտերում:

ՁԴ

Բերքն ինչպես է հնձում իր
Դաշտի մշակն եռանդուն,
Այդպիսի մեծ մի հնձի
Կոչեց նա հար ու անդուլ,
Հարուստների, տերերի
Հունձք հոչակեց վերջնական,
Որ ոչ մի ուժ չբերի
Էլ նրանց ետ հավիտյան:

ՁԵ

Եվ չնայած որ չուներ
Իր շողշողուն ճակատին
Փրկիչն այն նոր ոչ անէ
Սիրո պսակ մահատիպ,
Եվ ոչ կնիք նա ուներ
Հեզահամբույր նոխազի,
Բայց չէր, եկել փրկիչ դեռ
Աշխարհ — այսքա՛ն գեղեցիկ...

ՁԶ

Թավալգլոր որպես մի
Ձյունագնդակ կրակե,
Որին քշում է քամին
Հրաբորբոք ու հրկեզ —
Գլորվում էր հյուսիսից
Դեպ արևմուտք ու հարավ,
Դեպ Էվերեստ ու Մասիս՝
Դեպ արևելքը ծարավ: —

ՁԷ

Շառաչելով որպես հողմ,
Աչքերում հուր փրկարար՝
Շաչեց նա բորբ, անողոք
Կյանքի ծովում մի վարար, —
Արդեն ահով ողողված,
Արդեն հառնած մեր հողին
Իբրև արև շողշողաց,
Իբրև փարոս և ուղի…

ՁԸ

Եվ փրկարար, որպես մի
Հրե հրաշք կենսաբեր,
Նա (խոյացավ ամեհի),
Տվեց (հարված վերջնապես),
Մահվան անէ կապանքից, —
Մեր բազուկներն ազատեց, —
Եվ բերկրանքի ու կյանքի
Նոր մի երկունք մեզ պատեց...

ՁԹ

Բորբ հառնեցինք մենք նրա
Հրե շնչին ընդառաջ
Որպես արև հուրհուրան
Հառնած հոգի մի վառած: —
Հառնած ոգով հնօրյա
Եվ ավյունով դարավոր `
Ընդունեցինք մենք նրան,
Իբրև փրկչի փառավոր:

ՂԱ

Լենինյան շունչն էր այդ բորբ,
Որ որոտի պես շաչեց,
Մրրիկներում հեռավոր՝
Լեզուների պես բոցե. —
Մղված ոգով նրա մեծ,
Այդ ժողովուրդն էր ազատ,
Որ նորոգ կյանք տվեց մեզ
Եվ հայրենիք հարազատ: —

ՂԱ

Մեզ հայրենի տվեց հող,
Հերկ՝ ձեռքերով մեր հերկած, —
Դաշտ՝ արգանդում իր պահող
Հանճարի հունտն արևկա.
Հանճարի հուրը այն որբ.
Որ դարերից մինչև մեր
Այս օրերը հրաբորբ
Երգն է երկնել մեր անմեռ…

ՂԲ

Հրահանգեց մեզ ապա
Մեր առաջնորդն հանճարեղ,
Որ ազգերի փառապանծ
Սուրբ դաշնություն մենք կռենք:
Որ ժողովուրդն ամեն մի,
Իր հանճարով ինքնագույն
Կերտի երգն իր հայրենի
Անկրկնելի ու մաքուր: —

ՂԳ

Եվ օրերում քո տեսած
Ժողովուրդները այս ճորտ —
Այսօր երկրում հարազատ
Կյանքն են կռում իրենց նոր: —
Դարձած մի մեծ ժողովուրդ՝
Բազում ազգերն այն անցյալ՝
Նույն երկնքի ներքո լուրթ
Կերտում են երգ մի պայծառ...

ՂԴ

Կերտում են երգ մի պայծառ
Ազգությունները բոլոր,
Իբրև մի հաղթ ծիածան
Բազմանման գույներով…
Ծիածանում մեր այդ սուրբ
Ամեն մի ազգ միայն յուր
Գույնն է հյուսում ու հյուսում
Նույն ծիածանն ընդհանուր...

ՂԶ

Եվ եզերքում մեր նորոգ,
Հայրենիքում ահա մեր —
Արդ ողջունում ենք սիրով,
Քո վերադարձը, Վարպետ: —
Իր տարագիր հանճարի
Վերադարձն է տոնում արդ
Ժողովուրդը քո արի
Հայրենիքով իր անպարտ: —

ՂԷ

Հազարամյա ճո՛րտ անհող,
Իմ աներկիր ժողովուրդ,

Էլ չկա քեզ կործանող
Ոչ մի դժնի, խեղդող ցուրտ. —
Եվ հնամյա իր երգով
Գիրկն է դառնում քո անմահ —
Ահա քո շուրջը երգող
Քո ձայնապետը անմահ: —

ՂԸ

Վերադարձել է ահա
Քո հայրենիքը ազատ,
Մեռած սրտում քո պահած
Նրա փոշին սրբազան.
Գուրգուրեցի՛ր այն խավար
Զառանցանքում քո անդուռ,
Բայց չբացվեց քեզ համար
Դարձի շավիղ դեպի տուն…

ՂԹ

Հալածական երգ մեր հին,
Հանճարեղ ձայն դու մեր որբ, —
Դեմքիդ կնիքը մահի,
Բայց միշտ անմահ ու միշտ բորբ. —
Չորս ծայրերում աշխարհի
Ինչքան եղար դու խաչված,
Մինչ հայրենիք դառնայիր՝
Նոր պայքարամ նվաճված…

Ճ

Օ՜, հնամյա դու մեր հույս՝
Ոգու զրույց դու մեր հին,
Որքան զրկանք ու կորուստ
Եվ լուսե զոհ մենք բերինք —
Մինչ այս դարձի համար քո,
Եվ հայրենի, և ազատ—
Այլ պայքարով ու երգով
Հիմնեցինք հող հարազատ: —

ՃԱ

Եվ չգիտեմ ես՝ արդյոք
Կա՞ աշխարհում մի այլ երգ,
Որ քո երգի նման խոր,
Եվ արնաթոր, ինչպես վերք —

Ժողովրդի սրտում իր
Տարիներով որբացած
Լինի այնքա՛ն մտերիմ,
Որքան ուղին՝ նոր բացած: —

ՃԲ

Եվ չտեսար, ո՛վ երգիչ,
Այս հայրենիքը նորոգ,
Որն իբրև մայր ամոքիչ
Արևային իր սիրով
Բուժեր քո սիրտը խոցված
Սև տեգերով անցյալի,
Դափնեպսակ դներ պարզ
Քո ճակատին պանծալի:

ՃԳ

Իբրև աճյուն դու դարձար
Քո հայրենիքը, որ քեզ
Հուշ էր թվում որբացած,
Մեռած զրույց, որ որպես
Արդեն անդարձ, կորած հեք,
Ննջած մի այր՝ դրած հող, —
Չի՛ բարձրանա էլ երբեք,
Որ արևի ըմպե շող...

ՃԴ

Արդյոք կարո՞ղ էր քո սուրբ,
Բեկված հոգին երազել,
Որ դառնալու ես մի օր
Քո հայրենիքը վսեմ,
Որ պիտի շուրջդ բուրի
Սերն ու զգվանքը մեր այս
Եվ Չարենցը համբուրի
Քո շրթունքները մեռած…

ՃԵ

Բայց հայրենի երկրում քո,
Մայր-քաղաքում նրա հին,
Պատվանդանի վրա նոր
Եվ սրտերի վրա հիր՝
Ահա մարմինը քո սուրբ,
Իբրև մասունք զմռսած՝

Բարձրացել է վեհաշուք
Եվ բարձրաբերձ՝ իբրև սար…

ՃԶ

Սեր է բերել և գորով
Քո ժողովուրդն ահա քեզ —
Քո հնօրյա երգերով
Օրորելով սիրտդ կեզ. —
Սիրտդ տանջանք տեսած լոկ
Եվ չարչարանք կրած հեզ, —
Ահա քեզ փա՛ռք երգելով՝
Այնքան հպարտ ենք արդ, տե՛ս…

ՃԷ

Կարոտով խոր իբրև վերք
Եվ երկյուղով սրբազան —
Խոնարհվել եմ ահա ես
Աճյունիդ դեմ երգաձայն,—
Սիրտն ու հոգին իմ ահա
Նույն ափսոսանքն են հորդում՝
Օ՜, իմ անդարձ ննջած հայր,
Որ չտեսար քո որդուն…

ՃԹ

Կարծես տեսել եմ ես քեզ,
Մանկությունից մինչև մահ
Դեգերել եմ կարծես ես
Ուղիներում այն ամա: —
Բռնած քո ձեռքը դողդոջ,
Հանուն ջրի ու հացի՝
Դեգերել եմ որպես գող՝
Կույր իմ հոր հետ մուրացիկ…

ՃԺ

Այդպես բռնած ձեռքը ծեր
Հալածական իմ հոր՝ ես
Հաց եմ լեղի մուրացել
Հեռուներում աղեկեզ. —
Ցուրտ բակերում ժամերի
Հիվանդ հոր հետ իմ պառկած
Երազել եմ ես մեր հին
Տունն հեռավոր, ինչպես հաց…

ՃԺԱ

Եվ հեռավոր մի ժամի
Պատերի տակ ցրտահար՝
Ես առաջին անգամ ինձ
Երջանիկ եմ տեսել, հա՛յր: —
Հա՛յր, առաջին անգամ ես
Կյանքում ժպիտ տեսա քո
Շրթունքներին, երբ որ քեզ
Մի բաժակ թեյ տվի գոլ...

ՃԺԲ

Հետո փակել եմ հոգնած
Քո աչքերը՝ ընկած խոր, —
Եվ քարերին այն պառկած՝
Ննջել կողքին մեռած հոր: —
Առավոտյան իմ մռայլ,
Իմ մեռած հոր դեմքին ցուրտ —
Երանության անայլայլ
Ժպիտն էր նույն հանգչում լուրթ...

ՃԺԳ

Եվ հողմերին հեռավոր
Տալու մարմինը քո, հայր,
Կարո՞ղ էի ես արդյոք
Զառանցանքում անգամ վառ —
Օ՜, երազել անգամ լույս
Վերադարձիդ մասին այս, —
Որ հայրենիք ես գալու,
Իբրև աճյուն զմռսած...

ՃԺԴ

Մի՞թե իրոք դու — այն բիրտ
Ծերունին չես ննջած հար,
Որ անունով միայն իր
Կոմիտաս չէր, այլ Աբգար: —
Ինչպես մեռած մարգարե
Քարաքանդակ իր նաշում,
Մի՞թե դու չես երկարել
Այն իրիկվա մշուշում...

ՃԺԵ

Եվ մատները այն դողդոջ,
Մոմե մատներն այն բարակ,
Որ փակեցին մի օր քո
Հոգնած կոպերն անկրակ՝
Չէի՞ն արդյոք այն իմ խեղճ
Մատները որբ դեռ գերի
Նվագների տրտմաշեշտ
Եվ տերյանյան երգերի...

ՃԺԶ

...Իբրև մեռած մարգարե՝
Պառկել էր նա այդպես միշտ,
Դեմքը մի քիչ երկարել
Եվ խաղաղվել էր ընդմիշտ: —
Իսկ անդագաղ նրան երբ
Իջեցրինք գերեզման. —
Խաղաղությամբ նայեց վեր
Եվ արքայի էր նման...

ՃԺԷ

Եվ վայրկյանին ահա — այդ,
Երբ որպես սուրբ մի նաշից,
Արքայական վեհությամբ
Նայեց նա խեղճ իր փոսից, —
Ես հասկացա, որ այդ խիստ,
Այդ մռայլ մարդն աշխարհում
Բարի մի հայր էր միայն
Եվ տխրությունն էր սիրում...

ՃԺԸ

Այն տխուր մարդն էր, որ իր
Մռայլ տեսքի տակ ուներ
Մի անսահման սիրող սիրտ
Եվ երազի հեռուներ, —
Որ ահաբեկ իր կյանքում
Ոչ մի անգամ չժպտաց,
Բայց գիտեի, որ հոգում
Ունի հուրեր մշտակայծ...

ՃԺԹ

...Տխուր մի մարդ էր նա լոկ
Եվ երազող ուներ սիրտ,

Ուներ ոգի համբերող,—
Դեմքն էր միայն նրա բիրտ: —
Դեմքն էր նման փականքի,
Որ նա երբեք չբացեց. —
Ահաբեկվել էր կյանքից
Եվ զրկանքից քարացել:

ՃԻ

...Ո՛չ մի անգամ չժպտաց
Նա հոգնատանջ իր կյանքում —
Տեսա ամպի պես մթնած
Ես նրա դեմքը մանկացուց: —
Գոց մնաց դուռն երկաթե
Մինչև վայրկյանը մահվան, —
Եվ միայն մայրս գիտեր,
Որ այնտեղ սերն է պահված:

ՃԻԱ

...Չհամբուրեց աշխարհում
Զավակներին նա երբեք, —
Եվ ժամերով նստած լուռ՝
Չպատահեց, որ արբեր: —
Մարդու հանդեպ չարացած՝
Ո՛չ խոհերի, ո՛չ հացի
Նա չունեցավ բարեկամ,
Լռությունից իր բացի:

ՃԻԲ

...Եվ տարիներ միայն վերջ՝
Արդեն բեկված, արդեն լուրջ՝
Նոր հասկացա միայն ես,
Երբ նրա պես դարձա լուռ —
Որ երգերում բոլոր իմ
Եվ խոհերում այնքան վեհ՝
Ինչ կա անհուն ու խորին,
Այդ միայն նա՛ է տվել...

ՃԻԳ

...Որ իր ամբողջ կյանքում լուռ
Ի՛նչ չէր վատնել նա երբեք,
Ի՛նչ չէր այրել իբրև հուր
Եվ չէր երգել իբրև երգ,—

Երազներում իր տխուր,
Պահած անգամ իրենից. —
Թաքցրել է այնքան խոր,
Որ իբրև գանձ բաշխի ինձ...

ՃԻԴ

Կա տառապանք անվեհեր
Նաիրական քո դեմքին՝
Խոհն աշխարհի այն ավեր,
Շողն հանճարի աներկիր...
Նա էր այդպես պառկել վեհ
Մի օր հողե իր փոսում —
Որպես վկա հանճարեղ՝
Հազարամյա մի նաշում…

ՃԻԵ

Եվ հիրավի դու անմահ
Հայրն ես երգի մեր համայն,
Որ տարագիր գտած մահ՝
Տուն ես դարձել արդ միայն: —
Դու թաղվելու ես եկել
Երկրում քո նոր, որ արդեն
Դարձել է հաշտ ու հզոր
Եվ քեզ բերում է վարդեր...

ՃԻԶ

Կարդում եմ ես քո հոգնած,
Մագաղաթյա կոպերին
Եվ ճակատի վրա բարձր —
Մտերմություն մի վերին: —
Նույն մտորումն ու անհուն
Նաիրյան խոհն հարազատ, —
Նույն երազանքն անանուն՝
Հազարամյա՛ երազած: —

ՃԻԷ

Ճգնավորի դեմքով ծեր՝
Մարտիրոսի դեմքով սուրբ, —
Օ՛, ուրվական դու վսեմ,
Թափառական մեր Հիսուս, —
Ճգնավորի ճակատով
Եվ մորմոքով վկայի՝

Նո՛ր ես հառնում ահա դու
Իբրև վկա ներկայի...

ՃԻԸ

Օ՜, վարդապետ անվեղար.
Որ վայրերում վրդովիչ
Ձայնի հովի՛վ լոկ եղար՝
Ձեռքիդ սրինգ մի թովիչ:
Դու աղոթքի փոխարեն
Ձայն խնկեցիր միայն վեհ —
Դեպի երկինք, որ բյուրեղ
Ժողովրդիդ սիրտն էր մեծ...

ՃԻԹ

Ո՛վ նաիրյան հանճարի
Հազարամյա դու տեսիլ, —
Որքան զրկանք ու չարիք
Դու աշխարհում կրեցիր. —
Մարտիրոսյալ հավիտյան.
Որպես անհող մարգարե —
Դու հանգրվան չգտար
Կյանքում — դարեր ու դարեր: —

ՃԼ

Եվ միայն արդ, Նահապե՛տ,
Գիսախռիվ, կորացած,
Հազարամյա հոգնաբեկ
Թափառումից քո դարձած՝
Պիտի հառնի շողշողուն
Հանճարիդ հուրն այգաբեր,—
Եվ խոր հանգչեն մեր հողում
Քո ոսկորներն հոգնաբեկ...

ՃԼԱ

Իբրև աճյո՛ւն դու դարձար
Քո հայրենիքը ազատ, —
Իբրև մասունք մի պայծառ,
Իբրև նշխար հարազատ, —
Եվ հայրենի քո հողում,
Հին հանճարի իբրև սերմ՝
Կբարձրանա՜ նա բեղուն,
Երկրիդ ցողով ցողված ջերմ: —

ՃԼԲ

Իբրև աճյուն դու դարձար, —
Բայց հայրենի երկրում քո
Հանճարիդ հունտն հրացայտ
Կբարձրանա՛ նոր բերքո՛վ: —
Բեղմնավորված սրբազան
Քո աճյունով և անեզր
Արեգակով մեր կիզած՝
Հողն հազար ծի՛լ կտա մեզ:

ՃԼԳ

Մե՛ծ ցնծություն է հիմա
Մեր սրտերում, ո՛վ երգիչ: —
Տոնն է երգի իր անմահ
Տոնում հառնած մի երկիր: —
Դարձի համար քո այս վեհ,
Վերադարձի քո անմահ —
Կյա՛նք ենք կերտել արդեն մենք
Ե՛վ արևոտ, և՛ անմար: —

ՃԼԳ

Վերադառնա՛ն պիտի դեռ
Հազա՛ր սրտեր տարագիր,
Զարհուրելի հեռուներ
Տարված հողմով հարաբիրտ: —
Իբրև սրտե՛ր կենդանի,
Իբրև աճյուն կամ մասունք —
Սրտեր քանի՛, դեռ քանի՛ —
Հողն են իրենց երազում...

ՃԼԵ

Վերադառնա՛ն պիտի դեռ
Հայրենի հողը բուրյան՝
Իբրև նորո՛գ երկրի տեր՝
Ե՛վ Թումանյան, և՛ Տերյան: —
Շիրիմներից իրենց որբ
Իրենց դարձին են նայում
Ե՛վ Դուրյանի սիրտը բորբ,
Ե՛վ Մեծարենցն հմայուն: —

ՃԼԶ

...Միջագետքից — Օրենսբուրգ,
Հելեսպոնտից մինչև Վան, —
Ո՞ր աշխարհում արդյոք սուրբ
Չկա մասունք նահիրյան...
Ո՞ր ափերով աշխարհի
Քո մերկ ոտքերը չանցան, —
Օ՜, նահիրյան հանճարի
Հազարամյա Սերմնացան...

ՃԼԷ

Պիտի դառնան դեռ հերթով
Տարագիրներն այդ անթիվ, —
Որ աճյունով կամ սրտով
Դառնան աղբյուր եռանդի: —
Կենդանի սիրտ, թե աճյուն. —
Իբրև հունտեր հանճարեղ,
Բեղմնավորե՜ն պիտի սուրբ
Հայրենի հողն արդ իրենց: —

ՃԼԸ

Իսկ դո՜ւ, ոգի՜ երգի մեր,
Վերադարձած արդեն տուն, —
Օ, սրբազա՜ն բերքի պես
Ընդունեց սիրտը խնդուն.—
Ցնծությունից խելագար
Ժողովրդի սիրտը քեզ, —
Իբրև աճյուն դու եկար,
Բայց իբրև կյանք ընդունեց: —

ՃԼԹ

Ինչպես երգերը քո ջերմ,
Ժողովրդի սիրտը մեծ
Իբրև բարիք, իբրև սերմ
Մի ոգեղեն ընդունեց, —
Քեզ կընդունե այդպես հար
Հայրենի հողն արդարև —
Ե՜վ քո աճյունը արդար,
Ե՜վ քո ոգին հանճարեղ: —

ՃԽ

Թո՜ղ ամոքվի՜ վերջապես
Հազար սրով զարկած խոր —

Սիրտդ հողում մեր հրկեզ,
Որպես գրկում սիրած մոր: —
Որպես վսե՛մ ողջակեզ՝
Հոգնած աճյունը քո թո՛ղ
Գտնի հանգի՛ստ վերջապես —
Եվ հայրենի դառնա հող…

ՃԽԱ

Եվ հայրենի այդ հողից,
Չանցած գարուն մի քանի —
Կելնեն շքե՛ղ և ուղիղ
Երգի շյուղե՛ր կենդանի: —
Եվ շշունջում երգեցիկ,
Հնչեղ երգում նրանց խոր —
Կապրի հանճարը քո ջինջ՝
Անմահ երթի՛ ելած նոր...

ՃԽԲ

Կխաղաղվի՛ վերջապես
Խոնջած աճյո՛ւնը քո հար —
Դարձած մոխի՛ր կենսաբեր,
Դարձած ավյո՛ւն, դարձած քար: —
Անէացա՛ծ, սրբացած
Կապրի ոգիդ հմայող՝
Դարձած ելնո՛ղ երգի ձայն —
Եվ հայրենի՛ դարձած հող...

30 — V — 1936

30 — XI — 1936

(Ուշ գիշեր)

**ՆԱՎՋԻԿԵ**

Արփիկին, Արփիկին,
Իզաբելլային
Իմ ամենաչքնաղ երկը
Ե. ՉԱՐ. 1936.21. IX.

**ՀԻՆ ՆԱՎՋԻԿԵՆ**

I

Նայադների՞ նման, նայադների՞ նման
Կարոտներիս ձայնով կանչում է ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք
Եվ թողնելով մորմոք և կորստի կսկիծ...

Մանկությունից անդարձ՝ իմ օրերում անցած,
Տարիներիս կարմիր ավազի մեջ —
Ինձ թվացել է միշտ, որ կարոտիս կառչած՝
Ինձ սպասում է իմ Նավզիկեն...

Նախ՝ կարոտի նման դեռ անծանոթ կյանքի,
Բիլ ծովերում նավող նավակի մեջ՝
Իբրև ցնորք գայթող, կամ երազանք անգին —
Հեռուներից կանչեց իմ Նավզիկեն:

Եվ օրերում ապա, տարիներում անդարձ,
Վայրկյաններիս կարմիր ավազի մե՛ջ —
Երազեցի ընդմիշտ, թե կարոտիս կառչած՝
Ինձ սպասում է իմ Նավզիկեն...

Մերթ աղջըկա նման, մերթ մանկական տեսքով,
Մերթ որպես կին՝ տեսած երազի մեջ, —
Մերթ իբրև կույս անեղծ, մերթ մի Մանոն Լեսկո —
Պատկերացել է ինձ — իմ Նավզիկեն:

Մերթ սպիտակ, որպես մարմարոնյա արձան,
Մերթ միկենյան կավե մի վազի պես, —
Մերթ եբենյա մարմնով եգիպտուհի դարձած՝
Հմայել է հեռվից իմ Նավզիկեն: —

Մերթ կոնքերով ողորկ, որպես ձուլած արծաթ,
Մերթ՝ որպես էգ մի օձ երազի քեզ՝
Մերկ, աչքերով կանաչ, մի կին դարձած —
Անեղծ մի կույս կարծած իմ Նավզիկեն:

Մերթ շորերով շրշուն, մերթ ծածկոցով ծածան,
Մերթ՝ լուսնային շղարշ հագածի պե՛ս, —
Ամբողջովի՛ն մերթ գոց, մերթ մերկացած՝
Կնությունը բացած — իմ Նավզիկեն...

Նա մերթ կանչել է ինձ սրինգային ձայնով,
Մերթ՝ քնարի քնքուշ նվագի պես, —
Մերթ՝ դարերո՛վ ծանոթ, մերթ՝ միայն նո՛ր
Ինձ հարազատ ձայնով — իմ Նավզիկեն:

Վերելքներում անծայր, հովիտներում այն ցած,
Կամ ծովափնյա ոսկե ավազի՛ մեջ, —
Մերթ շառաչում ծովի, մերթ լճերում անձայն —
Ես լսել եմ քո քայլքը, իմ Նավզիկե՛:

Ես սպասել եմ քեզ յուրաքանչյուր վայրկյան,
Եվ երազել, որ երթըս երազվի քե՛զ, —
Յուրաքանչյուր վայրում, յուրաքանչյուր վայրկյան,
Կնոջական ցնո՛րք իմ, իմ Նավզիկե...

Ե՛վ հանճարեղ երգում, և՛ հանճարեղ գրքում՝
Ե՛վ հանճարեղ ամե՛ն մի կտավի մե՛ջ, —
Եվ հյուսիսում, և հին Արևելքում,
Եվ հարավում դեղին, իմ Նավզիկե՛:

Շրջադարձում, երթում, քայլափոխում ամե՛ն.
Հսկող հսկա դեպքի, կամ դավի պես, —
Ես սպասել եմ, որ կամ դու, կամ ես
Կճանաչենք իրար, իմ Նավզիկե՛:

Յուրաքանչյուր բացվող առավոտվա, կամ իմ
Յուրաքանչյուր տեսած երազի մեջ, —
Անգամ մի դուռ է երբ իմ դեմ բացում քամին—
Հանդիպումդ եմ հսկում, իմ Նավզիկե:

Մանկությունից իմ լուրթ — մինչև կեսօրն իմ թեք,
Իմ օրերում՝ անցած երազի պես, —
Ես սպասել եմ, որ — ահա կելնես իմ դեմ,
Ամենօրյա ցնորք իմ, Նավզիկե՛:

Եվ իմ գրքերն ամեն, և իմ երգերն անմեռ,
Եվ բորբոք հուրն իմ այս ծարավի կեզ, —
Ի՛նչ որ արել եմ ես, ի՛նչ անելու եմ դեռ —
Քեզ գտնելու համար է, իմ Նավզիկե...

Եվ մինչև օրն այն սև, մինչև դառնա նսեմ,
Մինչև ավյունս ամբողջ նվազի — քեզ
Ես փնտրելու եմ իմ ուղիներում լուսե,
Անհասնելի՜ իմ սեր, իմ Նավզիկե՛...

Եվ պոետի հոչակ, և՛ փառքի տենչ խորին,
Եվ արնահամ երգի, երազի սե՛ր, —
Ես տենչացել եմ լոկ հավատալով, որ ինձ
Դեռ սպասում ես դու, իմ Նավզիկե...

Որ վարդերի՛ս անդարձ, տարիներիս հնձած,
Անդառնալի ցնդած երազի տեղ —
Իմ օրերի վերջում, իբրև անհուն ընծա —
Ինձ ժպտալու ես դու, իմ Նավզիկե...

Նայադների՛ նման, նայադների՛ նման,
Կարոտներիս ձայնով կանչել ես ինձ, —
Խոստանալով սիրո անհատնելի հմայք
Եվ թողնելով լոկ մահ և կորուստի կսկիծ...

II

Կնոջս՝ Արփենիկ Չարենցի հիշատակին

Նայադների՛ նման, նայադների՛ նման,
Կարոտներիս ձայնով կանչեց նա ինձ, —
Նա խոստացավ սիրո անհատնելի հմայք
Եվ ինձ թողեց միայն մահո՛ւ կսկիծ...

Նաժիշտներով իր յոթ շրջապատված՝
Նաժիշտներով սիրո և ցավի կե՛զ, —
Իբրև հոժա՛ր կամքով մահապարտված՝
Ընդունեց սերն իմ սև — իմ Նավզիկեն...

Կարոտներիս ծովի կղզիներում անցած
Դու իմ կղզին եղար միակ ոսկե, —
Բայց սև աղետ դարձավ և մահացու հանցանք
Քեզ համար սերն իմ սև, իմ Նավզիկե…

Եվ վարդագույն, ինչպես մի վարդագույն մարջան,
Կարոտներիս կարմիր ավազի մեջ —
Դու ժպտացի՛ր, անցար, աներևույթ դարձար,
Օ, մահացու իմ սեր, իմ Նավզիկե...

III

...Արդեն նահ՛վ դարձած նայադների նման,
Նայադների նման քնքուշ ձայնով
Խոստանալով զարո՛ւն ու գարնանային հմայք —
Այն ո՞վ է ինձ կանչում, այն ո՞վ...

Ինչպես Ուլիս՝ տրված կարոտներիս կայմին՝
Նայադների չքնաղ երգի՛ն գերի՝
Ամբողջովին տրված իմ հուշերի ձայնին,
Ես մոտեցա կրկի՛ն այն ափերին...

Մի՞թե կրկին իբրև վերադարձող Ուլիս՝
Մի անհնար, չքնաղ երազի մե՛ջ —
Պիտի տեսնեմ կղզի՛ն այն, ուր սիրով լի՝
Ինձ հանդիպեց մի օր — իմ Նավզիկեն...

Նո՛ւյն նայադներն ահա — և կախարդիչ նույն երգը,—
Բայց ավելի՛ անհուն ու հմայիչ...
Եվ մոտենում է նո՛ւյն կախարդական եզերքը՝
Բայց... ինչո՞ւ է թվում նա ամայի...

Նո՛ւյնն են ափերը լուրթ, — և պտույտի ելած
Նո՛ւյն աղջըկներն ահա, — և Նավզիկեն...
Բայց նա նայեց անթարթ և աչքերում ցոլաց
Անդառնալի անցածը — երազի պես...

Եվ սուզվելով, ինչպես մի վարդագույն մարջան,
Տարիների կարմիր ավազի մե՛ջ՝
Անվերադարձ անցավ և զառանցանք դարձավ —
Մանկությա՛ն պես անցած — իմ Նավզիկեն...

IV

Նայադների՛ նման, նայադների՛ նման,
Կարոտներիս ձայնով կանչեցին ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք,
Եվ թողնելով միայն — մահո՛ւ կսկիծ:

Արկածներիս ծովի կղզիներում անցած
Ինձ հանդիպեց քանի՛ Նավզիկե,
Որ հեռացավ, անցավ իր կարոտին կառչած՝
Իբրև ուրի՛շ Ուիլս, ուրիշ սեր…

Հեքիաթային, կապույտ իր եզերքին կառչած՝
Իբր ուրիշի սիրո մի Նավզիկե —
Իր Ուլիսին հսկող արքայադուստր դարձավ՝
Կարոտներիս կարմիր ավազի մեջ...

Եվ կարոտիս կառչած արքայադուստր կարծած
Քանի, քանի՛ չքնաղ Նավզիկե —
Ընկղմվեցին, կորան, որպես կարմիր մարջան՝
Կարոտներիս կարմիր ավազի մե՛ջ…

Արկածներիս կապույտ կղզիներին կառչած
Վայրկյաններիս կարմիր երազի մե՛ջ
Մի՛շտ ուրիշի սիրո արքայադուստր դարձավ
Ինձ հանդիպած ամե՛ն մի Նավզիկե...

Բայց ուրիշի երկրում արքայադուստր դարձած
Իմ կորցրրած ամեն մի Նավզիկե՝
Ինձ հանդիպեց կրկին և սիրուհի դարձավ —
Իմ երգերի կարմիր ավազի մե՛ջ...

Երազներում անվերջ երազելով նրանց,
Իմ կրքերի կարմի՛ր ավազի մեջ —
Ինչ-որ մնում էր դուրս իմ երգերից գրած —
Իմ չսիրա՛ծ աղջիկ, տվեցի քե՛զ...

Տարիներում անցած իմ կարոտին կառչած՝
Իմ չերազած միա՛կ իմ Նավզիկե, —
Ուր սպասում էի — կորցրի նրանց՝
Երազներում սիրած, երազի պե՛ս...

Արկածներիս կարմիր կարոտներում փնտրած՝
Ինձ չժպտաց և ո՛չ մի Նավզիկե, —
Եվ ինչ տալու էի ես աշխարհում նրանց —
Իմ չսիրած աղջիկ, տվեցի քեզ...

Ինչ որ դեռ դուրս մնաց իմ երգերում գրած՝
Իմ կրքերի կարմիր ավազի մեջ, —
Ինչ որ տալու էի ես աշխարհում նրանց —
Կյանքում քեզ տվի, իմ Նավզիկե՛:

Ուղիներում կյանքի, բիրտ օրերում մեր այն,
Ինչ-որ կարոտ էր, հուր — ես տվի քեզ,
Որ չմնա երա՛զ էլ, որ երազեմ նրանց,
Որ չկանչե էլ ո՛չ մի Նավզիկե: —

Սակայն կրկի՛ն, կրկի՛ն, նայադների նման:
Կարոտների ձայնով կանչում են ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք,
Եվ ինձ տալով միայն — մահո՛ւ կսկիծ: —

Ո՛չ զգվանքներս՝ քեզ շռայլորեն ցրած՝
Գիշերներիս կարմիր երազի մեջ, —
Ոչ կարոտներս անհուն՝ իմ երգերում գրած, —
Չսպառեցին կարոտն իմ, Նավզիկե՛: —

Նայադների՛ նման, նայադների՛ նման, —
Կարոտների կանչով կանչում ես ինձ,
Եվ կանչելու ես ինձ, քանի կյանքում դեռ կամ:
Խոստանալով ինձ սեր, տալով — կսկիծ...

Եվ կկանչեն նրանք, մինչև անշընչացած՝
Վայրկյաններիս վերջին երազի մեջ՝
Ինձ համբուրե իբրև իր Ուլիսին տենչած՝
Վերջին շնչիս կառչած իմ Նավզիկեն...

1936.21.11

## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

...Ես դեռ չէի տեսել կյանքում իմ
Այսքան տրտմաթախիծ թաղում...

Գնում էր առջևից
Մի մամռագույն մշակ մանրամարմին,
(Ցնցոտիներ հագած մամռանման) —
Եվ տանում էր դրած աներևույթ գլխին՝
Երկարավուն, բարակ մի կափարիչ
Մի դագաղի փայտյա, որ երևի
Մանկական էր, կամ մի փոքրամարմին կնոջ: —
Օրորվում էր գլխին մշակի
Կափարիչը, որպես մի երերուն նժար, —
Եվ թվում էր, թե դա՛, — այդ կափարիչը —
Ո՛չ թե պատյան է սև, կամ կափարիչ մահու,
Այլ փայտաշեն դժվար մի հանելուկ: —
Այլ — մշակի գլխին հանաքի,
Կամ գրազի համար դրված փայտյա մի տաշտ,
Որ հանձն է առել այնպե՛ս տանել,
Որ ոչ առաջ, ո՛չ ետ չընկշռվի...
Եվ նա անում էր այդ: — Ամբողջովին՝
Կափարիչի ներքո լարված, կարծես
Ոչ թե փայտյա անշունչ կափարիչ է տանում,
Այլ հեղուկով լեցուն մի աման, —
Նա դնում է մարմնի յուրաքանչյուր ճիգով, —
Եվ կափարիչն երկու կողքից ամուր բռնած
Պիրկ ձեռքերով, — և իր օձանման ողորկ մեջքի
Շարժումներով զգույշ ու դաշնավոր...
……Չի երևում գլուխը մշակի
Բայց՝ լարումով զգաստ կափարիչը բռնող
Ողորմելի լարված իր ձեռքերից,
Եվ անկընշիռ քայլքից մանավանդ —
Նրա վախլիկ, բայց զուսպ քայլվածքից
Ակնհայտ է, որ նա — գլխից մինչև ոտքերը —
Այդ դժնանքով է արդ միայն տարված...
[Մտահոգված միայն մտքով այն
Որ գրազի համար նա աշխարհում
Չկշռվի հանկարծ և չթափվի նրա վրա շարված

Հարստությունն իր ողջ...] Մարդու այդ ետնից՝
Այդ մշակի՝ կարմիր կափարիչը տանող, —
Ընթանում էր դանդաղ, զարմանալի
Մանկահասակ մի ձի, մի քուռակ,
Թե՞ — հրաշքով հանկարծ մեզ մոտ հասած
Շոտլանդական փոքրիկ մի ձիուկ...
Տարօրինակ էր այդ շոտլանդական ձիուկը,
Երևանի անդուռն փողոցում,
Լծված թիթեղաձայն մի սայլակի,
Որի վրա հանգչում էր, ու կողքեկողք
Ընկղմելով՝ ցնցվում էր մի մանկական դագաղ ՝
Ծաղիկներով ծածկված և կանաչով.—
Մանո՞ւկ էր, պատանի՞, աղջի՞կ, թե տարիքոտ,
Բայց մանրակազմ մի կին — չէր երևում. —
Երևում էր միայն կանաչների և խեղճ
Ծաղիկների ներքո գորովանքով ծածկած
Ինչ-որ մեռած մի կյանք, մի գոյություն,
Որ տխուր է, փոքրիկ, մանրամարմին —
<.....>
Որ քաղաքի այս մեծ և փողոցի
Բազմահազար մարդկանց երթով շքեղ
Թաղումների ընտել եռուզեռում, —
Ողորմելի մարդկանց այդ գորշագույն
Այդ տխրագույն մարդկանց ողորմելի այդ երթը —
Անհարիր էր այնքա՛ն և՛ փողոցին,
Եվ քաղաքին ամբողջ, — կարծես շքեղ
Պողոտայով անցնում է մի մուրացիկ,
Որ հրաշքով՝ կյանքում միակ անգամ
Իրավունք է հանկարծ ստացել
Անցնել երթով շքեղ և ընթանալ այս մեծ,
<……..>
<……..>
<……..>
...Իսկ սայլակից հետո մի քանի քայլ
Տարածություն թողած՝ խառնիխուռն, անկարգ,
Ո՛չ կանոն, կամ ռիթմ, կամ դիսցիպլին
Չճանաչող խմբով՝ ընթանում էր <……>
Արևելյան տխուր զուռնայի
Եվ դհոլի, և մեղմ մելամաղձոտ նայի
Նվագախումբ կոչված տարօրինակ հյուսկեն...
Տարօրինակ, տխուր մի «դհոլչի»
Իր դհոլի զվարթ, զվարճագին տեսքին
Միանգամայն օտար ու անհարիր, —
Այլ, անհարիր քայլով գնում է նա համր,
Իր դհոլի երթին հակառակ՝
Կարծես դհոլն ընդմիշտ երես է շուռ տվել
Իր տիրոջ, որ այլ փակուղի է փնտրում

<……..>
Յուրաքանչյուրը մի ուղղությամբ,
Մի թեքությամբ պարզած՝ տխրություն են ծորում
Անագորույն, անսիրտ մի տխրություն, —
Յուրաքանչյուր գործիքն — իր տխրությամբ ուրույն…
Մի՞թե քայլերդ է դա — այն էլ մահվա՞ն —
Բայց տխուր, այդքան անագորույն —
Եվ — միևնույն պահին — այդքան աներթ...
Թե հենց այդպե՞ս է մահը — անհեթեթ,
Անմիտ մի դիսոնանս, — արևելյան
Այդ նայերի նման տխուր և ինքնուրույն.
Եվ դհոլի նման՝ այդ նայերին
Եվ երազին նրանց — անհարիր...
...Ամենախոր, սակայն, գեղեցկությունը այդ
Տարօրինակ թաղման թափորի —
Այն մի քանի մարդիկ և մի երկու
Ցնցոտիներ հագած կանայք էին,
Որ ընթանում էին արևելյան
Նվագախումբ կազմող մարդկանց անռիթմ,
Խառնիխուռն խմբի ետևից —
Եվ դժվար էր ջոկել, կամ հասկանալ,
Թե արդյոք ո՞ր կնոջ, կամ ո՞ր մարդու
Հարազատն է տարվում հանգստարան...
Գորշ, հնամաշ շորեր հագած <…….....….>
<……..>
Դեմքով արհեստավորներ
Ընդամենը մի յոթ կամ ութ հոգի՝
Իրենց կանանց խմբի հետ միասին...
……..
Տարօրինա՛կ թաղում……
…….
Կար անսահման
Մի թովչություն, լռին, անդորր, խաղաղ
Տարօրինակ հանգիստ ու ներամփոփ
Մի դառնություն անել այդ թաղման մեջ: —
Ի՞նչն էր այդքան գերող, այդքան ներքուստ
Ինձ թախիծով անհուն համակող
Այդ մենակյաց, խղճուկ, տարօրինակ թաղման
Զարմանալի անեզր այդ թափորում...
Թերևս ա՞յն, որ այդ թափորն ամբողջ՝
Անօգնական մարդկանց այդ խղճալի,
Այդ անհարիր թափորը, — և դագաղի
Կափարիչը տանող մշակը գորշ,
Եվ թիթեղյա ձայնով<……..>
Հին սայլակին լծված փոքրամարմին այդ ձին,
Եվ փայտաշեն դագաղը, և նրա մեջ՝
Ողորմելի, չնչին ծաղիկներով ծածկած

Եվ դաշտերի ձրի կանաչով
Այդ անծանոթ մեռելը, — և վերջապես
Արևելյան անդուռն նվազախմբի
Ողորմելի քայլերգը մահու, —
Եվ — այդ ամբողջ բույլին իբրև պսակ՝
Արհեստավոր մարդկանց փոքրաքանակ այդ խումբը՝
Ընդամենը մի յոթ, կամ ութ մարդ, —
Ահավասիկ ամբողջ այս թափորի այդքան
Ողորմելի, անօգ, ինքնամփոփ
Մենակությունը չէ՞ր, այդ չէ՞ր արդյոք, —
Որ ինձ թովե՛ց այնքան և ստիպեց
Որ ես գրեմ տողերն այս դառնաթախիծ…
Այն չէ՞ր, այն չէ՞ր արդյոք, ո՛վ հոգնաբեկ սիրտ,
Այդ թափորի, այդ խեղճ թաղման երթի
Ողջ պատկերում այնքան քեզ հմայիչ —
<……..>
Նախանձելի թաղում... Այդպես, օ, սիրտ իմ,
Ես կուզեի, որ քեզ մի իրիկուն տանեն
Այս հարազատ, ծանոթ այս փողոցով,
Այս տների միջով, ուր կատուներն անգամ
Քեզ ճանաչում են... Օ՛, երջանկություն
Արժանանալ ամբո՛ղջ, ամբո՛ղջ կյանքում քո ողջ
Աշխարհային երթում անիմաց.
<……>
Դեպի հանգստարան
……
……
Տո՛ւր ինձ, երկինք……..
Այդպիսի մահ……
Եվ այդպիսի թաղում……..

17. X. 1936, Երևան

**ՊՈԵՄ ԱՆՎԵՐՆԱԳԻՐ**

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԱԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Զարմանալի շփոթ, ու անհեթեթ, որ մութ
Ես մի երազ տեսա այս երեկո հանկարծ: —
Ո՛չ թե երազ էր այդ, այլ էապես մի մութ
Զառանցական տեսիլ, կամ հոգևոր արկած,
Որ ապրեցի կարծես կախարդական քնում,
Աչքերըս բաց, անխոհ, կիսարթրմնի պառկած

Իմ սենյակում, ինչպես սովորաբար, հանգիստ, —
Ընտելացած արդեն այս արթմնի կյանքին: —

2

Արդեն վաղուց է, որ ես մատնված եմ այս
Զառանցանքի նման անիրական կյանքին: —
Եվ, իոգի նման ծալապատիկ նստած՝
Վարժեցնում եմ ոգիս հայեցումի անկիրք...
Պարզ՝ ստիպում եմ ինձ՝ կամքիս ուժին վստահ՝
Ճաշակելու համար անեզրական հանգիստ, —
Ինչպես որ այդ հնդիկ իոգին է վայել —
Իմ սեփական պորտին՝ լուռ՝ ժամերով նայել...

3

Եվ ի՞նչ: — Հասնո՞ւմ եմ ես երանության արդյոք, —
Թ՞ե — զզվելով պորտիս չքնաղագեղ տեսքից. —
Նզովելով ոգու ստրկության արդյունք
Հանդիսացող ամեն վերացական հանգիստ, —
Հոնդալով, խնդուն նետելով դեն անթով
Երանությունն հոգու, — հղում եմ հիմն անգին
Բարիքներին կյանքի, որ մարմնական, շարժուն —
Վառվում, կիզվում են վառ ու վառվելով կորչում…

4

Ավա՛ղ — որքան էլ ինձ և՛ հարազատ, և՛ մոտ,
Եվ ըղձալի է լոկ այս բռնկումն անգին,
Որ ապրելու միակ ձևն ու իմաստն է հար,
Միակ ընթացքը թեժ դեռ կենդանի կյանքի, —
Բայց, մատնված բախտի քմահաճությամբ հիմար՝
Այս մենությանն անծայր, այս վիճակին անկիրք, —
Խողխողելով ոգուս մոլեգնությունն հախուռն —
Ընտելացա ուրի՛շ մոլեգնության մի խուլ...

5

Օ, անհեթեթ իմ բախտ, Բեհզեբուղի նյութած. —
Իմ հորոսկոպ մթին, իմ դիցուհի անքիթ...
Միաչքանի իմ կուռք՝ Կալկաթայում գտած, —
Իմ մա՛հ, իմ մա՛ռ, իմ Մոյրա՛ — Մռա՛ — Ճակատագիր…
Ավա՛ղ, ապոլոնյան ոչ թե վճիտ իմաստ, —
Տախտակներիդ վրա, այլև չնչին մի գիր
Հելլենական — չկար... Այլ նշաններ կոպիտ —
Ծուռն ոտքերի նման կույր դիցուհու բոպիկ...

6

Բայց ոչ... Ների՛ր ինձ, ո՜վ իմ անժաման ընկեր,
Իմ սիրուհի, իմ քույր, իմ երազանք անեղծ...
Ողջունեցիր դու ինձ, ինչպես լուսաստղը ջեռ,
Քույր Դիանի պայծառ՝ արծաթազօծ աղեղ
Եվ ոսկե նետ ձեռիդ՝ որս չտեսած ու դեռ
Նոր դաշտավայր ելած, ձույլ կոնքերով ու նեղ,
Տղայական մարմնով մի մանկամարդ նրբին,
Լուսաթաթախ, ինչպես աստեղահև արփին...

7

Այո՛.... Որքան էլ ես քեզ նզովեմ՝ հիմար
Կամ անճարակ մարդկանց հերյուրանքից զզված,—
Սակայն հո չե՞մ կարող ես մի եզի նման
Անգիտաբար լիզել իմ կողերին քսած
Ամեն կավիճ ու ցեխ, — կամ կարծրության համար
Անմտորեն փնչալ, հին թելերից հյուսված
Երեսն ի վայր կախված չոր ծոպերի փնջին,
Որ պաշտպանում են դեմքն երամներից ճանճի...

8

Ո՛չ, անհատակ իմ բախտ, — դու գեղեցիկ էիր,
Դու բարձրացար, ինչպես արծաթացող, զուլալ,—
Այգաբացի աստղիկ, — և ըղձանքներ բերիր,
Եվ կարոտի վարդեր, և ադամանդ ու լալ
Երջանկության, փառքի, երազանքի վերին,
Եվ սկզբում չկար անգամ չնչին քուլա
Հորիզոնում քո ջինջ, անեզրական, կապույտ, —
Երգըդ երբ նո՛ր էր դեռ փառքի կամար կապում…

9

Ի՞նչ անեիր սակայն, անօգնական իմ սեր,
Նաիրական իմ երգ, եղերական իմ բախտ, —
Որ նախատինք թվաց սյունհոդոսին այն սև,
Եվ սինկլիտին նսեմ — իմ ծառացումն այդ վաղ, —
Եվ աճեցիր որքան ու խոյացար դու վեր —
Այնքան դժնի դարձար շնորհներից անկախ,
Ծագման տեղից բխող իրավունքով վերին
Քանքարազուրկ մարդկանց այդ եղկ ռհմակներին...

10

Բայց դու ինչքան անգետ, ու միամիտ, ու խեղճ,
Ու բանաստեղծ էիր, բա՛խտ, երկնայի՛ն իմ քույր…
Դու հավատում էիր երգիդ ուժին անեղծ,
Եվ երդերով միայն, հրապույրով մաքուր
Ընդդիմանում նոցա հերյուրանքին ու եղկ
Բամբասանքին, — անհամ, թե բացարձակ, թե խուլ
Խլուրդային, անկանգ արշավանքը նոցա
Համարում քար՝ դեպի արեգակը գցած...

1937, մարտ

**ԻՄ ԼԵՐԱՆ ԱՂՈԹՔԸ**

Քառասնամյա կյանքի քարն ուսերիս վրա,
Արարչական գործիս անագորույն կեսին
Հղում եմ Քեզ կրկին ահավասիկ ես իմ
Խոհն անտրտունջ երթիս աղոթքը իմ լերան:

Քե՛զ, ո՛վ Բաշխող խոհի և շնորհող եռանդ,
Քեզ՝ Տվողիդ հանճար, և՛ ինքնություն, և՛ ձիրք. —
Դող՝ տարփուհուն պարող, շնորհք՝ բանաստեղծին,
Որ բարբառեն բանիվ և գեղգեղեն ձեռամբ...

Շնորհապարտ եմ, Տե՛ր, ինձ լիաբուռ ձոնած
Շնորհների համար և ձիրքերի անեղծ, —
Որ կոչեցիր երգիչ ու բանաստեղծ
Նվիրեցիր տավիղ և էվոլյան քնար...

Շնորհապարտ եմ, Տե՛ր, ես առավել սակայն,
Որ կոչեցիր դու ինձ ոչ սոսկական քերթող, —
Այլև ասպետ, և պետ, և զինակիր
Եվ սերմնացան աննինջ՝ դժնի ժամանակի:

***

Իբր աղամանդ մաքուր տառապանքով թրծած,
Պայծառացավ նա հար՝ և կարծրացավ անվերջ, —
Հայրենական հողում որքան ապաքինվեց՝
Ստրկության դժնի կոշկոճներով քերծած: —

Ո՛վ Տեր, գիտե՛ս, որ այս հողն հոգևոր ցողող
Իբր հայրենի հողի վաղվաղակի մշակ —
Դեմքիս հազարամյա հալածանքի նշան՝
Հերկդ եմ հերկել խոսքի աղամանդյա խոփով…

Գիտես, որ հար՝ ելած նախքան լուսաստղը վաղ՝
Ինքըս՝ ոգով անխոնջ լծված իբր համր եզ՝

Խոփն եմ քաշել խոհիս — և ինձ հենց ինքըս ես
Խարազանել խստիվ, որ չընթանամ դանդաղ, —

Եվ վաստակել եմ մինչ ուշ գիշեր խրթին,
Մինչև վերջին կաթիլն առօրյական ուժիս, —
Ապա քնել եմ ես դաշտում քնով ուշիմ
Որ լուսաստղից առաջ — կրկին ելնեմ երթի: —

Սակայն գիտես դու, Տեր, որ ոչ ինձ լուծիդ
Ծանրությունն է <……> ընկճել
Ոչ զեփյուռը շնչով շոյել է դեմքիս վճիտ
Զովացուցիչ քրտինքը — իբրև բալզամ —

***

Օ, ո՛չ. — դու չե՛ս լսել երբեք տրտունջը իմ
Ոչ հոգնության, ոչ չար հերյուրանքի հանդեպ.
Թեկուզ իջել են ծանր, օրհասական ամպեր
Իմ ուսերին խոնջած և անտերունչ շնչին...

Ինձ չի՛ ընկճել երբեք և ո՛չ մի ծանր քար,
Եվ ոչ մի սև կոշկոճ՝ ընկած խոփիս առջև. —
Ես չեմ շեղվել երբեք, — երբեք ետ չեմ դարձել՝
Ակոսներից երկար, և՛ քարքարոտ, և՛ դար: —

Ես չեմ շեղել երբեք հերկն հայրենի Խոհի, —
Եվ հանդուրժել, որ բյուր սերունդների հերկած
Հին գրքերում մնա անգամ չնչին մի քար
Նետված օտար ձեռքով, որ խարանե Ուղին…

Եվ մառախուղ, և մեգ, և կողմերից օտար
Հոնդալով թռչող ոչ ընչաշունչ քամի, —
Եվ վայրենի վրեժ դժնի բարեկամի,
Եվ ոսոխի ժանիք արյունոտած —

Հեղեղատներ՝ հանկարծ հայրենական հողի
Անդաստաններն համայն հեղեղատող, —
Չեն ընդհատել երբեք այս Տքնությունն անդուլ
Հազարամյա արյամբ սրբագործված Խոհի...

***

Եվ դու, ով իմ Տեր, որ՝ չնայած անվերջ,
Անհատնելի, նորանոր, որոմային ձիրքով՝
Զարհուրելի կենսունակ, ինչպես անհուն ձեռքով
Աղետալի բեղմնությամբ ցանված որոմ անկեզ,

Յուրաքանչյուր անարատ բողբոջի կողքին,
Ահ, որպիսի ամեհի, անմարելի խանդով
Հոընդում են, բազմանում ու բազմանում անթիվ
Իրարամերժ սաղմերն այս սև — դժնի դժոխքի...

Եվ այն գիտես, ով Տեր, դու, որ որոմն անցան՝
Սաղմն անմշակ այդ սերմի՝ հրի պես լափող, —
Ինչպես մորեխ ինքնակեր՝ զարհուրելի թափով
Բազմանալով, լափելով սերունդների անծայր:

Անխզելի տքնությամբ՝ հերկում միևնույն՝
Ամենօրյա, տվնջյան աշխատանքով ցանած
Բերքն անաղարտ, — խժռելով դեռ նորընծա կանաչ,
Անգամ արմատ ձգած պիրկ շյուղեր ինքնահուն, —

Հրկիզելով, խանձելով, իբր անխորհուրդ հրդեհ —
Հազարամյա մեր ցանի բերքն այսօրվա կանաչ, —
Հրկիզելով անգամ մեր երգն այսօրվա անհաս,
Ողջ կենսաբաղձ մի սերունդ՝ սեզ նորածիլ իբրև դեռ, —

Միևնո՛ւյնն է, ո՞վ Տեր, հանճարավոր անմահ, —
Ո՞վ ինձ խորհուրդ պարգևող և անխորտակ ոգի, —
Զրահավոր քո տված իմաստությամբ՝ գիտեմ,
Որ՝ ինչպես բոց ինքնաչափ՝ ընդերքներին անմաս, —

Ինչպես երեկ, ինչպես միշտ՝ չգտնելով շուրջն իրենց
Հեշտ, դյուրակեզ ոչ մի շյուղ այլևս կենդանի, —
Լափլիզելու են իրենց զարհուրելի խանդով
Եվ մոխրացած՝ < > հողն հայրենի:

Թեկուզ անինչ իմ ողին երբեմնակի բեկված՝
Թողած ակոս, թողած հերկ, թողած հազարամյա,
Անձկալի տքնությունն — իր հին, զառամյալ
Ողբն է հյուսել՝ սգալով կարոտն աներկբա, —

Շնորհակալ եմ, Տեր, ինձ շնորհած անմահ
Իմաստության համար այն՝ զրահավոր, որով՝
Կարողացել եմ տեսնել թե ծիլ, թե որոմ, —
Եվ սնել ծիլ բազմաթիվ՝ ուժերին անմարս...

## ԻՄ ԼԵՐԱՆ ԱՂՈԹՔԸ

Իմ հանճարի անցած չարչարանաց լերան
Եվ դժվարին, և դառն ճանապարհի կեսին —
Ահա հղում եմ քեզ խեղճ աղոթքը ես իմ, —

Ո՞վ Առաջնորդ ու Տեր հոգիներին մեր այն,
Որք — կկերտեն ոգով և որք «կերգեն ձեռամբ...»

……
……
Ո՞վ Առաջնորդ ու Տեր ու մեծագույն վարպետ
Տիեզերքում սփռած բազմաբազում —
Եվ աշխարհում, կյանքում, և երազում
Մարմնավորված ոգի և կերպարանք տարբեր —

Յուրաքանչյուր չնչին սաղմնավորման անգամ
Չև ինքնություն տվող և ինքնության պատկեր, —
Արարչագործ կամքի ո՞վ անհատնում < ……..>

***

Ոչ քաղցրություն եմ հայցում ես քեզնից, Տեր՝
Իմ դառնության բաժակին խառնելու հաշիշ, —
Ոչ զորավիգ՝ տեգերի հանդեպ ամբարիշտ,
Որ ինձ խոցել են անվերջ և խոցոտում են դեռ, —

Ոչ բալասան եմ ուզում՝ վերքերին իմ սև,
Բազմաչարչար իմ մարմնին՝ զարկված ամենքից, —
Ոչ ստության, պղծության և քսության պիղծ
Նիզակներով ծակոտած իմ կողերին դեղ. —

Ո՛չ չեմ սարսում արտաքին և ոչ մի ուժից, —
Եվ ոչ դրսից ինձ դավեր նյութողներից նոր, —
Բարձր է անպարտ իմ ոգին և զրահավոր
Ամենայն ուժ արտաքին դարձնելու փոշի:

Ո՛չ ես հիմա, ոչ առաջ իմ վերքերի վրա
Ուժ չեմ հայցում, չեմ հայցել և չեմ հայցի երբեք, —
Իմ մարմնական տոգորման, ողջակիզման դեմ,
Ես — ի՛նքս եմ իմ դեմ — ո՞վ Տեր, — հայցում զրահ…

***

Ալեկոծվող իմ ոգու այս խորքն անարև՝
Անքննելի ինքնության այս ակունքներն անտես,
Այս պղպջումն՝ ինքնաբուխ ջերմուկների հրկեզ
Տո՛ւր զորություն կաշկանդել կամքով հանճարեղ:

Տո՛ւր զորություն հորձանուտն այս անշղթա գետի,
Անժամանակ, անկապան ոգևորության
Բանտել՝ անդուլ տքնության անկիրք զորությամբ՝
Կոփել կայուն գիտության զրանիտյա գետին: —

Տո՛ւր զորություն ազատվել աննինջ աղետից՝
Հեղեղումից, ձյուների գարնանային անտես,
Կածաններից, ուղիներից, առուներից այն նեղ
Շոնդագին հորդացող պղտոր հեղեղի

Բարիքներից աննախորդ ու աննախընթաց, —
Բարձունքներից այն անհաս, անհունձ, անկոխ — .
Պատահաբար տեղահան արված հորձանքով
Հարյուրամյա, ահռելի, սակայն անկենդան

Կաղնիներից, բներից, — բարիքներից թեկուզ
Եվ վեհափա՛ռ, և մեծ, և՛ կոթողներ դարձող,
Սակայն սնիր ինձ, Տե՛ր, — ամենօրյա՛ հացով,—
Գորովագութ, չարքաշ, որ վարարած ոգուս

Տո՛ւր զորություն երկաթյա կամքով աներկբա
Կանգնած հախուռն այդ հողմի գալարմունքի հանդեպ՝
Պատկերների, խոհերի հեղեղումն անդեմ
Թեքել հունի մեջ ոգու՝ հեղեղի պես այն,

Որ անպատվար ու պղտոր լեռներից անթիվ
Առուներից, ուղիներից, կածաններից ծածուկ,
Գագաթներից բարձրաբերձ, իբրև հալած ձյուն,
Տեղահանված, ողողված գարնան անհուն խանդից —

Զարհուրելի հեղեղով ողողելով ամբողջ
Լեռնաշխարհի հովիտներն եզերքից եզերք,
Գետերի հունն են մտնում և հետզհետե —
Լայն, ծանրանիստ, վեհափառ, դանդաղ հորձանքով —

Ընթանում են համրաքայլ, արքայաբար, հանգիստ —
Հնամենի հունից դուրս ողողելով թեպետ
Անծայրածիր մերձակա մացառուտներ, թփեր,
Որ գարնան տիղմն են ծծում, որ բարձրանան կյանքի, —

Եվ ինչպիսի՜ հեղեղներ երազների, խոհի,
Եվ մտքերի որպիսի հեղեղատներ եմ հիշում, —
Որ բարձրացել են անցած տարիների մուժում, —
Եվ ինձ տվել են միայն խեղճ մի քանի երգ:

Եվ մինչև օրը, ո՜վ Տեր, մի վայրենի, անխոհ,
Մութ հորդայի եմ եղել իմ արվեստում նման, —
Հեղեղումի ենթակա հովիտներում ամա
Դարեդար բնակվող գեղջուկների անխոհ, —

Որ փոխանակ լեռներից յուրաքանչյուր գարուն
Վար գլորվող ահռելի հեղեղների համար
Հուն փորելու և ընթացք բեղմնավորող, անմահ
Որ ոսկե տիղմը մնա անբեր դաշտերում, —

Այս բյուրպատիկ ավելի, թե՛ հեշտ, թե՛ անահ,
Թե աղետից ազատող, թե վերահաս մահից, —
Այս պրոզայի փոխարեն ամեն ձյունհալի —

Տուն ու այգի թողնելով հեղեղատի կամքին՝
Քարանձավներն հանելով անասուն ու մանուկ,—
Զող ու կեռել են շինում, ընտրում դիրքեր բանուկ
Կոճղ ու ծառեր բռնելու հեղեղատի միջից…

Եվ չգիտե, որ թեկուզ հազարամյա կաղնիներ
Կարողանա նա պղտոր հեղեղատից այդ որսալ
Նախ՝ հարազատ, հենց իրենց անտառներից է կորզած, —
Եվ ապա ջուրն այդ — որքան նոր կաղնիներ կծներ, —

Թե բովանդակ ուժերով իրենց և՛ պիրկ և՛ առույգ
Բազուկների, ջղերի, և կամքերի զորավոր, —
Հուն փորեին գարնանային հեղեղատի համար, որ
Տիղմ է բերում բեղմնավոր ամեն <…….> ու գարուն

Ախ, դու նրանց ես եղել հաճախակի նման, —
Սպասել ես տարերքին ոգևորության

Կարողացե՞լ ես արդյոք, ով խոհերի վարպետ,—
Որ ամենայն գարունքի հախուռն խնդությամբ
Հեղեղատներ ես ապրել ոգևորության, —
Եվ քանի շունչ կա քո մեջ պիտի դեռ ապրես, —

Կարողացե՞լ ես արդյոք քո ուժերի ներքին
Հեղեղատով ողողված հովիտներում հողե, —
Ոչ միայն շյուղ որսալ խեղճ ու ինքնաբուխ տողեր,
Ոչ լոկ անխոհ վետվետում ինչ-որ հնչուն երգի —

[Դու որսացել ես միայն ինքնահորդուն տողեր,
Եվ միայն շյուղ մի չնչին լիահնչյուն երգի…]

## ԼԵՐԱՆ ԱՂՈԹՔԸ

Տո՛ւր ինձ կորով, տո՛ւր ինձ ուժ, տուր զորություն անկոր,
Տո՛ւր գիտություն սեփական սահմանների, խորքի, —
Տուր տեսություն անմշուշ աչքի, շնորհքի —
Անեզրական տքնությամբ, համբերությամբ, կամքով

Ալեկոծվող իմ ոգու, իմ հոգևոր խորքի,
Կենսահարույց ուժերի ակունքներից անտես
Պղպջացող, եռացող ջերմուկների պես
Դեպի արև խոյացող այս խաժադուժ զորքին —

Դեպի արև, դեպի կյանք, դեպ դաշնություն ու ձև,
Կերպավորման, դաշնության, բյուրեղացման ձգտող
Այս քաոսի խաժադուժ արշավանքի հանդեպ
Լինելու բարձր ու զգաստ՝ ոչ ենթակա ստրուկ, —

Այլ զորապետ ու արքա, սուվերեն ու տեր, —
Մոգ ինքնախոհ ու իոգ, ճարտարապետ կարող, —
Պատկերների Արքիմեդ՝ ընդդեմ բարբարոս
Հորդաների ներխուժման՝ թեորեմն իր լուծող դեռ: —

Ո՜վ դու, որ պետ ես կարգել ինձ՝ տարերքին անդեմ,
Կույր տարերքի ու նյութի տենդր կաշկանդող, —
Տո՛ւր զորություն լինելու, — ինքըս իմ դեմ անդող,
Մութ ինքնությունը նյութի ձևով կաշկանդող —

Ով դու, որ վարպետ ես կարգել ինձ սկզբից ի վեր՝
Ճարտարապետ խոհերի, երազների, երգի, —
Գեղեցկության, դաշնության չեղյալ եզերքի,
Եղերական վարդապետ և <……>

Տվե՞լ ես դու արդյոք ինձ՝ ձիրքից առավել,
Անգամ անհուն շնորհքից և հանճարից անգամ
Տասնապատիկ առավել կարևորը — կամք՝
Անեզրական երկունքով միայն տառապել…

Տվե՞լ ես ինձ զորություն անագորույն, դաժան՝
Չվարանել սաղմերի բեղմնավորման պահին
Չվարանել արյունից, սրածումից, մահից —
Հանուն ձևի ու խոսքի միակ սրբազան:

Տվե՞լ ես ինձ զորություն ստեղծագործ ոգուս
Զարհուրելի երկունքի հրաշագործ ժամին,
Երբ կայծակներ են ճայթում և շաչում է քամին —
Ոգևորման սանձարձակ հողմն հզորագույն, —

Երբ ամեհի ու հախուռն ոգևորության
Անանց քամին է շաչում անտառներում ոգու,—
Եվ խոհերի կապտափայլ կայծակն է զարկում՝
Հրկիզելով անդունդներ բեղմնավորության, —

***

Ես չգիտեմ արդյոք կա՞ աշխարհում մի այլ
Ստեղծագործ էակ, թեկուզ չնչին բացիլ, —
Իմաստագույն էակ կոչվող՝ մարդուց բացի,—
Որ անխորհուրդ այսքան, այսքան շռայլ

Թե՛ առանձին, թե հետն իր նմանների բազում՝
Յուրաքանչյուրն ուրույն ճարտարության վարպետ, —
Այսքան անհուն, այսքան մրջյուններից տարբեր
Տնօրինի հանճարն ստեղծագործ, —

Այսքան անգետ մսխի իր ջեռացող ոգու,
Կայծակնացայտ մտքի, շնորհքների —
Օվկիանի նման անծայրածիր խորքի

***

Քառասնամյա հոգսի բեռն ուսերիս վրա
Անհանգըրվան երթի ճանապարհի կեսին
Հղում եմ քեզ, վարպետ, ահավասիկ
Խոհն անտրտունջ ես իմ — իմ աղոթքը լերան:

Քե«զ, ո՛վ Բաշխող խոհի և շնորհող եռանդ
Քեզ՝ Տվողիդ հանճար, և տքնություն, և ձիրք, —
Դող՝ տարփուհուն պարող, — շնորհք՝ բանաստեղծին,
Որ գայթակղեն ոգով և որ երգեն ձեռամբ...

Քեզ՝ Տվողիդ մեղվին ոչ լոկ անհուն շնորհք՝
Հյութ քաղցրահամ հինել ծաղիկներից լեղի, —
Այլև հրաշագործ այդ երկունքով հղի՝
Հանուն գալիք զեղման՝ լինել ճարտար Շինող...

Եվ — Տվողիդ չնչին մրջյուններին անգամ
Ոչ միայն ձիրք ու ջանք տվընջական գործի —
Այլև ստույգ քարտեզ հազարամյա փորձի, —
Ճանաչության չափի, ձգողության անգայթ:

Համառության, ստույգ ճարտարության, անշեղ՝
Մի մազաչափ անգամ կանխորոշյալ գծից
Ոչ մի կողմ չթեքվող կառուցման կամք <…….>
Այն, որ տալիս է ուժ և գիտություն

Ոչ միայն, Տեր, նրանց՝ մրջյուններին անգետ, —
Բեղմնավորել, տնել, անընդմեջ տնել —
Այլև հանճարափայլ լաբիրինթներ ձնել, —
Եվ կերտելու պահին՝ չխնայել կյանքեր —

Արդ՝ անձանձիր, անտրտունջ անանձնական պատվիրան, —
Քառասնամյա տքնությամբ, ճարտարությամբ անբիծ,
Մոլեգնությամբ ուժերի, որ տրված էր ինձ
Կատարելով հոգևոր գործն ինձ պատվիրած, —

1937, մարտ

## ՀԵՐՈՍԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

(Դրամա)

ՊԵՐՍՈՆԱԼ՝
Հեղինակը
Հանդիսականներ
Կապույտ լերան արքայադուստրը
Համլետ
Դոն-Քիշոտ
Սասունցի Դավիթը
Ֆաուստ
Գլուխ պահող Կիկոսը
Քաջ Նազար
Հուրիներ և փերիներ

Գործողությունը տեղի է ունենում հեղինակի ուղեղում

Տեսարանը՝ սենյակ, գրասեղան, սեղանի լամպ՝ կարմիր թավշյա լուսամփոփով: Վառված է միայն այդ լամպը և նրա լույսով կիսաղոտ կերպով լուսավորված սենյակում, բացի սեղանից, ուրվագծվում են գրադարակներ, Ջիոտտոյի հայտնի ֆրեսկայի մի մասի արտատպությունը, որը ներկայացնում է Դանտեին և Պետրարկային՝ դրախտում: Դիմացի պատին, այսինքն գրասեղանի ետևը՝ չինական պաննո, դեղին թավշի վրա նկարած չինական մի հեքիաթ: Բացի պաննոյից սենյակում պարզ երևում է գրասեղանի ձախ անկյունի մոտ, բարձր պատվանդանի վրա դրված հսկայական բրոնզյա Բուդդայի գլուխը՝ դեղին, պսպղուն այտերով, ծուռ նշաձև աչքերով և հեգնական շրթունքներով: — Լուռ է, լսվում է միայն ժամացույցի չխկչխկոցը:
<…… >
<……>
<……..> բազմած է հեղինակը
<……..> ճակատին կեղծ-կլասիկ <…>
Սկսում է մենախոսել: —

Հեղինակը. —
Գիշերը ամբողջ, հիվանդ, խելագար
Ես երազեցի արևի ոսկին…
Շուրջս ոչ մի ձայն ու շշուկ չկար, —
Գունատ էր շուրջը գիշեր ու լուսին:

Ես երազեցի արևի ոսկին,
Տենչացի նրա հրաշքը խնդուն,
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն՝
Արևանման, արնավառ խոսքի —
Բայց շուրջս այնպես գունատ էր տկար
Խոսքեր չկային և արև չկար…
<……..>
Այո՛… իմ շուրջը գունատ էր, տկար —
Խոսքեր չկային և արև չկար...
Բայց ասել էր այդ... Տարիներ առաջ
Երբ այնտեղ, Ղարսում, պատանի մի դեռ
Երազում էիր դու մութ մի երազ —
Երբ քո միտքը դեռ ինքն էլ չգիտեր,
Թե ինչ է ուզում... «արև» ասելով
Հասկանում էր նա երևի մի հուր —
Հրեղեն աղջիկ, որ իր բորբ սիրով
Հրդեհեր պիտի քո սիրտը տկար...
Եվ այդ «բառերի շշուկն իմաստուն»
Չէ՞ր արդյոք մի խեղճ, մի տխուր մարմաջ—
Դառնալ բանաստեղծ մի հռչակավոր,
Շահել դափնիներ, պսակներ ոսկյա,
Ունենալ կյանքում այն ամենը, որ
Կարող է ձգտել ունենալ մի խեղճ:
Գավառի ոգով սնված բանաստեղծ...
Եվ դու ունեցար... Տրվեց քեզ, կյանքում
Լինել բանաստեղծ ճանաչված ու մեծ,
Տքնության պահեր ունեցար անքուն
Եվ քո բորբոքված միտքը ստեղծեց
Պոեմներ, երգեր, տողեր ու տաղեր,
Որ գիտեն հիմա շատերը կյանքում.
Եվ ընթերցողը քեզ վարդեր շաղեց՝
Բայց դու մոլորված լույսերի շաղից՝
Անվերջ գնացիր անկումից — անկում...
Քո գլխի վերև ծագեց մի արև,
Որ մարդկանց վսեմ կամքը ստեղծեց,
Եվ տեսար կյանքում դու այգն այն հրե,
Որ պատմության մեջ
Բացեց օր անմար և անմարելի...
Եվ կյանքը շուրջդ պայքարով էր լի՝
Վսեմ պայքարով խնդության բերող,
Գոյության ամբողջ ընթացքը փոխող,
Պայքարով մի մեծ, որին դու տվիր
Ինչ կարող էիր քո քնարով տալ —
Էլ ի՞նչ ես ընկել ցնորքի ետևից,
Եվ ի՞նչ ես, անկամ ու սենտիմենտալ
Երազում բառեր, որ չկան կյանքում...

Բայց չէ որ բոլոր քո անհեռատես
Քննադատներից առավել խորունկ
Հասկանում ես դու, որ այն ինչ ունես
Որ այն ինչ չկա այդ <…...>
Չի՛ կարող ճարվել մենակ <…. >
Եվ մեկի միայն <……>

Զգտում եմ անկիրք մի իմաստության
Մի ամբողջության մտքի ու հույզի —
Որ կարող է, օ, հասկանում ես այս,
Հասկանում ես այս ամենքից դու պարզ,
Որ կարող է այն, ինչ ուզում ես դու
Ստեղծվել միայն բոլոր մարդկային
Ուժերի կամքով, պայքարով անդուլ...
Դու գիտես, որ երբ դաշտերում մեր լույս,
Այս համայնական դաշտերում մեր լայն
Հերկում է խոփը եռանդով անդուլ,
Այն ոչ թե հողն է մշակում միայն,
Այլև մեր ոգու ճանապարհը լայն,
Եվ այն, որ վիհ է թվում և անգանգ
Եվ այն էլ ոգո՛ւ և երազանքի —
Այդ ուղի է լոկ պայքարի, մի հանդ,
Որ համայնական մարդկային կյանքի
Խոփն է մշակում այսօր օրնիբուն...
Գիտես դու և ա՛յն, որ միայն ոգով
Եվ մտքով լինել գործին մասնակից —
Նշանակում է գնալ ցերեկով
Հազար մոմանի լապտերը ձեռքին —
Եվ իզուր վատնել ժամ ու ժամանակ...
Եվ լապտերը քո — լոկ թուղթ և թանաք,
Որ կարող է լոկ քեզ լուսավորել,
Եվ այն էլ լույսով մի կասկածելի. —
Օ, ո՛չ <……>
<…….> ելի՛ր և զե՛ն—
Ելե՛ք <…….>

Ժամանակներից <……..>
Ինչպես <……>
Կանգնում եմ ես <…….>
<……..>
Դեմքերը միակ մարդկային ուղու —
Սակայն պոետին ցույց տալու համար
Ուղի ճշմարիտ, — ենթարկվենք մի պահ
Քմահաճույքին նրա միամիտ. —
Ելե՛ք, բարձրացե՛ք գիշերվա ժամին,
Հայտնվեցե՛ք ամբողջ ձեր կերպարանքով,

Բարձրացեք հեռու մուժից, խավարից, —
Ապրեցե՛ք մի պահ ձեր ամբողջ կյանքով...
(Այս խոսքերի վրա սենյակի զանազան անկյուններից դուրս են գալիս և շրջապատում են բանաստեղծին, կանգնում են նրա չորս կողմը, վերոհիշյալ հերոսները՝ իրենց տրադիցիոն կերպարանքով):
Աքիլլեսը. —
իբրև հունական մարմարոնյա արձան, մերկ ու գեղեցիկ:
Թերսիդեսը. —
ինչպես նա նկարագրված է «Իլիական»-ում:
Դոնքիշոտը. —
ըստ Սերվանտեսի, Դատրեի նկարի համաձայն՝ բարակ, բարձրահասակ, ասպետական զրահներով, ավելի եղերական քան ծիծաղելի, իսկական «տխուր կերպարանքի ասպետ»:
Համլետը. —
տխուր ու գեղեցիկ, տրադիցիոն զգեստներով ըստ Ադամյանի (որովհետև պոետը, իմ հեղինակը, այդպես է պատկերացնում նրան):
Ֆաուստը. —
ըստ Գյոթեի, երկար մորուքով, մազերով, բարձրաճակատ և արի:
Սասունցի Դավիթը —
ըստ նկարիչ Հ. Կոջոյանի նկարի — նրա կերպարանքի ոճում զգացվում է գերմանական դասական նկարչության (Դատրե) ազդեցությունը:
<……>
Քաջ Նազարը. —
Ամենաչքավորը՝ գլուխ պահող Կիկոսի կերպարանքն է: — Միջահասակ, ծուռ, մեծ քթանի, մազերը ցից, աչքի մեկը ծուռ, գլխին մոթալ փափախ, զգեստները բազմաթիվ խունացած կարկատաններից, երբ փափախը հանում է առաջինը, որ աչքի է ընկնում, նրա գլխի վրայի հսկայական ուռուցքն է, կոշտը, որ թեև փափախի տակ չի երևում, սակայն փափախը հանելիս համարյա նույնքան տեղ է գրավում, որքան փափախի ներսը: Այս իսկ պատճառով և միշտ փափախը գլխին է մնում, եթե միայն որևէ արտաքին հանգամանք չի ստիպում նրան փափախը հանել: Ամբողջ գործողության ընթացքում նա աշխատում է աչքի չընկնել, միշտ թաքնվում է սրա նրա ետևը:
Պոետը. —
Ա՜հ, չէի տեսել ես երբեք այսքան
Չքնաղ ու անհուն մի տեսարան վեհ...
(Բարևում եմ — ուրեմն ես ապրում եմ, —
Ասել է ծերուկ Դեկարտը դեռ...
Բայց խորհում եմ ես, թե գրում հիմա)
<……..>
<……..> ժպիտը երկնագույն լույսով <……..>. համարյա լիրիկական, երանության հասնող ժպիտ, որից սակայն չի կորցնում իր մեղմ, լիրիկական, միևնույն ժամանակ և՛ տխուր և՛երանություն արտահայտող իրոնիական բնույթը:
Բոցը.—
Վառեցի ահա ես խավար մուժում
Իմ կապույտ բոցի երկնային լեզուն,
Բայց դեմքս երբեք ես չեմ բաց անում
Այդքան հեշտությամբ... խնդությամբ անհուն
Թող լցվի հիմա սիրտը պոետի...

Թե ուզում է նա կյանքին ավետի
Իմաստությունը իմ <……>
Թող ցույց տա մի պահ, իր հերոսական
Ցանկությունների ընթացքը և ես
Ցույց կտամ անգամ իմ դեմքը նրան
Թե գտնի ուղին՝ նա ինձ <……..>
Հեղինակը. —
Վառվել են, գիտեմ, դեմքդ տեսնելու
Ցանկությամբ կյանքում հերոսներ բազում.
Նրանցից էի ես հույս սպասում,
Ուղի սպասում, և խորհուրդ, և ձև, —
Եվ այժմ ահա թող գան, թող բանան
< >
< >
< >
Բոցը.—
Զուր մի չարչարիր մտքերով դու քեզ
Ուզում ես ասել՝ երա՞զ է արդյոք
Այս ամենը, որ տեսնում ես ահա,
Կարող եմ իսկույն քեզ պատասխանելի
Որ երազ է սա... Եվ ոչ մի կասկած.
Մի ձմեռային գիշերվա երազ,
Գիշերվա, որ քեզ թվում է անծայր...
Օ՜, հիմար պոետ... Օրերդ անցած
Քեզ չեն խրատել... եղել ես թեև
Դու ոչ թե միայն բանաստեղծ մի խենթ,
Այլև պայքարող ու քաղաքացի,
Բայց... չես հասկացել մինչև հիմա դու,
Որ բոլոր չքնաղ իղձերը մարդու
Երազում են, տե՛ս, կատարվում անշեղ. —
Այդպես են բոլոր ֆանտաստիկ, հնչեղ,
Թե «գիշերային», թե «ներմարդկային»
Ցնորքները, որ հեքիաթի ձևով
Այցի են գալիս պոետներին մերթ.
Եվ չե՞ս հիշում դու, չե՞ս հիշում միթե
Ընդամենը լոկ մի գիշեր տևող
Այլ պոետների ցնորքներն անուշ...
Հիշիր <……> թեթև, փաղաքուշ
<……..> հեքիաթ < >
<……..>

Երգեր հմայիչ, կատակներ ուրախ
Իմաստուն խաղեր, որ ունեն անհուն,
Երբ ոգին ինքն է իրմով հիանում,
Երբ ոգին ինքն է սանձարձակ թևում
Թաքնված չքնաղ մարմնի ետևում...
«Ամառվա երազ», «Վալպուրգյան գիշեր»,

Զվարթ «Աթթա Թյոլ» և որը հիշես...
Թողնենք սակայն այս զեղումն հիմա, —
Եկել են ահա երազի նման
Շարվել են քո դեմ «հերոսները» քո,
Բուդդան է նայում վերևից իր հին
Հավիտենական ժպտացող դեմքով, —
Եվ ես վերջապես... Հավիտենական
Կանացիության ուրվականն անմահ...
Կանչել ենք այս քաջ այրերին ահա,
Որ լուծեն մթին հանգույցը կյանքի.
Դե, ասա՛, ես քո ստրուկն եմ հլու,
Ո՛վ, դու բանաստեղծ, ոգի անհանգիստ, —
Ի՞նչ հարց ենք արդյոք մենք սոցա տալու...
Պատասխան. —
Դու ինքդ էլ գիտես ինձանից էլ լավ...
Քո դեմքն եմ ուզում, որ իմ դեմ բանաս,
Չես բացել <…….> այս հերոսական
Այրերի հանդեպ < >
< >

Գաղտնիք է եղել... Եվ նոքա եթե
Բացել են երբեմն հպումով թեթև,
Իմ դեմքը մի պահ — հաղորդել են այն
Գրքերում իրենց, երգերում ունայն,
Եվ արկածներում, որ եթե իրենք
Չեն պատմել — ապա ուրիշներն են միշտ
Պատմել շարունակ: — Թե որքան է ճիշտ,
Նրանց հաղորդածն — այդ ինքդ գիտես.
Հայտնի է ինձ լոկ, որ գերել եմ ես
Մարդկանց հավիտյան, բայց չեն հասել ինձ:
Մթին է եղել հանելուկն իմ հար,
Ինչպես այդ պատին խփած պատկերի
Իմաստը թաքուն... Եվ այժմ ահա,
Թե ուզում ես այս այրերի ամբողջ
Իմաստությանը հասկանալ — սոցա
Տանք, մի հանելուկ լուծելու չնչին.
Թող մեկ-մեկ սոքա պատմեն մեզ պայծառ
Որմնապատկերի այդ իմաստը հին, —
Եվ ով սրանցից ավելի հստակ,
Ավելի խորունկ հասկանա ամբողջ
Իմաստը այդ հին չինական գորգի
Նա էլ < >
Եվ հաջող ……. >
Համաձայն..... ……>
Դիմացի նկարը

Դեղին մետաքսյա ֆոնի վրա < > չինական նկարչության պրիմիտիվ ոճով պատկերված է անհեռանկար մի պեյզաժ, ավելի շուտ իրար մեջ պայմանական ոճով հագցրած մի քանի փոքրիկ պեյզաժներ, որոնք կապված են իրար ոչ թե օրգանական ձևով, այլ զուտ պայմանական, ֆրագմենտալ ոճով: Պաննոյի աջ անկյունը մի գորշ դաշտանկար է. մի ցածլիկ չինական <……..>,բռաչափ բրնձի արտ: Մի տարիքոտ կորաքամակ չինացի: Այս ֆրագմենտը լոտոսների և եղեգների ֆանտաստիկ օրնամենտով միանում է երկրորդ ֆրագմենտին, որի վրա նկարված է հախճապակյա մի չքնաղ պալատ, պատշգամբով, դեմը լազուր լիճ, պատշգամբում մի չքնաղ աղջիկ, իսկ ներքևում նրբիրան մի պատանի նվագաբանը ձեռքին երգում է՝ երազային աչքերը հառած պատշգամբի գեղեցկուհուն: Այս երկրորդ ֆրագմենտը նույնպիսի օրնամենտով միացած է երրորդ ֆրագմենտին, որի վրա նկարված է մի ծեր ալեհեր < ..... մորուքի……> <՛ . . . գիրք է կարդում. գիրքը դրված է……..> < . . դրված է կրակի վրա ……. > է եղեգնյա աթոռի վրա……> դռան առաջ……> վրա, կարծես ճահիճում լողացող տախտակամած է, որ օրորվում է կանաչավուն, նեխած ջրերում, որոնց միջից գլուխները հանած, ահագին աչքերով երկինք են նայում կանաչավուն գորտեր,մողեսներ և կարմիր ձկներ... Այս է պաննոյի ամբողջ բովանդակությունը:

< >

< >

Որպեսզի տեսնեմ, ինչպես ես <հարթել>
Այդ հերոսական այրերի համար
Ճանապարհ դեպի քո հմայքը հին...
Ո՛վ գերերկրային թագուհիդ անել, —
Թույլ տուր նոքա գան, և իբրև գերի
Հավիտենական կանացի հրիդ —
Իրենց սուրասայր սրերը հանեն,
Ելնեն քո առաջ մահվան պայքարի,
Որ տեսնեն՝ արդյո՞ք ինչով են թերի
Ինչո՞ւ չեն արդյոք հասել նոքա քեզ,
Ինչպե՞ս են արդյոք մոտեցել լույսիդ
Ո՞ւմ սերն է եղել ավելի հրկեզ
Եվ ո՞ւմ վարանումն՝ անիմաստ ու սին...
Բոցը.—
Իսկ ո՞ւմ ես ուզում դու կանչել արդյո՞ք,
Տարբե՛ր է եղել այնքան դարերում...
Թե վարանումը, թե ուղին մարդու...
Հեղինակը —
Երբ նայում եմ ես լույսիդ անհուն
Եվ փորձում տեսնել ընթացքը ոգու, —
Տեսնում եմ, որ բարդ ուղիներում քո
Դեգերել են բյուր բազմաթիվ այրեր —
Բայց շարքում դոցա քչերն են միայն
Իրենց ինքնության տիպարով փայլել...

< >

< >

< >

Բայց պարզ <……..> հանճարեղ
Այրերի ձայնով մարդն է խոսում <……>

Իր պարզ, մի քանի գծով հիմնական...
Դեմքեր են դոքա, տիպարներ պայծառ —
Եվ մարդն ինչքան էլ փոխվի աշխարհում
Կլինեն նման կերպարանքներ հար՝
Իհարկե, տարբեր, օ՛, իհարկե <……>

Բանաստ. —
Եվ ո՞վ է արդյոք առաջինը — այդ
Կերպարանքների շարքում...

Պ.—
— Օ՛, արի,
Աքիլլեսն անշուշտ, հերոսն այդ վսեմ.
Հեկտորը անշուշտ, Հեկտորը, կասեք…
Օ՛, ոչ — կյանք <……..> տարբեր
Անունների մեջ ելած իրար դեմ...
Եվ մարդիկ դարեր հավասար սիրով,
Նույն հիացմունքով, փայլով ու հրով
Դրել են նոցա ճակատներին վես
Դափնիներ կանաչ, և հուրհուր վարդեր...

Բ. —

Ովքե՞ր են մյուս հերոսներն — ասե՛ք,
Թվեցեք հերթով, որ կանչեմ նոցա
< >
< >
Որի մազերին <…….> է թափած
Իսկ սրտի վրա կասկածանք ու մահ...
Գալիս է ապա բոլոր դարերի
Եվ բոլոր անմահ ժողովուրդների
Մեծագույն հերոսն, այրն այն իմաստուն,
Որին <.....> կամ թե պարզապես
«Ֆաուստ» են ասում: — Սրանք են ահա
Համայն աշխարհի և կյանքի համայն
Ստեղծած տխուր հերոսները մեր —
Բայց ուզում եմ ես,
Որպեսզի լրիվ լինի իմ կյանքի
Վարանումների պատկերը <…...>
Կանչենք մենք նաև հայ <…..>
<……..>
Ստեղծած երեք հերոսներին մեծ...
Այդ հերոսներից առաջինը հենց
Դավիթն է, որին ես հայ Աքիլլես
Անունն եմ տալիս մտքում իմ հաճախ,
Նմանությունը թեև արտաքին,
Զևական է լոկ: — Իսկ երկրորդը — ախ,

Քեզ տարօրինակ թվա քիչ գուցե,
Բայց նա՝ կարտոնե զրահներն հագին —
Քաջ Նազարն է մեծ... Սակայն մեծագույն,
< >

Դա — գլուխ պահող Կիկոսն է անմահ...
Որ չի ստեղծել ոչ մի ժողովուրդ
Աշխարհում այդ մեր Կիկոսի նման
Մի ցայտուն տիպար, այսքան մի հմուտ
Կերպարանք, որ ողջ մի ժողովրդի
Անցյալի տիպար — պատկերը լիներ…

Բուդդա — (իր պատվանդանից)

Անհնարին է, իրոք, չընդունել
Այդպիսի անհերք մի ճշմարտություն...
Ես, որ պահվելով իմ նիրվանայի
Կապույտ եթերում գտել եմ հանգիստ,
Դժվար ապրեի ու դիմանայի՝
Կրելով այդքան տառապանք ու վիշտ...
Բայց ուղին նրա անմիտ է ու սին,
Հասել է արդյո՞ք նա խաղաղության
Ոգու ու սրտի... Օ՜, իհարկե, ոչ, —
Հարգում եմ թեկուզ ես այդ Կիկոսին,
Բայց չեմ նախանձում, այդ անվերջ, անխոնջ
Ձգտումին նրա՝ անպայման տևել...
Իր այդ ձգտումով նման է նա քիչ
Իշու... որ ունի... թռչելու թևեր...

Բոցը.—
Ա՜խ զուր ես հեգնում, Բուդդա, դու նրան,
Եվ զուր է կարծում բանաստեղծը, որ
Կիկոսն է միակ հերոսն հուրհրան:

Հեղինակը. —
Կանչիր դու նրանց, թող գան խնդությամբ.
Թող լցնեն մի պահ սենյակն այս տխուր
Եվ ուղի բանան իմ ոգուն, որ միշտ
Ուզում է թռչել չգիտեմ թե ուր…

Ժամանակակից քննադատի
դիրքը՝ գրքակալից. —

Ո՞նց թե չգիտե, չգիտե թե ո՞ւր...
Կտրվել եք դուք բարեկամ կյանքից,

Գնացեք դեպի կյանքը ընդհանուր
Դեպի դաշտերը մեր աշխատանքի...

Բոցը.—
Օ, այդ նա գիտե, ձեզանից էլ լավ...
Այդ չէ հարկավոր այս պահիս նրան...
Ուրեմն կանչեք հերոսներին այդ
Թող գան հուրհրան...
Օ՛, դուք տիտաններ մարդկային կյանքի,
Մարդկային մտքի և հիմարության,
Տիտաններ խոհի և աշխատանքի:

Մի վայրկյան տիրում է խոր լռություն: Իրոնիական ժպիտով վերևից նայում է Բուդդան պոետին, որ նստած է՝ երանելի ժպիտը դեմքին՝ նայելով Կապույտ Բոցին, գրքակալներին, նամանավանդ, գրքերի այն շարքին, որտեղից լսվեց ժամանակակից քննադատի ձայնը: Լռությունը տևում է մի քանի վայրկյան, հետո:

Ձայնը. —
(Դիմելով ինչ-որ արարածի)
Օ՛, դու, թագուհի, կյանքի ու մահի,
Բոլոր դարերի, բոլոր դաշնությանց,
Բոլոր ձևերի և իմաստությանց,
Դու, որ աշխարհի խորքը ամայի
Դարձնում ես հար պայծառ ու լեցուն —
Դու՝ աստվածային քաղցրությամբ լեցուն —
Թագուհի մտքի, բանականության,
Զգացմունքների և երանության
Դու ամբողջություն, լիություն անհուն,
Դու բազմածնունդ և հազարանուն,
Մարդկային կյանքի առաջին օրից
Մինչև վախճանը մարդկային կյանքի —
Օ, դու որ հավետ, նորից ու նորից
Սնունդ ես տալիս մեր անրջանքին, —
Դու — Կապույտ լերան թագուհի լուսե,
Դու անվերջ մաքուր և անդարձ վսեմ, —
Բոլոր դարերի, բոլոր ազգությանց,
Դասակարգերի և փոփոխությանց,
Ալեկոծ ծովով անվերջ ընթացող
Օ, ցնորք լուսե < >
Դու, որ < . . . .>
< >

Սկզբից մինչև
Մարդկային կյանքի
Այսօրը վսեմ —
Ձգտել է մարդը

Լիության, սակայն
Զգտումն այդ վսեմ
Եվ հերոսական
Մեկ-մեկ է միայն
Դարձել իրական...
Միայն առանձին
Հանճարներ են դեռ
Հասել բարձունքին
Այդ վսեմ ու վեհ...
Եվ այն էլ միայն
Պահերին այն լոկ,
Երբ հանճարն այդ մեծ
Իր շրջապատի
Շեփորն է եղել
Հազարապատիկ. —
Չես գտնի դու, մա՛րդ,
Շրջապատից դուրս —
Ո՛չ փառքի գագաթ,
Ո՛չ հանճարի լույս…
Ճակատագի՛ր է
Կոչվել այդ հնում, —
Այժմ — դու ինքդ ես
Ետևից գնում —

< >
Երբ այն իմ դեմ <…..>
Եվ անհուն <....>
Նշված է ուղին <…..>
Ուղին դառնության
Եվ անազատ է
Այդ ուղին այնքան,
Որ զգում եմ ես,
Ներքուստ, որ ոչինչ
Էլ չկա վսեմ,
Եվ չկա էլ ջինջ...
Տրված է արդեն
Իմ ուղին վերուստ
Էլ ո՞նց ավարտեմ
Ես երգը իմ լույս —
Էլ ոնց իմ ոգու
Ինքնությունն հայտնեմ,
Երբ տրված է ինձ
Այդ ուղին արդեն,
Իբրև ճանապարհ,
Որ միակն է, ախ, —
Եվ չկա՛ <հնար> ,

Որ ելնեմ խիզախ
Իմ ոգով հիմա
Եվ ուղի բանամ...
Մնում է, որ ես
Միայն իմանամ
Այն, որ ինձ վերուստ
Նշված է արդեն —
Չեմ ուզում երբեք,
Որ ինձ կաշկանդեն
Ուժեր թշնամի

< >
< >
Եվ հավիտյան
Ես այլ եմ միշտ, միշտ չքնաղ, —
Միշտ ջահել եմ և ուրախ...
Հասկանալ ինձ, դնել նեղ
Շրջանակի մեջ անշունչ
Նշանակում է լինել
Իմ թշնամին արյունռուշտ —
Քանի եղել է, կա
Կյանքը հավետ թարմ ու նոր —
Ես խորհուրդ եմ — ու չկա
Ինձ համար բանտ ու աքսոր...
<1937>